


Մ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐ
ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

ՀԱՅՈՒՏՏՐԱՏ



КОНТРОЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

„Соответствует разрешенному и
печати экземпляру”

Директор Типографии

29 12 1950 г.

Лу

5-2008
2013 9

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

78(47-928)
4-295

54782

ՔՐԻՍՏՈ.ՓՈՐ
ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ.

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԵՐԱՇՑԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՇԱՅԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հ Ա Յ Ա Տ Հ Ա Ր Ա Տ

1950

548

25969-68



М. О. МУРАДЯН
ХРИСТАФОР КАРА-МУРЗА
жизнь и музыкально-общественная
деятельность
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1950



George A. Long

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Քրիստովոր Կարա-Մուրզան ՀԻ դարի վերջին քառորդի ամենշանավոր երաժշտական դեմքերից մեկն է հայ իրականության մեջ: Իր բազմակողմանի և բազմաբովանդակ երաժշտական-հասարակական գործունեությամբ նա անջնջելի հետք է թողել հայկական երաժշտության պատմության մեջ: Հանդես գալով իրեն կոմպոզիտոր, ժողովրդական երգեր համարող և մշակող, երգեցիկ խմբեր կազմակերպող և զեկավարող, ժանկավարժ, համերգային գործունեության կազմակերպող, երաժիշտքնադատ և զասախոս, նաև խաղացելի է անգնահատելի առաջադիմական դեր հայ ժողովրդի կյանքում և տվել է ժողովրդին ու հայրենիքին ծառայելու մի հիմնալի օրինակ:

Այս իմաստով Կարա-Մուրզայի կյանքը շափականց ուսանելի է մեր երիտասարդության համար:

Զենոնարկելով այս փոքրիկ աշխատությանը մենք նպատակ ենք գրել վերականգնել Կարա-Մուրզայի իրական պատկերը, հանրամատչելի ձեռվ պատմել նրա կյանքի ու գործունեության մասին, ցըել նրա շուրջն ըստեղծված թյուր կարծիքները, պարզաբանել նրա բաղաբական ու գեղագիտական հայցը նրա և ճիշտ կերպով արժեքավորել նրա կատարած գործը:

Թե որքանով է այդ հաջողվել մեզ, թող դատեն իբենք ընթերցողները: Մեր կողմից մենք միայն կցանկանացնենք ավելացնել, որ Կարա-Մուրզայի մասին այս հանդամատելի բրոցը հանդիսանում է ամենասեղմ շարադրանքը մեր կողմից գրված ավելի բնդարձակ այն աշխատության, որը պահպում է Հայկական ՍՍԾ Գիտությունների Ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության Սեկտորի ձեռագրական բաժնում և հույս ունենք, որ ժամանակի ընթացքում կդառնա մեր հասարակության սեփականությունը:

Այս աշխատության համար իրեն աղբյուր ծառայել են Հ. Կարապետյանի «Կարա-Մուրզա» գիրքը (1904 թ.), Պողոս և Պետրոս Կարա-Մուրզաների հիշողությունները (անտիպ), հայկական պարբերական մատուցք և Արևիստների պատմության և տեսության Սեկտորի երաժշտական արխիվում պահվող նյութերը:

1. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Կարա-Մուրզայի կյանքն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսը, որը նշանակալից մի ժամանակաշրջան է հայ ժողովրդի կյանքում: Խուս մեծ ժողովրդի օգնությամբ ազատագրվելով Օսմանական Թուրքիայի ու խանական Պարսկաստանի Ճիրաններից հայ ժողովրդի մի խոշոր հատվածը 1828 թվից անցավ Ռուսաստանի Հռվանավորության տակ և դրանով իսկ փրկվեց ֆիզիկական բնաշնչման ահավոր վտանգից: Թեև ցարական կառավարությունը Ռուսաստանում ապրող մյուս ժողովուրդների հետ միասին ճնշում ու շահագործում էր նաև հայ ժողովրդին, բայց և այնպես հայ ժողովուրդը ճնարավորություն ստացավ մոտիկից շփկելու ռուսական առաջավոր կուլտուրայի հետ և նրա ցարերար ազգեցությամբ գարգացնելու իր դարավոր կուլտուրան: Եթե ցարական կառավարությունը փակում էր հայկական դպրոցներն ու թերթերը, հետապնդում էր ազգային լեզուն ու կուլտուրան, արգելում էր հասարակական գործունեությունը, սերմանում էր ազգային թշնամանք ու կազմակերպում էր ազգամիջյան կոտորածներ, ապա հայ ժողովրդի ծոցից դոցից դուրս եկած առաջադեմ ինտելիգենցիան ձեռք-ձեռքի տված ուս և այլազգի ուսուցիչն դեմոկրատների հետ պայքարում էր միջազգային սեակցիայի պատվարի՝ ցարական կառավարության դեմ, ձգտելով նրա խորտակմանը: Որքան ուժեղանում էր ազգային ճնշումը, այնքան ավելի էր ծավալվում ազգային-ազատագրական շարժումը և հասարակական-քաղաքական գործունեությունը:

XIX դարի երկրորդ կեսում արվեստի և գրականության բոլոր բնագավառներում հանդես եկան այնպիսի խոշոր գեմքեր, ինչպիսիք էին Միքայել Նալբանդյանը, Ռափիայել Պատ-

կանյանը, Ռաֆֆին, Մուրացանը, Շիրվանզադեն և ուրիշները գրականության մեջ, Հ. Այվազովսկին, Գ. Բաշինչաղյանը, Վ. Սուբենյանը և ուրիշները կերպարվեստի բնագավառում, Տ. Չումաջյանը, Քր. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը և Կոմիտասը երաժշտության բնագավառում և բազմաթիվ այլ նշանավոր գործիչներ, որոնք նոր թափ հաղորդեցին հայ ժողովրդի արվեստի ու գրականության գարգացմանը: Այս շրջանում կազմակերպվում են բարեգործական ընկերություններ, գրքերի և թերթերի հրատարակություններ, զանազան կուտուրական ընկերություններ, հիմնվում են դրամատիկ թատրոններ, կազմակերպվում են ներկայացումներ, հանգեսներ ու համերգներ և այս բոլորի հետևանքով հայկական բազմադարյան կուտառան բարձրացվում է մի նոր աստիճանի:

Արվեստների մյուս ճյուղերին զուգընթաց զարգանում է նաև մեր երաժշտական կուլտուրան: Ճիշտ է, հայերը դեռևս չոնքին երաժշտական կրթական հաստատություններ, բայց նրանք հնարավորություն ունեին ձեռք բերել երաժշտական մասնագիտական կրթություն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ եվրոպական երկրների կուլտուրական խոշոր կենտրոններում և վերադառնալով իրենց հարազատ երկիրը, լծվել ազգային երաժշտական կուլտուրայի զարգացմանը: Այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Ղորղանյանները, Եկմալյանը, Սպենդիարյանը և ուրիշները, իրենց մասնագիտական-երաժշտական կրթությունն ստացել են ոսւսական կոնսերվատորիաներում և իրենց ստեղծագործության համար օգտագործել են ոսւսական առաջավոր կուլտուրայի ուսամբեռական տրադիցիաները: Տիգրան Զուխաջյանը, Կոմիտասը, Նիկ. Տիգրանյանը և ուրիշները, զինված առաջավոր երաժշտական կուլտուրայի լավագույն տեխնիկայով ու հարուստ փորձով, կարողացան օգտագործել այն՝ մեր երաժշտական կուլտուրայի զարգացման համար:

Ահա այս ժամանակաշրջանում է գործել նաև Կարա-Մուրզան, որը թեև բարձրագույն երաժշտական կրթություն չստացավ (որովհետև նրան խանգարեց նյութական անապա-

շուկ վիճակը), բայց և այնպես կրթվեց ու դաստիարակվեց սուսական միջավայրում, իր վրա կրեց ոսւսական կուլտուրայի բարերար ազգեցրությունը և իր ամբողջ կյանքն առանց մընացորդի նվիրեց հայ ժողովրդի երաժշտական կուլտուրայի զարգացման գործին:

2. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեակարի Կարա-Մուրզան ծնվել է 1853 թվի փետրվարի 18-ին* Ղրիմի Ղարասու-Բազար քաղաքում, որը հանդիսանում էր Ղրիմի հայկական գաղութի կուլտուրական կարեոր օջախներից մեկը:

Ղրիմի հայկական գաղութը հիմնվել էր շատ վաղուց, գետ Ոսկե Հորդայի ժամանակներից (XIII—XIV դարեր): Ղրիմում հիմնված էին բազմաթիվ հայ գյուղեր ու ամբողջ շրջաններ: Իսկ ծովափնյա քաղաքներում հայերը կազմում էին ազգաբնակության մի զգալի մասը: Օրինակ, Թեղողոսիա (Կաֆա) քաղաքում 70000 բնակչից 30000-ը հայեր էին:

XIV—XVII դարերում Ղրիմը դարձավ հայկական կուլտուրայի կարևորագույն օջախներից մեկը: Փատահական չէ, որ այդ դարերում եվրոպացի վաճառականները Ղրիմը կոչում էին նույնիսկ «Մովային Հայաստան» («Արմինիա մարիտիմա»): Մշտական կազ ունենալով Սև ծովի արևելյան ափերին և Հյուսիսային Կովկասում գետ ավելի վաղ գոյացած հայաբնակ վայրերի հետ, Ղրիմի հայ գաղութը պահպանում և զարգացնում էր հին Անիի կուլտուրան, սովորություններն ու բարբառը: XV դարից սկսած Ղրիմի հայերը սերտորեն կապվում են ոսւսական իշխանությունների

* Կարա-Մուրզայի առաջին կենսագիր Հ. Կարապետյանի գրքում (լույս է տեսել 1904 թվին Թիֆլիսում) թյուրփացարար տպագրվել է և այնուհետև տպագրվել այն ցուցմունքը, թե Կարա-Մուրզան ծնվել է 1854 թվին: Այնինչ իրականում նա ծնվել է 1853 թվին: Այդ մասին վկայությունը հայ Կարա-Մուրզայի եղբայրներն ու բարեկամները: Այդ հաստատվում է նաև Հ. Կարապետյանի գրքում բերված կենսագրական այլ կարգի ժամաներում:

Հետ, լայնորեն օգտվելով սուսական ընդարձակ շուկաներից՝ Այս կապը հետագայում էլ ավելի ամբապնդվեց, իսկ 1888 դարից սկսած, երբ Դրիմը միացվեց Ռուսաստանին, կապը դարձավ մշտական ու բարեկամական Հատկապես Դրիմում մղված ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերը մեծապես օգնում էին ռուսներին թե՛ կամավորներով և թե նյութական միջոցներով։ Մշտական կապ ունենալով Ռուսաստանի և այլ երկրների հետ, Դրիմի հայերը կարողանում էին յուրացնել առաջավոր ժողովուրդների կուլտուրայի լավագույն տարրերը և զարգացնել իրենց սեփական կուլտուրան։ Տնտեսական հարուստ բազման հնարավորություն էր տալիս ավելի լայնորեն դրադվել կուլտուրական գործունեությամբ։

Անցյալում Դրիմի հայկական գաղութը տվել է բազմաթիվ կուլտուրական գործիչներ, որոնցից առանձնապես աշքի ընկնողներն են XIX դարում՝ Հովհաննես Այվազովսկին, Ալեքսանդր Սպենդիարովը, Հովհաննես Նալբանդյանը և ուրիշները։ Այդ ականավոր գործիչների թվին է պատկանում նաև Քրիստոֆոր Կարա-Մուրզան։

Ծնվելով Դարասու-Բագարի աշքի ընկնող քաղաքացիներից մեկի՝ Մակար Քրիստոֆորովիչ Կարա-Մուրզայի (1821—1886) ընտանիքում, Քրիստոֆոր Կարա-Մուրզան մանուկ հասակից հնարավորություն է ունեցել մոտիկից շփմբել երաժշտության հետ, քանի որ նրանց բակում ապրել են Խանքեկյանների և Նալբանդյանների ընտանիքները, որոնց հետ նա կապված էր բարեկամական կապերով։ Այս ընտանիքները Դարասու-Բագար էին գաղթել «Թիմացեն» (այսինքն Սև ծովի թուրքական ափից) և լինելով երաժշտասեր ընտանիքներ, իւրենց ծոցից տվել են բազմաթիվ երաժիշտներ։ Նրանք իրենց հետ բերել էին տաճկահայ ժողովրդական երգերը, միշտ երգում ու նվագում էին, և մանուկ Քրիստոփորը հետաքրքրությամբ լսում ու ներծծում էր այն իր հոգու խորքում։

Կարա-Մուրզայի հայրը՝ Մակար Քրիստոփորովիչը ինքնուա, բայց բազմակողմանիորեն զարգացած ու բանիմաց



Նկ. 2. Կարա-Մուրզանների ընտանիքը։ Առաջին շաբքում աշխարհուրդը՝ ակնոցներ հագած Քրիստոփոր Կարա-Մուրզան։
(Նկ. Դարասու-Բագարում 1870 թ.)

մարդ էր: Նա զբաղվում էր մանր վաճառականությամբ և քաղաքում ուներ իր փոքրիկ հյուրանոցը: Իր առևտրական գործերով նա հաճախակի շրջել էր Ղրիմի քաղաքները, եղել էր Օդեսայում, Խարկովում և այլ քաղաքներում: Նա շատ էր հետաքրքրվում հնաբանությամբ (պալեոնտոլոգիա), հավաքում էր պատմական-ճարտարապետական նշանակություն ունեցող քարերի կողեկցիաներ և նրանց մասին գրում էր Մոսկվայի հնագիտական թանգարանին, որը նրան ընտրել էր իր թղթակից անգամը: Նա հասկանում և սիրում էր նաև գեղարվեստը՝ գրականությունը, թատրոնը և երաժշտությունը: Իրու սիրող դերասան նա մասնակցում էր կազմակերպված թատերական ներկայացումներին և առանձին ողերորդությամբ խաղում էր Արիստոկրատ թագավորի գերն իր հորեղբոր որդու՝ Մկրտիչ Կառա-Մուրզայի գրած «Արիստոկրատ» պատմական դրամայում: Նա առանձնապես հետաքրքրվում էր նաև երկրի քաղաքական կացության հարցերով, ստանում և կարգում էր Զերնիշնակու և Գոբրուլու գրքերի «Հայոց պատմություն» ամսաթիրթը և Գերցենի «Քոլոկոլ» թերթը: Այս փաստն ինքնըստինքյան ցուցադրական է և կարեւոր նշանակություն ունի Կարա-Մուրզաների դեմոկրատիկական համար:

Իրու հայր նա գործադրեց բոլոր հնարավոր միջոցները՝ զավակներին համապատասխան կրթություն տալու համար: Սակայն նրա նյութական հնարավորությունները սահմանափակ էին, իսկ ընտանիքը բազմանդամ, և նա հնարավորություն չունեցավ իր զավակներին ուղարկել Ռուսաստանի կենտրոնական քաղաքները, որպեսզի նրանք ստանալին բարձրագույն կրթություն: Նա ավելի շուտ աշխատում էր իր զավակներին տալ տնային կրթություն, այդ նպատակով հրավիրելով համապատասխան դասատուներ:

Քրիստափորի մայրը՝ Եղիսաբեթ Մկրտչի Պերսելյանը (1834—1914) ծագումով՝ Կոստանդնուպոլիսից էր, թեև ինքը Եղիսաբեթը ծնվել էր Ղրիմում: Նա ամուսնացել էր Մակաբ Կարա-Մուրզայի հետ 18 տարեկան հասակում (1852 թվին): Նրանց անդրանիկ զավակը Քրիստափորն էր:

Եղիասաբեթ Պերսելյանը բարեկիրթ, խստապահանջ և ժաքասեր մի կին էր, օժտված երաժշտական ընդունակություններով, նվագում էր կիթառի վրա ու երգում քնքուշ ձայնով: Մանուկ Քրիստափորը շափազանց շատ էր սիրում մոր երգած երգերը, հատկապես օրորոցի երգերը: Նույնիսկ այն մոմենտներին, երբ նա խաղով տարված վազվզում էր բակում իր ընկերների հետ, հենց որ լսում էր մոր ձայնը, շնչառապ վաղում և կանգնում էր դուն շեմքին, հափշտակված լսում մոր երգը և ընկերների մոտ էր վերադառնում միայն երգը լուսուց հետո:

Այդպես էր մանուկ Քրիստափորը: Իր առաջին և ուժեղ տպավորություններն ստանալով միշավալրից, մանուկ սըրտում սաղմնավորելով սերը դեպի երաժշտությունը, նա սկսում է հաճախել հայր Պտուրյանի հիմնած ծխական զարուցը: Պարզ է, որ նա այստեղ ավելի շատ պիտի առաջադիմեր երաժշտության, քան թե այլ առարկաների մեջ: Նկատելով նրա երաժշտական ընդունակությունները, հայրը վճռում է ուսման հետ զուգընթաց նրան տալ նաև երաժշտական կրթություն, որը նրա կարծիքով պետք էր գալու Քրիստափորի ապագա գործունեության համար: Իհարկե հայրը ոչ մի մտադրություն չուներ նրան երաժիշտ դարձնել, քանի որ երաժիշտ դառնալը, նրա կարծիքով, գրավիչ և ապագա խոստացող հեռանկար չէր: Նա մտածում էր իր որդուն հոգևորական դարձնել, իսկ վերջինիս համար նույնպես անհրաժեշտ էին երաժշտություն գիտենալ: Այս է պատճառը, որ հայրը որոշում է իր որդուն երաժշտություն սովորեցնել:

Ուժ տարեկան հասակից Քրիստափորն սկսում է դաշնամուրի նվագի դասեր վերցնել ըստ երեսութին Խանքելյաններից*, որոնք ապրում էին միմնույն բակում և ունեին դաշնամուր: Սիրով կաւելով գործին փորրիկ Քրիստափորը մեծ առաջադիմություն է ցուց տալիս: Երկու տարուց հետո, այ-

* Ասում ենք ըստ՝ երեսութին, որովհետև Քրիստափոր Կարա-Մուրզին այդ շրջանի դասառությունը վերաբերյալ ստուգ տեղեկություններ չեն պահպանվել:

սինքն 10 տարեկան հասակում նա արդեն կարողանում է վարժել կարդալ նոտաները (ձայնանիշերը), նվագել դաշնամուրի վրա և նույնիսկ ձայնագրել փոքրիկ երգեր:

1867 թվին, 14 տարեկան հասակում նա ավարտում է ծխական դպրոցը, որից հետո երկու տարի իր մի քանի ընկերների հետ միասին մասնավոր կարգով սովորում է հայր Պերսելյանի մոտ և այդպիսով եղբափակում է միշնակարգ կրթությունը: 16 տարեկան հասակում նրա աշքերը սաստիկ ցալում են և ծնողները ստիպված են լինում դիմել բժշկական անդամաճատության: Բարեբախտաբար անդամաճատությունն անցնում է հաջող, նրա աշքերը լավանում են, բայց նա ստիպված է լինում այդ հասակից մինչև իր կյանքի վերջը կրել ակնոցներ:

Հայրը նպատակ է զնում իր որդուն սովորեցնել ելքրոպական լեզուներ՝ ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն: Այդ նպատակով նա դասատումներ է հրավիրում՝ տանը պարապելու համար: Այս պարապմունքներին զուգընթաց Քրիստափորը շարունակում է պարապել երաժշտությամբ՝ դասեր վերցնելով երաժիշտ Ստեփան Մուրզայանից, որի մոտ նա պարապում է շուրջ երկու տարի: Նրան հաջողվում է ոչ միայն դաշնամուրի, այլև երաժշտության թեորիայի կանոնավոր դասեր առնել:

Ահա այս շրջանումն է, որ հայրը վճռում է իր ցանկությունն ի հատար ածել՝ Քրիստափորին ուղարկել Սուրբ Ղազարի Միթթարյանների մոտ (Վենետիկ) և հոգևորական դաշնել: Բայց որդին մտածել անդամ չէր ուզում այդ մասին, որովհետև նա ամբողջապես տարված էր իր պաշտելի արվեստով: Հայրը չի կարողանում նրան համոզել հոգևորական դառնալու հեռանկարի դրավլության մեջ և իրագործել իր ցանկությունը: Հոր և որդու միջև սկսված պայքարում որդին հաղթում է: Այն ժամանակ հայրը նոր որոշում է ընդունում՝ իր որդուն ուղարկել Օդեսայի հաշվապահական կուրսերը, որպեսզի նա կարողանար վարել իր հոր առևտրական հաշիվները: Քրիստափորը մեկնում է Օդեսա, թեև ինքը ոչ մի մտա-

դրություն շուներ հաշվապահ գառնալ: Ընդառաջելով հոր ցանկությանը նա սովորում է հաշվապահություն, բայց միաժամանակ շարունակում է և իր երաժշտական պարապմունքները: Այստեղ էլ հենց ավելի մոտիկից նա ծանոթանում է ոռուսական և ուկրաինական երաժշտությանը և հարստացնում իր գիտելիքները: Լսելով ոռուսական և ուկրաինական խմբական երգերը, նրա մեջ հատկապես ամրանում է բազմաձայն երգի գալափարը, որի մասին առաջին տպավորությունները նա ըստացել եր հայրենի քաղաքի եկեղեցական երգեցիկ խմբի կատարումներից: Այդ խումբը ղեկավարում էր Կարապետ Խանբեկյանը, որը միաժամանակ եկեղեցու երգեհոն նվազողն էր:

Օգեսայի հաշվապահական կուրսերն ավարտելուց հետո նա վերադառնում է Ղարասու-Բաղար և վարում է իր տռնուրական գործերի հաշիվները: Բայց գրավված լինելով երաժշտությամբ, նա հաշվապահական գործերում ցուցաբերում է անփութություն, որը պատճառ է դառնում նյութական վեասների: Ավանատեսները պատմում են, որ նա սովորաբար հաշվապահական գրքերի հետ միասին իր սեղանի դարակներում պահում էր նաև նոտաների տեսրերը: Հենց որ հայրը դուրս էր գնում, նա մի կողմ էր գնում հաշվապահական գրքերը, վերցնում էր իր երաժշտական տեսրերը և ըզբաղվում երաժշտությամբ: Մի օր էլ, երբ նա սովորականի նման մի կողմ էր թողել հաշվապահական գործերը և ողեգորված զբաղվում էր երաժշտական տեսրերով, աննկատելի կերպով մոտենում է հայրը, նրա ձեռքից խլում է երաժշտության տեսրերը և բարկացած ասում. «Քեզանից երբեք մարդ չի դուրս գա»:

Միթե Քրիստափորը կարող էր տարվել հաշվապահական չոր ու ցամաք գործերով և չզբաղվել իր պաշտած արվեստով: Դա անհնարին էր, որովհետեւ նա իր նրբազգաց հոգու ամրագլ ուժով ձգտում էր դեպի երաժշտությունը:

Այս միջադեպից հետո բարկացած հայրն ալես չի վրատահում իր հաշիվները Քրիստափորին, և վերջինս, ազատվելով հաշվապահութունից, ամբողջապես նվիրվում է արվեստին: Առում ենք՝ արվեստին, որովհետեւ նա զբաղվում էր ոչ միայն

երաժշտությամբ, այլև գրում էր բանաստեղծություններ և իբր ի սիրով գերասան մասնակցում էր թատերական ներկայացումներին: Ինքնուրույնաբար պարապելով նա Հիմնավորապես ուսումնասիրում է երաժշտության տեսությունը, ձայնագրում է լսած երգերը, հորինում է նոր երգեր, սկսում է նվազել ֆիետայի վրա, որպես գաշնակահար՝ մասնակցում է երեկությներին, իսկ քիչ ալելի ուշ ինքն է դառնում այդ երաժշտական երեկությների կազմակերպողը: Իր շորջը համախմբելով հասակակից երիտասարդներին նա կազմակերպում է երաժշտական անսամբլներ ու երգեցիկ խմբեր և համերգներ է տալիս իրենց հյուրանոցի մեծ դահլիճում: Նրա նվիրվածությունը սիրած արվեստին հասնում է ինքնամուացության աստիճանի: Այս շրջանից սկսած նրա մեջ բնավորության ամուր գիծ է դառնում անսահման նվիրվածությունը սիրած գործին: Սկսածն առաջ էր տանում մեծ ովկորությամբ, ամբողջապես կլանված այդ գործով և ոչ միայն ինքն էր ովկորություն, այլև ովկորում էր ուրիշներին:

Այս տեսակետից շափազանց հատկանշական են հետևյալ փաստերը: Մի ժամանակ, երբ նա 17—18 տարեկան էր, գրավվել էր եկեղեցու զանգերով: Տոն և կիրակի օրերը նա վաղ առավոտյան գալիս էր գանգակատուն և եկեղեցու չորս զանգը տարրեր կոմբինացիաներով հնչեցնում այնքան ներդաշնակ ու գեղեցիկ, որ համարակարգիները նույնիսկ շատեսներով նրան, իսկույն կոահում էին, որ զանգահարը Կաբա-Մուրզան է: Նա այնքան վարպետացել էր զանգահարության մեջ, որ կարծեք թի զանգերը վերածել էր երաժշտական գործիքի, իսկ ինքը դարձել էր վիրտուոզ-զանգահար:

Մի այլ անգամ, երբ պատրաստում են բեմադրության «Արշակ Բ.» պատմական դրաման, Քրիստափորը վերցնում է վլխավոր գերը (Արշակ Բ.): Վարժվելու համար մի օր գիրքը ձեռքին նա գնում է քաղաքից դուրս և մի բլրի վրա սկսում է փորձել իր գերը: Տեսնելով այս մենակ մարդուն բլրի վրա ինքն իր հետ խսուելիս, նրա շորջն են խմբվում և հեռվից դիտում նրան բլրից ոչ հեռու իրենց վրաններում ապրող գըն-



Հովհանքը: Եթե Համբաւմ է այն մոմենտը, որ Արշակ Բ-ն խեղագարվում է, նա այնքան տարված ու ձշմարտացի է պատկերում խելագար մարդուն, որ գնչուները սարսափահար փախչում են, կարծելով, թե նա կամ իսկական խելագար է և կամ սատանաներով բռնված:

Այսպես էր նա: Գործը կիսատ թողնել և կամ թե կիսատպուատ կերպով կատարել չպիտիր: Պատանի հասակում գրուերված այս անսահման նվիրվածությունը և հետևողականությունը նրա մեջ մնացին մինչև իր կյանքի վերջը, որովհետեւ դա բնավորության գիծ էր:

1874 թվին լրանում է նրա 21 տարին և նա կանչվում է զինվորակրության: Սակայն աչքերի հիվանդության և տուաշին կարգի արտառություն ունենալու շնորհիվ նա ազատվում է զինվորական ծառայությունից:

Այս դեպքից հետո նա ավելի վճռականորեն է նվիրվում երաժշտությանը: Զգալով իր երաժշտական պատրաստականության անբավարարությունը նա նպատակ է դնում գնալ Պետերբուրգ և կոնսերվատորիայում շարունակել իր երաժշտական կրթությունը: Սակայն նցութական հնարավորությունների բացակայությունը և աչքերի հիվանդությունը թույլ չեն տալիս իրագործել այդ բուն ցանկությունը և նա մինչև իր կյանքի վերջն էլ հնարավորություն շունեցավ հասնել այդ նպատակին: Նա ստիպված է լինում նորից դիմել ինքնազարդացմանը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները նա կարողանում է մասնավոր դասաւուների, մոտ շարունակել դաշնամուրի կուրսը, պարապել սոլֆեջիո, երաժշտության տեսությունը ու հարմոնիա՝ խորացնելով իր գիտելիքները: Իր ուսման ծախսերը հոգալու և բազմանդամ ընտանիքին օգնելու նպատակով նա տալիս է դաշնամուրի մասնավոր դասերը:

Կարա-Մուրզան աշխատում էր օր ու գիշեր: Նրա զբաղմունքի առարկաները բազմաթիվ էին: Նա թե՛ սովորում էր և թե սովորեցնում, զբաղվում էր հայկական ազգային ու ժողովրդական երգերի գրանցման գործով, ունակություններ էր ձեռք բերում երգեցիկ խմբերի կազմակերպման և ղեկավար-

ման ուղղությամբ և այլն: Նրա մտքից ոչ մի բողք չէր հեռանում ուսման պահանջ լրացնելու և բարձրագույն կրթության ձեռք բերելու հարցը: Նա մշտապես միջոցներ էր որոնում այդ թերության վերացման համար: Համոզվելով այն բանով, որ ինքը հնարավորություն շունի բարձրագույն երաժշտական կրթություն ստանալ (որովհետև դա կապված էր նյութական խոշոր ծախսերի հետ), նա մտադրվում է սովորել թեոդոսիայի ուսուցչական ինստիտուտում և այսպիսով գոնե ստանալ ընդհանուր բարձրագույն կրթություն: 1881 թվին նա եռանդում նախապատրաստական աշխատանք է կատարում պարաստվելով ինստիտուտի ընդունելության քննություններին: Նրա այս շրջանի լարված աշխատանքի մասին վկացում է 1881 թվի ապրիլի 3-ին իր եղբորը գրած նամակը, որի մեջ կարդում ենք.


«Եմին օր 9 ժամ գնում եմ աշխատանքի, 3 ժամ ածում եմ (դաշնամուրի նվազի մասին է խոսքը.— Մ. Մ.) և կես գիշերից հետո գալիս եմ տուն, պատրաստում գասերս մուշորս ժամ: Դուքս է զալիս օրական 16 ժամ զբաղմունք: Չնայելով դրան ևս ինձ գգում եմ առաջվանից առողջ, առարկաներն ինձ հաջողվում են, ևս այժմ լավ գտնեմ երկրաշափությունը և շարունակում եմ նույնպես թվարանությունը: Աշխարհաբությունից և ուսաց լեզվից պատրաստ եմ. պետք է պատմություն և սլավոնական լեզու, բայց դաքան էլ ոչինչ, հիանալի կպատրաստեմ: Ֆեոդոսիայում թե՛ ժրցական քննություններին, կթոքեմ Պետերբուրգ»:

Այսքան գարված աշխատանքից հետո, ուսման անհագ ծարակի իր սրտում նա մեկնում է Թեոդոսիա: Այստեղ նա բոլոր սուարկաներից հաջող քննություն է տալիս, բացի հինգամունքներից, որից թույլ ստանալու պատճառով նա 14 իր նոմանների հետ միասին շի բնոդունվում ուսուցչական ինստիտուտը: Նա վերադառնում է հայրենի քաղաքը և շարունակում իր պարապմունքները, հույս ունենալով հաջորդ տարում իրականացնել իր մտադրությունը:

Հայրենիք քաղաքում նա նոր եռանդով նվիրվում է երաժշտական-հասարակական աշխատանքին, նվազում է դաշնամուրի և ֆլեյտայի վրա, տալիս է մասնավոր դասեր, զբում է նոր երգեր, պարերգեր և քայլերգեր, կազմում է սիրողների թատերախումբ և պատրաստվում ներկայացումների: Ընդ որում այդ ներկայացումներին նա մասնակից է դարձնում նաև ամոթիսած հայ օրիորդներին, իսկ ներկայացումներից ստացված գումարը հատկացնում էր բարեկործական նպատակների, հատկապես քաղաքային հիմնդանոցի օպուին:

Առանձնապես կարեւոր է այն, որ Կարա-Մուրզան այս ներկայացումները թարմացնում էր երաժշտական ընկերակացության ներմուծմամբ: Առաջին անգամ այս ներկայացումների ընթացքում նա հնչեցնում է հայկական քառածայն երգը: Այս հանգամաները խոշոր նշանաւորթյուն ունեցավ նրա հատակա գործունեության համար:

Այսպես նա հետզհետե ծավալում է իր երաժշտական-հասարակական գործունեությունը: Բայց որքան նա խորանում է այդ գործում, որքան ավելի սիրով է կալչում գործին, այնքան ավելի նեղ ու անճուկ է թվում նրան հայրենի քաղաքի մինուորտը, այնքան ավելի մեծ է դառնում լայն հասարակական գործունեության ծարակը: Նրան այլիս չի բավարարում այն, ինչին նա հասավ իր հայրենի քաղաքում: Նրա մեջ հետզհետե զորեղանում է ձգուումը դուրս գալ հայրենի քաղաքի մեջ սահմաններից, ծավալել երաժշտական-հասարակական գործունեություն հայաշատ՝ կհնարոններում, տարածել քառածայն երգը հայության մեջ, նորաստել իր ազգի կուլտուրական զարգացմանը, իր բոլոր ուժերն իսպաս զնել հարադարձ ժողովրդի դաստիարակության գործին: Նրա գլխում հետզհետե սաղմնավորվում են հատակա գործունեության ծրագրերը, որոնց իրականացումն անհնարին էր Դարասու-Բարձրի սահմաններում: Նրա մեջ հասունանում է զետի Կոլլկաս, հատկապես թիֆլիս մեկնելու դադափարը: Եհարկե նրա համար՝ շավրադանց դժվար էր անշատվել իր



Նկ. 3. Կարա-Մուրզան երիտասարդ հասակում
(նկարված է 1880—81 թվերին Դարասու-Բարձրում):

սիրասում ծնողներից, իր եղբայրներից ու քույրերից, իր ընկերներից ու բարեկամներից, իր մանկության ու պատանեկության օրրանից, որի հետ կապված էին այնքան քաղցր հիշողություններ: Սակայն Հարազատ ժողովրդին օգտակար լինելու գաղափարն ավելի ուժեղ էր նրա մեջ և իրեն ենթարկեց նրա սիրու ու Համակության բոլոր զգացմունքները: Եվ նա որոշեց անպայման մեկնել Կովկաս:

Սակայն մեկնելուց առաջ նրա մեջ ծագում էն տաքաշությանքներ այն մասին, թե իրեն կհաջողվի՝ արգորք կովկասահայերի մեջ ծագալիլ իր գործունեությունը, ի՞նչ ընթացք և ի՞նչ վախճան կունենա նրա սկսած գործը: Այս տարակուանքներն իրենց ցայտոն արտահայտությունը գործ էն նրա մի բանաստեղծության մեջ, որտեղ ավարտվում է ՀՀ-ահյալ քառյակով.

«Ինձ ի՞նչ է սպասում, ո՞րտեղ կանգ կառնի
նավս տարագիր. — զո՞՞ կերթա ծովին,
թէ՞ իմ Հիշատակս էլ կզա ժամանակ,
Որ շատ սրտերում կտա արձագանք...»:

Զնայած այս տարակուանքներին Կարա-Մուրզան իր առարտիր նավը Համարձակորեն նկտում է կյանքի ալիքների մեջ...

1882 թվի աշնան սկզբին (սկստեմբերի 18-ին) Կարա-Մուրզաների տանը հավաքվում է բարեկամների ու Հարազատների մի սամբուղ բազմություն, թվով մոտ 50—60 հոգին եկել էին Կովկաս մեկնող Քրիստոնեակության հրաժեշտ տալու: Ներկա գտնվողներից շատերը, Հատկապիս մայրն ու քույրը բաց էին լինում: Բոլորն էլ հուզված էին: Հուզված էր և հայրը: Չէ՞ որ տնից հեռանում էր ավագ որդին, բոլորի կողմից սիրված Քրիստոնեակությունը, բազմանդամ ընտանիքին նյութական օժանդակություն ցուց տվողը: Հուզված էր և ինքը Քրիստոնեակությունը: Եթե մոտեցավ անջատման ժամը, նա Համբուրվեց իր ծնողների հետ, հրաժեշտ տվեց ներկա

քամնվողներին, նստեց դաշնամուրի մոտ և սկսեց նվազել
Հոր կողմից առանձնապես սիրված քայլերգերից մեկը՝
1877—1878 թվերի սուս կամավորների քայլերը։ Մանթ
քայլերգի հնչումներն ավելի սաստկացրին հուզմունքը։ Նա
արտասուբն աշքերին կրկին անգամ համբուրվեց իր ծնողնե-
րի հետ, նստեց կրտսը և մեկնեց Թեոդոսիա, որտեղից նա-
վով պիտի ուղևորվեր դեպի Կովկաս։

ՅԱՐԱ-ՄՈՒԲԶԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԻԸ

Կովկասի ճանապարհին նա աշխատում է ուսումնասի-
րել շրջապատի մարդկանց, զրովցի բռնվել նրանց հետ և ի-
մանալ նրանց կարծիքն իր նպատակի մասին։ Ամենուրիք
նա համեղապում է բացասարկան վերաբերմունքի։ Իսկ մի
երիտասարդ ձայնագրագետ քահանա իմանալով այն մասին,
որ Կարա-Մուրզան նպատակ է զրել քառաձայն երգը տարա-
ծել ոչ միայն ժողովրդի մեջ, այլև եկեղեցիներում, — շատ
խստությամբ է իր կարծիքը հայտնում՝ քառաձայնը համա-
րելով անկարելի և կրոնական տեսակետից սրբազդություն։
Նրա կարծիքով Կարա-Մուրզալի նպատակը հալածման առ-
տիքանի ստորանալու և անուշադիր է մնալու։

Այսպիսի բացասարկան վերաբերմունքի հանդիպելով,
Կարա-Մուրզան այնուամենայնիվ չի հույսատվում և իրեն
միխթարում է նրանով, որ դրանք պատահական կարծիքներ
են։ Իր նամակներից մեկում նա գրում է.

«Մի քանի բուրժուա զ սա ս արխտուկատներ, մի
քանի ինտելիգենց անձինք, արդեն բոլորովին հեռացած ու-
սանովական կանքից, կարող են շիմանալ և դառնել ինչպես
վաճառականներ»։

Այնուամենայնիվ այս բացասարկան կարծիքները պատ-
ճառ են դառնում տիսուր խորհրդածությունների և նա հայց
է տալիս. «Մի թե հայերը հալածելու հն քառաձայնը, մի՞թե
չպետք է ճանաչին, որ նա գեղեցիկ է»։ Եվ հետո ամելաց-

նում է. «Չեի կարծում, որ հայկական երգերի քառաձայն
տարածելու գործի մասին ընդհանուրի կարծիքն այս տեսակ
լինի և կամ հասարակությունն էլ տրամադրի լինի այս նոր
գործին այդպիս սկիզբանաբար վերաբերվել... ես հույս
դրած էի կոմպետենտ անձնավորությունների վրա...»։

Եվ նա չսփառալից ։ Իսկապես կոմպետենտ մարդիկ, ո-
րոնց նա հանդիպեց թիգիլսում, բոլորովին այլ վերաբեր-
մունք ցուցաբերեցին նրա ծրագրերի նկատմամբ։ Դրանք
հայ առաջադեմ ինտելիգենցիայի ներկայացուցիչներն են,
որոնք նույնպես լծված էին մեր ժողովրդի կուլտուրայի
զարգացման գործին։ Բնական է, որ նրանք համարանքով
պիտի վերաբերվեին Կարա-Մուրզայի՝ այդ կրակոտ երիտա-
սարդի ծրագրերի նկատմամբ։

Կարա-Մուրզան թիգիլս հասավ 1882 թվի հունիսիների
5-ին և նույն օրն այցելեց «Մշակութիւնի խմբագիր Գրիգոր
Արծունուն, որը ծանոթանալով նրա ծրագրի հետ այնպի-
սի ոգևորությամբ է խոսում այդ ծրագրի իրագործման հնա-
րավորության մասին, որ Կարա-Մուրզայի հուանդը կրկնա-
պատկիրում է։ Այս այցելության մասին նա գրում է. «Ես բո-
լորովին փոխվեցա, իմ իդեան ավելի ևս հաստատվեց իմ
մեջ և հույսերս մհծացան»։

Կարա-Մուրզան հանդիպումներ է ունենում մի շաբք
այլ նշանակոր անձանց հետ, արժանանում է նրանց հա-
մակրական վերաբերմունքին, թիրթերում («Մշակու-
թայատամի») հայտարարություններ են տպագրվում նրա
գաղու նպատակների մասին և այն։

Ջրուցների ընթացքում նա խմբագրություններին հա-
ղորդում է իր մոտակուտ ծրագիրը, որի գիմակոր կետերն
են։

1) Կազմակերպել երգեցիկ խմբեր, սովորեցնել երգեր և
տալ համերգներ։

2) Մշակել երգեր և տպագրել ժամանակակից ընդհան-
րացած և կամ հայկական նոտանիշներով ու հայերն խոս-
քերով։

3) Եկեղեցական ժամերգությունը, պատարազը և բոյաք արարողությունների ընթացքում կատարված երգեցողությունը քառաձայնել և երգել քառաձայն խմբով:

Աչա այս ծրագրի շուրջը նա հնարավոր բոլոր միջոցներով սկսում է պրոպագանդա մղել: Թե հրապարակայնորեն (ժամովկի միջոցով) և թե անձամբ (ժամանակոր զրուցների միջոցով) նա ամենուրեք հրավիր է կարգում երգ սիրուններին գալ և ժամանակցել խմբական երգեցողությանը: Օրեցօր նա սպասում է, որ արձագանքելով իր հրավիրին կրան մի քանի երիտասարդներ և հայտնին իրենց ցանկությունը՝ երգել քառաձայն խմբով, իսկ նրանց միջոցով նա հնարավորություն կունենա հրավիրել ծանոթներին ու բարեկամներին և այսպիսով հիմք դնել իր փայտայած ծրագրի իրագործմանը:

Սակայն նրա սպասումները չեն արդարանուած: Նրա մոտ ոչ ոք չի գալիս և երգեցիկ խմբի կազմակերպման գործը հետաձգվում է: Սալրուստի միջոցներ և նյութական հնարավորություններ ձեռք բերելու նպատակով նա ստիպված է լինում ցերեկները մասնավոր դասեր տալ, իսկ գիշերները դեկավարել Արծրունու թատրոնում գոյություն ունեցող փոքրիկ նվագախոսմբը, որը նվագում էր հայկական և վրացական ներկայացումների ընդմիջումների ժամանակ:

Օգոստի առիթից նա այդ նվագախոսմբի համար ձայնագում և գործիքավորում է հայկական մի քանի երգեր, որոնց կատարումը լավ տպագորություն է գործում ժողովրդի վրա, իսկ ինքն էլ չափազանց ոգեորդում է:

Այս հաջողությունից քաջալերված նա գրում է նոր հեղինակություններ, հավաքում ու մշակում է մոտ 40 ժողովրդական ու ազգային երգ, քառաձայնում է պատարագի ամբողջ արարությունը, տպագրում է մի «Պատուրի հայկական երգերից դաշնամուրի համար», գրում է մի քանի նոր երգեր դաշնամուրի նվագակցությամբ և և. Գալֆայանի «Արշակ Բ.» ողբերգության համար գրում է երաժշտական ՀՅ կտոր (խմբերից, գործիքային համարներ և մեներգեր):

Թիֆլիսի հայ հասարակությունը մեծ համակրանքով է

վերաբերվում Կարա-Մուրզայի այս գործին, բայց քառաձայն, երգեցիկ խմբում երգելու համար առաջվա նման ոչ ոք չի գալիս նրա մոտ, թեև բավականին ժամանակ էր անցել հայտարարության օրից: Նախկին ովկորությունը կարծեք թի շբանում է և մարդիկ սկսում են թիրահավատությամբ վերաբերվել գործի հաջողությանը: Այդ ժաման վկայում են Կարա-Մուրզայի հետեւալ խոսքերը. «Ի՞նձ հետ խոսողներն առանց քաջալեր ասում էին, որ ոչ քառաձայն երգեցողությունը և ոչ էլ համերդները կարող են հաջողություն ունենալ, իբոք աշխատանք է և այնք:

Չնայած դրան նա դարձյալ չի հուսահատվում, նամանակում, որ մի շաբթ ականավոր գործիչներ, այդ թվում Ռաֆֆին, Գամառ-Քաթիկան և թիրթերի խմբագիրներն ասացվա նման քաջալերում են նրան, գովարանում են գործը, գրում և խոսում են այդ ժաման: Նա մեծ համբերությամբ շարունակում է զբաղվել իր նվագախոսմբի շուրջը պրոպագանդա մղելով մինչև 1885 թվի ծննդյան տաները, երբ նրան հաջողվում է կազմակերպի իր առաջին քառաձայն խոսքը Կովկասում: Այս խմբի կազմակերպման մասին մենք ունենք Կարա-Մուրզայի սեփական վկայությունը, որի մեջ ասված է:

«Կարգալով իմ ամենից հայտարարությունները լրագրելում, ինձ մոտ եկան Քամոյան եկեղեցու երգիշ Միքայել Շահամյանը իր եկեղեցական խմբի 8 անդամների հետ կերասան Վրուրն ու Միքայանցը 5—6 ընկերների հետք:

Ընդամենը հավաքվում են 15 հոգի, որոնք և կազմում են նրա խմբի կորիգը: Զայները փորձելուց հետո Կարա-Մուրզան նրանց բաժանում է չորս ձայնի և սկսում է փորձերը: Եռանուուն և ովկորված պարագմունքներից հետո, 1885 թվի մարտի 15-ին, Արծրունու թատրոնում տեղի է ունենում նորանց առաջին համերգը, որը և հայկական քառաձայն երգի առաջին համերգն էր:

Այս համերգի ծրագիրը գերազանցապես կազմված է ու ազգային-հայրենասիրական երգերից, իսկ վերջին բաժինը՝

երգիծական-պարողիական տիպի երգերից։ Հատկանշական է այս, որ այս ծրագրում տիղ չէր դուել և ոչ մի ժողովրդական երգ։ Ինչո՞ւ, չէ՞ որ Կարա-Մուրզան այս շրջանում արդին հավաքել և քառաձայնել էր բավականին մեծ քանակությամբ ժողովրդական երգեր։ Գուցե նա առանձին նշանակություն չէ՝ որ տալիս այդ երգերին։ Ու, այդ չէ պատճառը։ Կարա-Մուրզան շատ լավ հասկանում էր այդ երգերի դերն ու նշանակությունը ժողովրդի դաստիարակության գործում և հետագայում նա այդ պատցուցեց իր երաժշտական-հասարակական գործունեության ամբողջ ընթացքում։ Ուրեմն ի՞նչն էր պատճառը։ Դրա պատճառն այն էր, որ մոմենտը պահանջում էր առաջնություն տալ աղքային-հայրենասիրական տիպի երգերին։ Մեզ համար միանդաման հասկանացի կդառնա, եթե նկատի ունենանք այն, որ դա տեղի ունեցավ 1877—1878 թվերի ուսու-թուրքական պատերազմից հետո, հայ-թուրքական ընդհարումների և «Հայոց հարցի» արձարձման ու բարձրացման, հայկական աղքային շարժման-ժամկանակաշրջանում։

«Ճնշված աղքի ամեն կողմից նեղված բուրժուազիան, — պում է ընկեր Ստալինը, — բնականաբար շարժվել է սկսում։ Նա «Հայրենի ներքնախավերին» է դիմում և սկսում է աղաղակել «Հայրենիք» մասին, իր սեփական գործը հրամցնելով համաժողովրդական գործի տիղ։ Նա իր համար բանակ է համարագրում «Հայրենակիցներից» հանուն... «Հայրենիք» շահերի։ Եվ «ներքնախավերը» միշտ չէ, որ անտարբեր են մնում դեպի կոչերը, հավաքելով նրա դիրքի շուրջը. վերկից եկող ոնդրեսիաները նրանց էլ են դիմում, անբավականություն առաջ բերելով նրանց մեջ։

Այդպես է սկսվում աղքային շարժումը»*։

Ճիշտ այդպես էլ սկսվեց ու ծավալվեց հայկական աղքային շարժումը և հայկական բուրժուազիային սկսվում հաշոգվեց իր դրոշի տակ միավորել նաև աշխատավորական խաչերին՝ նրանց շահապրուելով իր առաջադրած «Հայրենասի-

րական» լոգունիներով։ Հայ հասարակովյանն ապրում էր այդ լոգունիներով, և Կարա-Մուրզան ստիպված էր տուրք տալ տիրապետող արամադրություններին։ Ահա թե ինչու այս համերգի ծրագրում զիսավոր տեղը հատկացված էր Գամառ-Քաթիպային, Պեշիկթաշլյանին և Ռաֆուն, որոնք իրենց մարտական ստեղծագործությունների մեջ հենց այդ խնդիրներն էին առաջ քաշում։

Որ մոմենտի թելագրանքն է պատճառը երգերի նման ընտրության, երևում է նաև նրանից, որ Կարա-Մուրզան հետագա տարիների ընթացքում տված համերգների ծրագրերում արդին Հրաժարվում է այդ տիպի երգերի մեծ մասից և զիսավոր տեղը հատկացնում է ժողովրդական երգներին։

Մեր ասածները հաստատվում են նաև Թիֆլիսի հասարակության ցուցադրած վերաբերմունքով զեպի այս համերգը։ Կարա-Մուրզայի առաջին կենսագիր Հ. Կարապետյանի գրքում կարդում ենք համարական պատճեն։

«Վարսեպույրը բարձրանում է կամաց-կամաց և հասարակության առաջ պատկերանում է բեմի վրա մի փոքրիկ խումբ պատմական հագուստաներով, տպավորությունը մեծ է լինում։ Հասարակությունը հավանում է նրա երգերը և մի քանիսը կրկնել է տալիս։ Հանդիսականներից շատերն շտապում են բեմի ետևը իրենց առանձին շնորհակալություններուն Կարա-Մուրզային Մինչև անգամ այցելուներից մեկը՝ գնդապետ Մելիք Աղարյանը խմբին ընծայում է 25 ոռոգի։ Ներկայացնումը վերջանում է։ Հանդիսականները բացականչություններով թնդացնում են թատրոնը։ Դուրս Կարա-Մուրզային դիմավորում է երիտասարդների մի խումբ և օվացիաններով հանապարհ։ է զնում։ Հասարակությունը ցրվելով տները, շատերը ճանապարհին արդեն փորձում են երգել այն երգերը, որոնք ավելի գուրելի են եկել և ավելի հեշտ են։ Այդ օքը Կարա-Մուրզայի կւանքի առմենալրախ օրերից մեկն էր։

Եթե այս նկարագրությանը ավելացնենք նաև այն, որ

* ի. վ. Ստալին.— Երկեր, Հատոր 2-րդ, էջ 357.

Հարագիրեցում, առաջին հերթին «Մշակ»-ում տպագրվում էն գովաստանական հոդվածներ, որոնց մեջ կը էր արվում հայ հոսարակությամբ ցուցաբերել ուշադիր վերաբերմունք դեմքի արդ նոր և գեղեցիկ նախաձեռնությունը, քաջալերել նախաձեռնողին և նպաստել գործի հետագա զարգացմանը, — ապա մեզ համար պատկերը միանդաման պարզ կինոն:

Ինչպէս Կարա-Մուրզայի այս անդրանիկի համերգը նման ընդունելով ու գտավ: Արդյո՞ք քառումայն երգի սովորությունը միանում է նվաճեց հասարակության համակրանքը և պատճառ դարձավ այդպիսի արտակրարության:

Դժբախտաբար ոչ: Ընդհակառակը: Քտոռաձայն երգեց ովզությունից առաջին տպակլորությունը լինում է տարօրինակ և անորոշ: Խորնիքը շատերին նույնիսկ թիվում է, թե ձայները խանճապառում են միմյանց և ստացվում է մի տեսակ խառնիքապանց բան: Այսպես էր շատերի կարծիքը, որովհետեւ հայ ոճնկնդիրները սովոր էին միաձայն երգին և քառաձայնը դեռևս տարօրինակ էր թիվում:

Համերգի հաջողության պատճառը պիտք է փնտրել ընտըրված երգերի ազգային-հայրենասիրական բովանդակության, հրատապության, և երգեցիկ խմբի հայկական ազգային արագույթ հանդես գալու մեջ։ Ի՞արկե չպետք է ժիմուել Կարս-Մուրդայի կատարած խոշոր աշխատանքը ծրագրի համարների գեղարվեստական մշակման ու կատարման գործում։ Այսուամենայնիվ սրոշողը համերգի քաղաքական կողմին էր, որը լիովին համարատասխանում էր հայերի աղքային-ազգային պատճառական շարժման մոմենտի կոնկրետ պահանջներին։

Այսպիսով քաղաքական մոմենտը թելադրել էր ծրագրի կողմում ազգային հայրենասիրական երթերից, իսկ այս հանգամանքն իր հերթին պայամնավորել էր համերգի հաջողականությունը:

Այս հաջողությունից թևավորված Կարա-Մուրզան նոր ուժերով լրացնում է իր խումբը և նույն թիվի ապրիլի 1-ին ժիշտության թատրոնում, 20 հոգուց բաղկացած խմբով տալիս

Ե իր երկրարդ համերգը։ Սպասածին հակառակ հանդիսականների թիվն առելի պակաս էր, բայց չնայած դրան Կայքա-Մուրզան անքնիցելի եռանդով շարունակում է աշխատանքը։ Նա գրում է «Հրդեհ», «Գաղղթականներ» և «Հովկունիք» ինքնուրույն ստեղծագործությունները քառաձայն խմբի համար և նկարիչ Գևորգ Բաշինցալյանի նկարած գեկորացիաներն օգտագործելով տալիս է իր երրորդ համերգը նույն թիվ հուլիսի 15-ին, Այս համերգի կազմակերպումը կապահած էր մեծ դժվարությունների հետ, որովհետև Կարս-Մուրզայի մասին զանազան ձերյուրանքներ էին տարածում Հայարակության մեջ, արգելում էին դպրոցական երեխաներին երգել նրա խմբում և այլն, բայց Կարս-Մուրզան հաղթահարում է այդ արգելքները և հաջողաբթյամբ տալիս իր համերգը։

Թիֆլիսում խմբական երգի երեք համերգ տալուց հետո
նույն 1885 թվի ազնանն ուղևորվում է Բաքու, այնտեղ հա-
մերգներ տալու նպատակով:

4. ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՎԱՐԻՄ

XIX դարի վերջին քառորդում Բաքուն դարձավ խոշոր արդյունաբերական և առևտուրական կենտրոն։ Ուժեղ թափով գարգացավ նավթարդյունաբերությունը, որի մի գգալի մասը կենտրոնացված էր Հայ բուժքութափայի ձեռքում։ Անգըրկովկասի զանազան ծայրերից այստեղ էին ձգում բոլոր նրանք, ովքեր տարված էին Հարստանալու տեհնչով։ Կառիութափմի զարգացման հետևանքով քայլքայլող գյուղերից այստեղ էին հավաքվուած մեծ թվով գյուղացիներ, որոնք դառնուած էին ընշագուրկ պրոլետարներ և էժան բանվորական ուժ մատակարարուամ նավթարդյունաբերությանը։

Բարբուն դառնում էր ինտերնացիոնալ բնույթի քաջարք:
Այստեղ կադրելի էր հանդիպել ամեն ազգի ու ցեղի պատկա-
նող մարդկանց: Նրանցից յուրաքանչյուրն իր հետ բերում էր
իր սովորությունները, իր կուտուրան ու մտայնությունը:

Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր Բաքվի նոր պայմաններում կազմակերպել ինքնուրուցն կուլտուրական կյանքը, որը գլխավորվում էր տվյալ ազգի ինտելիգենցիայի կողմից:

Հայերը, կազմելով Բաքվի ազգաբնակության մի զգալի մասը, պարզ է, որ պետք է ունենային իրենց եռուն կուլտուրական կյանքը, որը գլխավորվում էր Բաքվի մարդության ընկերության կողմից: Կազմակերպվում էին հայկական ներկայացումներ, երեկութներ ու հանդեսներ, հրատարակում էին թիրթեր, ամսագրեր ու գրքեր, աշխատում էին հաղորդակից դասնալ ինչպես ուսուական, նույնպես և արևմտահվողական կուլտուրային:

Այս պայմաններում միանգումայն հասկանալի է, թե ինչու Կարա-Մուրզան հանդիպեց մեծ համակրանքի ինչպես մարդասիրական ընկերության, այնպես էլ ինտելիգենցիայի կողմից: Մարդասիրական ընկերությունը նրա տրամադրության տակ է զնում իրեն պատկանող ընդարձակ դաշլիճն իր բոլոր հարմարություններով, իսկ ինտելիգենցիան տաճան կերպ օժանդակում է նրան գործի հաջող կազմակերպման համար: Եվ Կարա-Մուրզան անցնում է աշխատանքի, միաժամանակ զբաղվելով թի քառածայն երգեցիկ խմբի կազմակերպման համար և թի դաշնամուրի նվագի մասնակուր դասեր տալու գործով:

Իր գալու նպատակի մասին հայտարարություն տալուց հետո նրան հաջողվում է 40 հոգուց բաղկացած մի խումբ կազմակերպել և 1885 թվի նոյեմբերի 23-ին ժողովարանի դաշլիճում տալ իր անդրանիկ համերգը Բաքվում: Որպես միներգիչներ համերգին մասնակցում են Թիֆլիսից հրամիւմած Շահլամբանի ու Վարդիկյանը: Համերգն անցնում է մեծ հաջողությամբ, հասարակությունն անբնդատ ծափահարությամբ կրկնել է տալիս կատարած երգերը: Կարա-Մուրզան հասարակության կողմից նվեր է ստանում՝ արծաթյա մի ծխախոտատուփ: Համերգից գոյացած գումարի (200 ռուբլի) վրա մարդասիրական ընկերությունն ավելացնում է 200

ռուբլի և գնում է մի դաշնամուր մշտական խմբական երգեց ցողության համար: Համերգին ներկա գտնվող հոչակավոր հայ դերասան Պետրոս Աղամյանը մեծ գովեստով է խոսում համերգի մասին և ոգեվորում է Կարա-Մուրզային՝ շարունակել սկսած գործը, գուշակելով նրա ապագա մեծ հաջողությունը: Տեղական լրագրություններում մեծ գովասանքով են խոսում այս համերգի մասին:

Ոգերված այսպիսի ընդունելությունից Կարա-Մուրզան նոր եռամգով շարունակում է իր սկսած գործը: Շաբաթական երկու անգամ (շորեցարթի և շաբաթ օրերը) տեղի են ունենում խմբի պարապմունքները, որոնց ընթացքում նա ոչ միայն երգեր էր սովորեցնում, այլև խմբի երգիշներին տալիս էր տարրական գիտելիքներ երաժշտության տևողությունից: Նրա խումբը զեռևս զուտ արական կազմ ուներ: Սովորանոների փոխարեն նա օգտագործում էր փոքրահասակ տղաների ձայնը (դիսկանտներ):

1886 թվի մարտի 15-ին Կարա-Մուրզան խմբական երգի նոր համերգով նշում է հայկական քառածայն երգի առաջին համերգի տարեդարձը: Համերգն անցնում է մեծ ոգեվորությամբ, և ներկա գտնվող բազմությունն օվացիա է սարքում նրա պատվին:

Կարա-Մուրզայի խմբական համերգները դառնում են օրինաչափ երևույթ: Հասարակությունը հետզհետե ավելի մեծ հետաքրքրությամբ է վերաբերում դեպի այդ համերգները, որոնց ծրագրերը հաճախակի թարմացվում էին նոր գործերով: Սակայն այս աշխատանքը չէր բավարարությամբ, հասարակությունն անբնդատ ծափահարությամբ կրկնել է տալիս կատարած երգերը: Կարա-Մուրզան հասարակության կողմից նվեր է ստանում՝ արծաթյա մի ծխախոտատուփ: Այդ նպատակով Բաքվի հայ հասարակության մի քանի նշանա-

վոր ներկայացուցիչներ հեռագրով դիմում են էջմիածնի Մակար կաթողիկոսին և նրանից ստանում են համապատասխան թուլլումովում: Եվ ահա հաջորդ տարվա դատկական տոներին նա իր ամբողջ խմբով Բաքվի հայկական հեղեցում կատարում է քառաձայն պատարագը: Որպես դպիներ խմբի հետ երգում են մեներգիչներ Արտաշես Սուքիասյանը և Մակար Վարդիկյանը: Կատարմանը ներկա է լինում թեմական առաջնորդը, որն իր շնորհակալությունն է հայտնում Կարա-Մուրզային: Պատարագի կատարումը դուր է գալիս նաև ներկա գտնվող հավատացյալներին: Կովկասի պայմաններում սա առաջին փորձն էր, որ հայկական եկեղեցում ամբողջ պատարագը երգվում էր քառաձայն:

Կարա-Մուրզան արդեն մտածում էր գործունեության ասպարեզի ընդարձակման և Կովկասի հայաշատ քաղաքների ընդգրկման մասին, բայց առաջմբ այդ նրան շհաջողվեց իրագործել:

1887 թվի ամառը նա ուղևորվում է դեպի արտասահման, նպատակ ունենալով լսել տարբեր տեղերում գոյություն ունեցող հայկական երգեցիկ խմբերը և գրի առնել թուրքահայերի ժողովուրդական երգերը: Կոստանդնուպոլսի վրայով նա անցնում է Իտալիա, Հայոց Ալիշանի, երաժիշտ Թիանկինի և ուրիշների հետ: Ամբողջ ճանապարհորդության ընթացքում նրան հաջողվում է լսել 27 եկեղեցական, դպրոցական և մասնավոր խմբեր, որոնցից երկու ձայնով երգում էին միայն Կոստանդնուպոլսի՝ Զովսաշյանի ղեկավարած դպրոցական երկու խմբերը և Մխիթարյան միաբանության սույր Ղազարի վանքի՝ Բիանկինի ղեկավարած աշակերտական խոմբը: Մնացած խմբերը երգում էին միաձայն: Իսկ քառաձայն հայկական խմբի նա չի հաճողապես և ոչ մի տեղ:

Բացի խմբեր լսելուց նրան հաջողվում է ճանապարհոր-



Նկ. 4. Քր. Կարա-Մուրզան Բաքվում
(նկարված 1886 թվին)

գության ընթացքում ձայնագրել ավելի քան 60 հայկական
ժողովրդական երգ:

Կոստանդնուպոլսում եղած ժամանակ նա այցելում է
Խրիմյան Հայրիկին, որը նբան վերաբերվում է շատ մեծ
համակրանքով: Դիմելով Կարա-Մուրզային նա ասում է.
«Զեր երգերն ալ մեր քարոզի գործը կտեսնեն, ժողովրդան
սիրով կկակդացնեն. ներդաշնակ երգը ուամիկի վրա ավելի
լավ կազմի»:

Այսուեղ նա հանդիպում է նաև նշանավոր հայ գրողնե-
րի, որոնք ամեն կերպ քաջալերում են նրան և դուռը նրա
նախաձեռնությունը: Նա ծանոթանում է կոմպոզիտոր Տիգ-
րան Չուփաջյանի հետ, որն այն ժամանակ արդեն հոչակված
կոմպոզիտոր էր: Նրանից վերցնելով մի քանի ստեղծա-
գործություններ, Կարա-Մուրզան մտցնում է իր համերգնե-
րի ծրագրերում և տարածում է կովկասահայերի մեջ:

Այս ծանոթությունները ժամանակի նշանավոր գործիշ-
ների հետ խոշոր նշանակություն ունեցան Կարա-Մուրզայի
հետագա գործունեության համար: Ղեկավարվելով նրանցից
ստացած ցուցումներով Կարա-Մուրզան իր ստեղծագոր-
ծական և երաժշտական-հասարակական գործունեության ըն-
թացքում ուժեղացնում է աշխույժ ու մարտական երգերի
պրոպագանդան:

Կովկաս վերադանալիս նա այցելում է իր հայրեակ
քաղաքը (Ղարասու-Բագար), որտեղ նա չէր եղել ամբողջ-
5 տարի: Այսուհետ նա կազմակերպում է երկսեռ մի փոքրիկ
երգեցիկ խումբ 20 հոգուց բաղկացած և տալիս է մի գեղե-
ցիկ համերգ: Դա Կարա-Մուրզայի կազմակերպած երկսեռ
առաջին քառաձայն խումբն էր: Այս փորձի հիման վրա նա
մտադրում է երկսեռ խմբեր կազմակերպել նաև Կովկասի
հայաբնակ քաղաքներում:

Վերադանալով Բագու Կարա-Մուրզան նոր եռանդով
շարունակում է իր համերգային և մասնկավարժական գոր-
ծունեությունը:

1889 թվի գատկական տոներին Կարա-Մուրզան իր

պատրաստի խմբով, որը բաղկացած էր 45 հոգուց, մեկնուած է Թիֆլիս: Նրա նպատակն էր համերգ տալ և ուժեղացնել այն տպավորությունները, որ նա թողել էր Թիֆլիսի հասարակության մրա իր առաջին համերգներով: Այս անգամ նրա համերգի ծրագրը գերազանցապես կազմված էր ժողովրդական երգերից և դրանով իսկ տարբերվում էր խմբական երգի առաջին համերգի ծրագրից: Համերգը տեղի է ունենում ապրիլի 9-ին և ունենում է մեծ հաջողություն: Բայց Կարա-Մուրզան շտապում է վերադառնալ Բաքու, որպեսզի կարողանա պատրաստվել և պատշաճ կերպով մասնակցել Բաքվի մարդասիրական ընկերության 25-ամյա հոբելյանին, որը լրանում էր նույն թվի մայիսի 21-ին:

Կարա-Մուրզան իր խմբի մասնակիցների թիվը հասցընում է 150-ի, Հ. Ղուկասյանի խոսքերի վրա գրում է «Որ վառեցեր ի զգոն հոգիս» քայլերգը, որով և բացվում է հանդեսը: Այս քայլերգը հասարակության վրա թողնում է ուժեղ տպավորություն, և Կարա-Մուրզան Մարդասիրական ընկերության նախագահից ստանում է որպես նվեր ոսկեզօծ ծայրով մի դիրիժորական փայտիկ:

Այս նույն թվին տեղի է ունենում Կարա-Մուրզայի երկրորդ ամուսնությունը եվլա Ֆրանցենա Մակսիլայայի հետ: Բայց Կարա-Մուրզան չի կարողանում իր ամուսնությունը ձևակերպել եկեղեցում, քանի որ վերջինս նրան ապահովան չէր տվել առաջին կնոջից: Նա ստիպված է լինում ամուսնությունը ձևակերպել քաղաքացիական ակտով:

Կարա-Մուրզան Գամառ-Քաթիպայի միջոցով հրավեր է ստանում՝ գնալ նոր-Նախիջևան (Դոնի վրա) մշտական աշխատանքի, բայց նա մերժում է այդ առաջարկը, թեև պայմանները ձեռնտու էին: Նա մերժում է շնորհիվ այն հանդամանքի, որ ամենայն լրջությամբ գրաղվում էր «Շուշան» օպերան գրելու աշխատանքներով և հաստատ մտադրվել էր Բաքվում կազմակերպել հայկական երաժշտական դպրոց:

«Շուշան» օպերայի լիբրետոոն գրում էր վիպասան Ատրպետը: Կարա-Մուրզան սերտ համագործակցության մեջ

մտնելով Ատրպետի հետ, ցուցումներ էր տալիս դրամայի յուրաքանչյուր տեսիլի, նույնիսկ ոտանավորի վերաբերյալ:

Այս օպերայի վրա Կարա-Մուրզան առանձնակի ուշադրություն էր գարձնում: Այդ երկում է 1890 թվի հունվարի 4-ին իր Մկրտիչ եղբորը գրած նամակից, որի մեջ կարդում ենք հետևյալը.

«Այդ օպերան երեք գործողովներով է. բավական ժամանակի է, որ գրում եմ նախերգանքը և վերջանալու մոտ է: Երաժշտովները վերին աստիճանի օրիգինալ է, մաքուր է և երաժշտական կանոններին հակառակ չէ, դա իմ կարծիքն է... Այսօր նախերգանքը երգի խումբը, որն այդ եղանակից հրձվեց: Սրա վրա չպետք է նայել ինչպես մի փոքր բան իմ շարադրություններից, նույնպես առաջուց չդառնալ ընդունակության և կոմպոզիտորի (երաժշտագետի) ցենզի մասին: Պետք է սպասել Թիֆլիսի քննության, նա ձեզ մոտ (Թիֆլիսում) մեծ հաջողություն կպատճի, իսկ ավելի մեծ՝ Ս. Պետերբուրգություն, որի մասին խորը համոզված եմ և դա իմ գաղտնիքն է... Պետք է զնել բեմի վրա, պետք է որ նրան հավանեն, որովհետև այդպիսի երաժշտովներն բեմ դուրս չի եկել: Ես կարծում եմ, որ մի նորություն կնելով հեղաշրջում կձգի երաժշտության մեջ: Եթե ինձ այստեղ չհասկանան, եւ կուտանեմ Պետերբուրգ, որտեղ ծարավի են այսպիսի բաներ»:


Իր կյանքի հետագա տարիների ընթացքում Կարա-Մուրզան շատ անգամ ցանկացավ շարունակել և ավարտել իր այդ փայտիացած օպերան, սակայն ամեն անգամ գտնվեցին լուրջ պատճառներ, որոնք խանգարեցին գործին և վերջիվերջո օպերան մնաց կիսատ: Կարա-Մուրզան լրիվ ավարտել էր միայն նախերգանքը և առաջին գործողովները, որի պատրաստի պարտիտուրան կորավ 1899 թվին Մոսկվայից հապճեպ կերպով աքսորվելու ձանապարհին: Օպերայի նույներգանքը («Հեղի բեդ») հեղմանակի կողմից շատ հաճախ կատարվել է համերգների ընթացքում և արժանացել ունկնդիրների առանձին հավանությանը: Այդ նախերգանքն առաջին

անգամ կատարվել է 1891 թվի աշնանը երդիշ Շովակի^{*}
մասնակցությամբ:

Բաքվում երաժշտական ուսումնարան հիմնելու միտքը
Կարա-Մուրզայի մեջ հղացել էր վաղոց: Նա ելնում էր այն
բանից, որ ժողովրդի մեջ երգն ու երաժշտությունը լայնորեն
տարածելու համար պնդրաժշտ է պատրաստել երաժշտա-
կանապես կոփիված կադրեր: Այս գործը գլուխ բերելու հա-
մար նա տանում էր համապատասխան նախապատրաստա-
կան աշխատանք, բացատրելով այդպիսի դպրոցի խոշոր
նշանակությունը հայկական երաժշտական կուլտուրայի
զարգացման համար: Թիֆլիսում գտնվող իր Մկրտիչ եղբոր
միջոցով նա դիմում է ուսու կոմպոզիտոր Իպլուշտով-Իվա-
նովին, որն այն ժամանակ կայսերական երաժշտական դրա-
ռոցի թիֆլիսի բաժանմունքի ղերեկորն էր: Նա խնդրում է
պարզաբանել ծրագիրը և առհասարակ ուսումնարանին վե-
րաբերող մի քանի հարցեր: Ամենուրեք նրա նախաձեռնու-
թյունն արժանանում է գովասանքի, բայց և այնպես կարա-
Մուրզային չի հաջողվում գլուխ բերել երաժշտական ուսում-
նարանի կազմակերպման գործը, որովհետև դրա համար
չկային համապատասխան նյութավան միջոցներ:

Ստանալով Աստրախանի թեմական առաջնորդի հրավերը
նա իր խմբի անդամներից զոկում է 30 հոգու և պատրաստ-
վում է Աստրախան մեկնելուն: Նրան պակասում էր ճանա-
պարհածախոսի գումարը, որի ձեռք բերման համար նա
ստիպված է լինում զիմել իր ծանոթներին: Վերջիններս
խոստանում են, բայց ժամանակին չեն հասցնում պահանջ-
ված գումարը: Զկամենալով այլևս համբերել և դրանով իսկ
ուշանալ Աստրախան մեկնելուց, նա վաճառում է իր տան
կա՞-կարասին և գոյացած գումարով խոմբը տանում է
Աստրախան: Այստեղ նա տալիս է իր համերգները, մեծ

* Կարա-Մուրզան «Ծուշան» օպերան գրելիս բեգի դիրի համար
նկատի ունենալիքին, նրա ճանածավագին ու խաղը, և այդ պատ-
ճառով էլ վերջինիս կատարմամբ բեգի պարտիան հնչում էր հյութեղ, գե-
ղեցիկ ու շատ բնական:



Ֆ. Ֆ. Կարա-Մուրզայի աշխատանքների լուսապատճեն կուռժը
(Կարա-Մուրզայի աշխատանքների լուսապատճեն է Երևան)

բավականություն պատճառելով հայ հասարակությանը, որը վաղուց իմեր զոտիկ էր հայկական երգեր լսելու հնարավորությունից:

Բացի համերգներ տալուց Կարա-Մուրզան Աստրախանի եկեղեցում երգելու համար կազմակերպում է ՅՈ Հոգուց բաղկացած երգեցիկ խոմք, պատրաստում է 12 խմբավար և հաջողությամբ ավարտելով իր միսիան, նաև վերադառնում է Բաքու՝ թեմական առաջնորդից ստանալով առանձին շնորհակալական թուղթ:

Բարփում նաև դարձյալ հավաքում է իր ցրված խոմքը և տալիս է նոր համերգ, ծրագրի մեջ մտցնելով Գամառ-Քաթի-պայի խոսքերի վրա գրված «Խնձ անենք» և Նալբանդյանի խոսքերի վրա գրված «Ազատն աստված» նոր երգերը: Այս համերգին ներկա է լինում Գամառ-Քաթիպան (Ռ. Պատկանյանը), որը խորապես հուզվում է առաջին երգի մելոդիայից և իր հուզմունքն արտահայտում է հետևյալ խոսքերով.

«Խաչատոր, Հոգիս ցնցեցիր, ինձ երկինք բարձրացրիր. այդ ի՞նչպես ընկողմեցար իմ Հոգուս խորքերը և այնուեղից առողջանված այդ բառերը այս նոտերով կենդանացրիր»:

Այս տեսարանին ներկա եղած Ատրպետը նկարագրում է.

«Դեռ այս րոպեիս աշքիս առաջից չի հեռանում ծերունիքանասեղծի ոգեզմայլ դեմքը, երբ երգեցիկ խումբը նրա մարդարեացած հանգերն էր կրկնում «Հայը կմտիպի վեհ պատրիարքին...» և Կարա-Մուրզան ոգեւորված, դաշնամուրը նվազելիս, դիմագծերով, աշքով, ոճքով, մորուքով, ուսերով ու թերով նշաններ էր տալիս երգեցիկ խմբին և կենդանացնում, ցնցում էր ունկնդիր հասարակությանը»:

Նույնպիսի ցնցող տպավորություն է թողնում նաև Միքայել Նալբանդյանի «Ազատն աստված» մարտական բանաստեղծության վրա գրված երգը, որի մենաբառը կատարում էր երգիչ Ծովակը:

1890 թվի աշնանը Բաքիի Թաղիկի թատրոնում առաջինամբամբ բեմադրվում է Գոմոյի «Ֆառուտ» օպերայի հայերեն-

Թարգմանությունը: Մեր երաժշտովյան պատմովյան մեջ
առ առաջին փորձն էր թարգմանական օպերայի բնմադրման
ուղղովյամբ: Նվազախոսմբը և երգեցիկ խոմքը զեկավա-
րում էր Կարա-Մուրզան: Իբրև մեներգիչներ մասնակցում
էին Ֆառուսի դերում՝ երգիչ Մարդաթյանը, Մեֆիստոֆելի
դերում բարիտոն Եղիազարյանը և Մարգարիտայի դերում
սոպրանո Մագդալինա Գենջյանը՝ երեքն էլ Բաքվի ոռուա-
կան թատրոնի շնորհաւի արտիստներ: Օպերան բնմադրվում
է ոչ ամբողջությամբ, բնմադրվում են միայն այն տեսարան-
ները, որոնք մասնակցում էին Ֆառուսի, Մեֆիստոֆելը և
Մարգարիտան: Երգեցիկ խոմքը երգում էր բեմի ետևից:
Ելյո ներկայացումն ունենում է մեծ հաջողություն:

5. ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱՅԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1891 թվից Կարա-Մուրզայի կյանքում սկսվում է մի նոր շրջան: Եթե մինչ այդ նրա գործունեությունը, չնշյալ բացառությամբ, ընթանում է միայն Բաքվի և Թիֆլիսի ստհմաններում, ապա այս թվից սկսած նա անդադար շրջում է Հայաբնակ քաղաքները՝ ամենուրեք կազմակերպելով. Երգեցիկ խմբեր այդ նույն քաղաքների երիտասարդությունից:

Կարա-Մուրզայի գործունեության այս շրջանն սկսվում է գեպի Պետրովսկ (Մախաչ-Կալա) կատարած ուղևորությամբ: Մյուսեղ նա կազմակերպում է 47 հոգուց բաղկացած երկսեռ քառաձայն խումբ: Դա նրա երկրորդ փորձն էր երկսեռ խումբ կազմակերպելու ուղղությամբ: Այս փորձը նմանապես պատճենական է հաջողությամբ: Նրա տված համերգը մեծ տպագործություն է գործում տեղի հասարակության վրա: Ոգեստ-ված այս հաջողությամբ նա վերադառնում է Բաքու և վճռում է անպայման գլուխ բերել երկսեռ խմբի կազմակերպման գործը:

Բաքվում նրան երկար ժամանակ չէր հաջողվում իրականացնել իր այդ նպատակը: Բայց այս անգամ նոռ եռան-

դով անցնելով գործի, նա հասնում է իր նպատակին: Նրան-
այս գործում օգնության են հասնում Բաքվի հայ հասարա-
կության մի քանի առաջավոր ներկայացուցիչներ, որոնց
շանքերի շնորհիլ հավաքվում են 15-ից 18 հոգի կանայք ու
օրիորդներ և հաղթահարելով ամոթիսածության դարավոր
տրադիցիաները, զուրս են գալիս բեմ ու տղամարդկանց հետ
միասին երգում:

Այս անդամ Կարա-Մուրզայի խումբը բաղկացած էր 140 հոգուց: Լավ նախապատրաստական աշխատանքից հետո նա հանդիս է գալիք մի փառավոր համերգով, որը նրա ամենաշաջող համերգներից մեկն էր: Վիպասան Ատրպետն իր հուշերի մեջ այս համերգի մասին գրում է.

«Միթե կարելի է մոռանալ Թաղիկի տան կլուրի դահում 140 հոգուց բաղկացած երկսեռ խմբով տված Համեր գը, քաղցր ժամերը: Ի՞նչ հոգեզմայլ ոգևորություն, ի՞նչ սքանչացումն... Ամբուայնի սոլոն, Փոլադ բեկի* դերում, այնպիսի զգալի կերպով գերիշխում էր 140 հոգու ձայնին, որ զգացրեց Հանդիսականների սրտերը: «Հեյ բեգը! այնպիսի ժողովրդականություն ստացավ, որ Բաքվի տներում ու փողոցներում անխտիր երգում էին նրա կտորները, թե «Շուշանի» լիբրետոյն գեռ պատրաստ չէր: Կարծես գեռ աշքիս առաջն է Բաքվի երիտասարդությունը, որն այդ գիշեր աշխատավոր գործին Համերգից հետո ցուցերով, բենգալյան ճրագներով տուն ճանապարհեց: Այդ գիշեր ԿարաՄուրգան ուրախությունից հրձված, բերկրած չկարողացավ անգամ քնել, հանգստանալ... նա մինչև լուս ոգեզմայլ նոր գագեց «Շուշան» օպերայի տեսարանները, որոնք նոր էր հորինելու ձայնագրել, անդադար ոգեվորվելով և ոգևորելով (տե՛ս Ատրպետի «Բերկրալի ժամեր» հոդվածը, տպագրված «Աղբյուր» ամսագրի 1902 թվի Համարում, էջ 227—229):

Բարկում երկսեռ խումբ կազմակերպելուց և իր այդքան
մեծ հաջողություն գտած համերգը տալուց հետո, նա նոր

* Գործող ամս «Եռաշան» օպերացից:

Հանդիր է առաջ քաշում՝ դժվար, բայց շատ կարևոր խնդիր: Նա նպատակ է զնում իր խմբի հետ միասին Ռուսաստանի վրայով անցնել Եվրոպա և Ամերիկա, մասնակցել ինչպես Վիեննայի, այնպես էլ Զիկագոյի միջազգային ցուցահանդեսներին, ցուցադրել հայկական երաժշտական կուլտուրայի: Նմուշները և այդպիսով ներկայացնել հայ ազգը Եվրոպային ու Ամերիկային: Նա համոզված էր, որ հայկական ազգային ժարագով հանդես եկող և հայկական երգեր երգող խումբը մեծ հաջողություն կունենա թե Եվրոպայում և թե Ամերիկա: Հումք ուղարկելու դա նորություն էր նրանց համար, իսկ ամեն մի նորություն ունի իր հետաքրքրությունը:

Իրեն հատուկ եռանդով Կարա-Մուրզան գործի է կպչում և ծավալում է մեծ նախապատրաստական աշխատանք՝ այդ դժվարին խնդիրն իրագործելու համար:

1891 թվի հոկտեմբերի 22-ին նա հայտարարություն է ուղարկում «Մշակ»-ին, «Նոր-դպր»-ին, «Արձագանք»-ին, «Տարագ»-ին, Վենետիկի Միհիթարյան միաբանությանը, Հարցումների է անում մի շարք մասնավոր անձանց, որոնք բնակչում էին տարբեր քաղաքներում: Նրա հայտարարությունը պատճենվում է վերոհիշյալ պարերականներում և ունի իր առանձին կարևորությունը, որովհետև Հիանալի կերպով բացահայտում է Կարա-Մուրզայի լուրջ ու պատասխանատու վերաբերմունքը գեղի նախաձեռնած գործը: Այդ պատճառով էլ բերում ենք այդ հայտարարության տեքստը:

«Խմբովս հանդերձ հրավեր ստացած լինելով Ռուսաստանի և արտասահմանի զանազան քաղաքներում հայկական կոնցերտներ տալու, արդեն սկսել եմ նախապատրաստվել: Բայց որպեսզի նախապատրաստությունս լինի բազմակողմանի ու նպատակահարմար, այս իսկ պատճառով էլ դիմում եմ մամուլի աջակցության ու ձեռնհաս մարդկանց ամենակերպ օժանդակության:

Հումք եմ, որ բանիմաց և ձեռնհաս մարդիկ չեն մերծիլ իրենց աջակցությունը, այդ պատճառով էլ շտապում եմ

մի քանի տեղեկություններ հաղորդել երաժշտական այդ ուղղության մասին.

ա) Խումբը պետք է բաղկացած լինի 40—50 երկուու անդամներից, որոնք կընտրվեն համապատասխան իրանց առավելությունների՝ ձայնի, կրթության և ալլն, և ալլն:

բ) Երգերի ռեպերտուրը կազմված պետք է լինի զուտ ասիական եղանակներով՝ մաղթանքներից, ազգային, քնարերգական և ժողովրդական երգերից:

գ) Խմբի անդամները կունենան համապատասխան զանազան հանդերձներ՝ պատմական, ժողովրդական և կովկասան:

Շատ կպարտավորեցնեն մեզ բանիմաց և ձեռնհաս ժողովրդի մարդիկ, իթե շուտով հաղորդեն արևելյան եղանակով հայոց երգեր՝ հայկական կամ Եվրոպական նոտաներով և կամ բերանացի: Բացի սրանց կարևոր է նաև, թե ի՞նչ երգ, ի՞նչպիսի ժամանակ, կամ ի՞նչ տրամադրության մեջ է երգում ժողովուրդը, և կամ ի՞նչ ավանդական և պատմական բացատրություն է տալիս այդ երգերին:

Հանդերձների մասին ևս ուրախությամբ կընդունեմ զանազան խորհուրդներ և տեղեկություններ»:

Կարա-Մուրզան ամենայն մանրակրկիտությամբ լուծում է այն բոլոր հարցերը, որոնք կախված էին իրենից: Բայց կար մի հարց, որի լուծման գործում նա անզոր էր: Դա նյութական միջոցների հայթայթման և ուղևորությունը նյութական կողմից ապահովելու հարցն էր: Միակ բանը, որ նույնահաշվով կատարել այս կապահցությամբ, դա ծախսերի նախահաշվը կազմենի էր և հայ հարուստներին դիմելու: Թե մեկը և թե մյուսը նա բարեխղճորեն կատարում է, բայց անօգուտ: Հայ հարուստները չկամեցան իրենց միջոցները ծախսել այդպիսի «դատարկ» և «անօգուտ» գործի վրա:

Կարա-Մուրզան շկարողացավ ձեռք բերել անհրաժեշտ գումարը և այդ պատճառով էլ գործը ձախողվեց: Հակառակ իր ջանքերի և բուն ցանկության, նա շկարողացավ մասնակցել Վիեննայի ցուցահանդեսին:

Զնայած այս անհաջողությանը, Կարա-Մուրզան չի հուսառատվում և կրկնակի եռանդով գործի է անցնում, որպեսզի կարողանա մասնակցել դոնե Զիկագոյի 1892 թվի միջազգային ցուցահանդեսին:

Այս անգամ նա հոդվածներով հանդես է գալիս մամուլում և հրապարակայնորեն շարադրում է իր ծրագրին այն միջոցառումների մասին, որոնցով նա հնարավոր էր համարում մասնակցել այդ ցուցահանդեսին: Իր հոդվածներից մեկում, տպագրված «Մշակ»-ում, նա մատնանշում է շորս վարիանտ: Դրանք են.

ա) Շահլամյանն իր մեներգով, դաշնամուրի նվազակցությամբ:

բ) Շահլամյանը մի քանի այլ երգինների հետ միասին:

գ) Շահլամյանը հավաքական քառաձայն երգեցիկ խմբի հետ միասին:

դ) Շահլամյանը տեղում կազմակերպած երգեցիկ խմբի հետ միասին:

Բոլոր այս դեպքերում էլ Կարա-Մուրզան պատրաստակամ էր անձամբ մասնակցել ցուցահանդեսին, որպես խորթակ և ակնոմպանիատոր:

Գործը զլուխ բերելու համար նա նամակով դիմում է կումպողիստոր Չուփաչյանին, որի հոչակն արդեն տարածվել էր Եվրոպայում շնորհիվ իր օպերետների բեմադրության: Չուփաչյանն իր պատրաստան նամակում գրում է.

Ալրեն ձեր ծրագրը և տեսություններն շատ հարմար տեսա, սակայն անոնց գործադրությունը բավականին դըմքաք, դրամի շգոյսության պատճառով, ինչպես դուք ինքնին այս կետի մեջ խոստովաներ էիք: Սակայն ինչպես որ աշխատությունն ամեն բանի կհաղթի, դուք ալ հանձն առած էք այս մասին բոլոր ճիգերը թափել, ձեր մատադրած ծրագիրն ի գլուխ բերելու համար... թափական է, որ նախնական ծախիքերն հոգալու միջոց գտնեք...»:

Սակայն հենց այդ նախնական ծախիքերը հոգալու հա-

մար անհրաժեշտ գումարի բացակայությունն է լինում պատճառը, որ գործը ձախողվում է և նրան չի հաջողվում իրականացնել իր նպատակը՝ ներկայացնել հայ ժողովրդի երաժշտական կուլտուրան նվիրապելին ու Ամերիկային:

Չհուսահատվելով այս գործի անհաջողությունից, Կարա-Մուրզան սկսում է շրջագայել Կովկասի հայաշատ քաղաքները և տեղերում երգեցիկ խմբեր կազմակերպելու իր հետ վերցնելով փոքր եղբայրներին նա ամսովա ամիսներին անցնում է Ախալցխա, Աբասթուման և Ախալքալաք: Շնորհիվ Կարա-Մուրզայի գործադրած ջանքերի շատ կարճ ժամկետում այդ քաղաքներում կազմակերպվում են երգեցիկ խմբեր և երգում են հայկական երգեր: Երգում են ոչ միայն նրանք, ովքեր ընդգրկված են խմբերում, այլև նրանք, ովքեր ներկա էին լինում համերգներին: Երգում էին տղամարդիկ ու կանայք, ծերերն ու երիտասարդները, նույնիսկ երեխաները ետ չեն մնում իրենց ծնողներից և երգում էին այդ երգերը: Այս համերգների ծրագրերում նա հատկապես մեծ տեղ էր հատկացրել հայկական ժողովրդական երգերին, և սա հանդիսանում էր նրա հաջողության պայմաններից մեկը:

Կարա-Մուրզան առանձնապես մեծ ընդունելություն է գտնում Ախալքալաքում, որը հանդիսանում էր հայկական ժողովրդական երգի օչախներից մեկը: Երկու համերգից հետո ժողովրդի խնդրանքով նա պատրաստվում է իր երրորդ համերգին, որը սակայն չի կայանում: Ու, Պատրաստյանի մահվան լուրն ստացվելու կապակցությամբ: Հետաձգելով իր համերգը նա հավաքում է տեղական երիտասարդությանը, խոսում է բանաստեղծի կատարած գործի արժեքի մասին և ցանկություն է հայտնում հանդիսավոր կերպով կատարել նրա հոգեհանգիստը եկեղեցում: Մի շաբաթվա ընթացքում նա խմբին սովորեցնում է քառաձայն պատարագը և հանդիսավոր կերպով կատարում բանաստեղծի հոգեհանգիստը:

իր շրջած քաղաքներում Կարա-Մուրզան հատուկ գա-
սախոսությունների միջոցով երիտասարդությանը ծանոթաց-
նում է ընդհանուր ու հայկական նոտագրության հետ, որով
հետև դրանով նախ՝ հեշտացնում էր նոր երգեր սովորեցնելու
գործը և երկրորդ՝ իր հեռանալուց հետո էլ ձայնագրված եր-
գերը կշարունակեին երգիկ տեղի հասարակության կողմից:

Ախալքալաքում նա ծանոթանում է Էջմիածնի Գևորգյան
Հեմարանի այն դասատուների և ուսանողների հետ, որոնք
ամառային արձակուրդներին եկել էին հանգստանալու իրենց
հայրենի քաղաքում: Վերջիններս, լսելով Կարա-Մուրզայի
քառաձայն երգերը, շափականց ոգեսրվում են և վերադառ-
նալով Էջմիածին, հարց են բարձրացնում՝ նրան Գևորգյան
Հեմարան հրավիրելու մասին:

Կարա-Մուրզան ավարտելով իր համերգային շրջագա-
յությունը, վերադառնում է Բաքու և շարունակում իր աշխա-
տանքները: Շատ շանցած, հոկտեմբերի սկզբներին, նա
ստանում է մի հեռագիր Էջմիածնի Գևորգյան Հեմարանի
ռեկտոր Սեղրակյանից, որը նրան հրավիրում էր ստանձնել
Էջմիածնի երգեցողության դասատուի պաշտոնը տարեկան
1000 ուուրի աշխատավարձով: Կարա-Մուրզան թեավորվում
է այդ հեռագրից, որովհետև նրա մեջ տեսնում է տարիների
ամենաշերժ իր ցանկություններից մեկի իրականացման հնա-
րավորությունը: Այդ մասին նա գրում է իր Մկրտիչ եղ-
րարն ուղղած նամակում:

«Ես վճռել եմ գնալ, որ իմ տասր տարիք բաղձանքն է,
որ այժմ ինքն իրեն կտարիւում է, և ես իրավունք շունեմ
փողի մասին խոսելու ոչ մի բան»:

Էնտուղիաստ Կարա-Մուրզան հեռագրով անմիջապես
հայտնում է իր համաձայնությունը և միաժամանակ գրում
է մի նամակ Արիստակես եպիսկոպոս Սեղրակյանին: Նա
գրում է:

«Ավելորդ չէ ասել, թե որքան ուրախացրեց և ոգեսրեց
ինձ այդ առաջարկությունը: Մի տասնյակ տարի Դրիմում և
ահավասիկ՝ տասը տարի Կովկասում անընդհատ երազելուց

հետո, վերջապես շնորհիվ ձեր համակրանաց, արժանանում
եմ հասնել նպատակիս, ծառայել ազգին՝ բառիս բուն նշա-
նակությամբ: Այդ հրավերով արդեն ես բարոյապես անսահ-
ման վարձատրված եմ համարում»:

Այստեղ ճիշտ է նշված այն հանգամանքը, որ այս հրա-
վերն իսկապես նրան միայն բարոյական վարձատրություն
էր տալիս: Նյութականի տեսակետից նա մեծ զոհողություն
էր հանձն առնում, քանի որ իր եղբոր՝ Պողոս Կարա-Մուր-
զայի վկայությամբ նա այս շրջանում ամսական 300 ուուրի
դրամ էր ստանում միայն իր տված դաշնամուրային դասե-
րից: Եթե սրան ավելացնենք նաև համերգներից ստացված
եկամուռը, ապա մեզ համար միանգամայն պարզ կլինի, որ
տարեկան 1000 ուուրի աշխատավարձը շատ քիչ էր նրա
ստացածի համեմատությամբ: Սակայն ինչպես միշտ, այն-
պես էլ այս անգամ Կարա-Մուրզան ամենից առաջ նկատի
ուներ գործը և ոչ թե անձնական նյութական շահը: Այս է
պատճառը, որը նա առանց մի վայրկյան տատանվելու ընդու-
նում է հրավերը:

Էջմիածին մեկնելուց առաջ նա տալիս է իր հրամեշտի
համերգը Բաքվում: Հասարակությունն օվացիա է ու արքուն
արիստուի անխոնց մշակի պատվին: Հատկապես մեծ տպա-
վորություն է գործում ունկնդիր հասարակության վրա նրա
Շնաք բարև հրաժեշտի նոր երգը, որը գրված էր այս ա-
ռիթմով և որի խոսքերն ու եղանակը պատկանում էին իրեն: Այս երգով նա ցնցում է ունկնդիր հասարակությանը:

Հրաժեշտի օրը կայարանում հավաքվում են նրա բազ-
մաթիվ աշակերտները, ծանոթներն ու բարեկամները: Մեկնե-
լուց առաջ նա մոտենում է իր խմբի անդամներին և խնդրում
ու հորդորում է նրանց՝ շմոռանալ սիրելի գործը, մշտական
կալ հաստատել իր հետ: Հավաքված հասարակությունը նը-
րան ճանապարհ է գնում քառաձայն երգով նաև ավելի և ա-
հավասիկ է, երբ շարժվող գնացքի ետևից իր ակտնշին են
հասնում խմբական երգի վերջին խոսքերը:

«Գնա եղբայր, աստված քեզ հետ,
Ազգի սիրուը քեզ ընկեր,
Գնա, թեև չենք կարող դալ,
Բայց մեր հոգին քեզ ընկեր»:

Գնացքն անհետանում է հորիզոնում և իր հետ տանում Կարա-Մուրզային, որն ութ տարի շարունակ եղել էր Բաքվի կուտուրական կյանքի նշանավոր դեմքերից մեկը և որը միշտ էլ գրկաբաց ընդունելություն էր դուել հայ հասարակության կողմից:

6. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ Է ԶՄԻԱԾՆՈՒՄ

Մեծ էին Կարա-Մուրզայի հույսերը, վառ էին նրա երազանքները, պարզ էին հեռանկարները, երբ նա մեկնեց էջմիածին: Այդ են ապացուցում նրա հետեւյալ խոսքերը՝ գրված իր հիշատակարանում:

«Մոտ 20 տարի էր՝ երազում էի գնալ էջմիածին, ճեմարանում դասեր տալ, եկեղեցում պատարագի արարողությունը քառաձայն դնել և խումբ կառավարել: Մրա հետ շատ բաներ էի երազում, թե ինչպես առաջին ընթացքում 50—60 հոգի ուսուցիչներ-խմբավարներ պատրաստել և որոշյալ թիվ ավարտողների ուղարկել ժողովրդյան մեջ, զանազան տեղեր, քառաձայն երգեր տարածելու...»:

Կարա-Մուրզայի հրավիրման մոմենտին ճեմարանում Սեղրակյանի շուրջը համախմբվել էին առաջադիմական հայացքների տեր դասատուներ և ուսանողներ, որոնց նախաձեռնությամբ էլ Կարա-Մուրզայի հրավիրման հարցը դրական լուծում ստացավ:

Էջմիածին հասնելով Կարա-Մուրզան նախ ներկայացակ Սեղրակյանին, ապա երեմյա եղիսկոպոսին, որը փոխարինում էր կաթողիկոսին, և երբ բոլոր հարցերը վճռված է համարում, ծրանից իր ընտանիքը տեղափոխում է Էջմիածին և անցնում աշխատանքի Հաջորդ օրը նա արդին սկսում է

դասավանդել ճեմարանում: Այդ օրը նա պարապում է շորրորդ դասարանում, իսկ երեկոյան, ամբողջ ուսուցչական կազմի ներկայությամբ ճեմարանի հանդիսարանում հավաքված աշակերտներին ձայների է բաժանում, և մի քանի փոքր-ձից հետո էջմիածնում առաջին անդամը քառաձայն հնչում է ժիշտալցի աղջկա երգը: Խումբը բաղկացած էր 150 հոգուց և նրա ներդաշնակ երգը միծ տպավորություն է գործում ներկա գտնվողների վրա:

Կարա-Մուրզան երգեցողության դասեր է տալիս ճեմարանի բոլոր դասարաններում, իսկ լսարաններում, զրանից բացի, պարապում է նաև երաժշտության տեսությունից, ծանոթացնում է ժամանակակից ընդհանրացած և հայկական նոտագրությանը, ներդաշնակության գիշավոր օրենքներին և այլն:

Կարա-Մուրզան կազմել էր իր գործունեության ծրագիրն էջմիածնում և այդ ծրագրով էլ առաջ էր ընթանում: Այդ ծրագրից բաղկացած էր հետեւյալ միջոցառումներից:

1) Կանոնավորել երգեցողության դասերը ճեմարանում, աշակերտներին սովորեցնել աղջկային-հայրենասիրական և ժողովրդական երգեր:

2) Լսարաններից ընտրել 50—60 հոգի երաժշտական ընդունակություն ունեցող սաներ և նրանց պատրաստել որպես քառաձայն երգեցիկ խմբի ղեկավարներ (խմբավարներ):

3) Պատրաստել երգեցողության դասատուներ գպրցների համար, նրանց տալ այնպիսի պատրաստականություն, որպեսզի նրանք կարողանան առնվազն երկձայն երգեր ուղարկեցնել աշակերտներին:

4) Վերջնականապես լուծել քառաձայն պատարագի կատարման հարցը ոչ միայն էջմիածնի վանքում, այլև հայկական բոլոր եկեղեցիներում:

5) Դասախոսությունների և համերգների միջոցով ծանոթացնել աշակերտությանը և դասատուական կազմին ուսուական ու ելքոպական կլասիկ երաժշտության հետ:

6.) Կազմակերպել գործիքային երկու անսամբլ՝ մեկը լսարաններից, իսկ մյուսը դասարաններից:

7.) Նախապատրաստել և տպադրել հայկական նոտաներով ձեռնարկներ, դասագրքեր և այլն:

8.) Հայտնաբերել ամենաարդունակ և երաժշտության մեջ ապագա խոստացող սաներին, նրանց հետ պարագել առանձին, ուղարկել մուսաստան և արտասահման երաժշտական ուսումը շարունակելու և կատարելագործվելու համար:

Ինչպես տեսնում ենք, ծրագիրը բավական ընդարձակ էր և նրա իրագործման համար անհրաժեշտ էր առնվազն մի քանի տարվա լարված աշխատանք: Կարա-Մուրզան ուներ բոլոր հնարավորությունները նրա իրագործման համար, միայն թե նրան վսանդարեին:

Մեծ ծրագիրը պահանջում էր մեծ եռանդ, իսկ Կարա-Մուրզայի եռանդն անսպառ էր: Կարճ ժամանակամիջոցում նա գրավում է ամբողջ աշակերտության համակրանքը: Մի շաբաթվա ընթացքում նա աշակերտությանը սովորեցնում է քառաձայն ամբողջ պատարագը, որը և կատարվում է էջմիածնի մայր տաճարում Հայաստանի առաջին լուսավորիչներ Թագիոսի և Թարգուղիմեոսի տոնին: Պատարագի քառաձայն կատարումը գրավում է բազմաթիվ ունկնդիրների ուշադրությունը: Այնուհետև ամեն կիրակի ու տոն օրերին բազմաթիվ մարդիկ երեանից հատկապես գալիս էին էջմիածնի քառաձայն պատարագը և Կարա-Մուրզայի 150 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի համերգները լսելու համար:

Կարա-Մուրզան ինչպես ծրագրել, այնպես էլ սկսել էր իրագործել իր ծրագիրը: Ցերեկները նա դասեր էր տալիս, գիշերները քառաձայնում էր շարականներ և այլ երգեր, իսկ ազատ ժամերին հավաքում էր աշակերտներին՝ դասախոսություններ կարդալու կամ նոր ազգային, ժողովրդական և եկեղեցական խմբական երգեր սովորեցնելու համար: Նրա երաժշտական պարապմունքներին խանդարում էր դաշնամուրի պակասը, որը շուտով վերացվում է, որովհետև նրա շանքերով առաջին դաշնամուրը մուտք է գործում էջմիածնի:

Ինչպես պետք էր սպասել, Կարա-Մուրզան իր գործունեությունը չի սահմանափակում միայն ճեմարանի պատերի մեջ: Նա միաժամանակ կրազլում է ճեմարանից դուրս երգեցիկ խմբեր կազմակերպելու և համերգներ տալու գործով: Էջմիածնում նա կազմակերպում է 42 հոգուց բաղկացած երգեցիկ խոմք, որին մասնակից է գարձնում ճեմարանի դասատուններին, տեղական դպրոցի ուսուցիչներին և երիտասարդությանը: Երեանում նա կազմակերպում է 70 հոգուց բաղկացած մի խոմք և մեծ հաջողությամբ տալիս է իր համերգը: Հատկապես 1893 թվի ամառային արձակուրդներին նա Ալեքսանդրապոլում կազմակերպում է 90 հոգուց բաղկացած երգեցիկ խոմք, իսկ հետո անցնում է իգդիր, որտեղ կազմակերպում է 80 հոգուց բաղկացած երգեցիկ խոմք՝ հաջողությամբ անցկացնելով իր համերգները: Իգդիրում նա հավաքում է ծողովրդական նոր երգեր և մշակելով նաշնում իր համերգների ծրագրերում:

Կարա-Մուրզան երգերի նոր պաշարով վերադառնում է էջմիածնին, ուր տեսնողեն ծավալվել էին նոր կաթողիկոս Խրիմյանին դիմավորելու նախապատրաստական աշխատանքները: Խրիմյանի կաթողիկոս օծվելուն տրվում էր առանձին հանդիսավորություն, որովհետև նա Շայոց հարցի նախահայրն էր և ամենքն սպասում էին, որ կաթողիկոսական աթոռը բարձրանալուց հետո նա նոր եռանդով կծննարկի այդ հարցի արձարծմանն ու լուծմանը: Ամենուրեք, ուր նա այցելում էր, նրան ցուց էր տրվում արտաքր կարգի ընդունելություն: Բնական է, որ աթոռանիստ էջմիածնն առանձնապես պիտի պատրաստվեր նրա ընդունելությանը: Կարա-Մուրզան նույնպես լծվում է այդ նախապատրաստական աշխատանքներին: Զէ՞ որ նա դեռ 1887 թվին անձամբ ծանոթացել էր Հայրիկի հետ և նրանից լսել քաշալերանքի խոսքեր իր երաժշտական գործունեության մասին: Նա սպասում էր, որ էջմիածնին գալով Հայրիկն ամեն կերպ կօժանդակի իր ծրագրի իրագործմանը: Հայրիկի գալստյան առթիվ նա գրում է: «Բարյալ որ դաս» երգը ճեմարանի վաղեմի

ուսուցիչ ալեգարդ Մկրտիչ Բալյանի խոսքերի վրա և մեծ հանդիսավորությամբ կատարում է Հայրիկի գալստյան օրը՝ թացի այդ նա իր խմբով կատարում է նաև բազմաթիվ այլ գվարթ ու ներդաշնակ երգեր, որոնց թվում «Առ Խրիմյան Հայրիկ» կանտատան՝ գրված Դաղարոս Աղայանի խոսքերի վրա:

Եթե Կարա-Մուրզան այդքան լավ դիմավորեց Հայրիկին, ապա վերջինս իր հերթին լավ վերաբերվեց նրան: Այդ երեւում է Կարա-Մուրզայի հետեւյալ խոսքերից.

«Հայրիկն ինձ լավ ընդունեց և երկու անգամ շնորհակալություն հայտնեց պատարագի արարողությունը՝ քառամայն լսելուց հետո: Այսօր ունեցած տեսակցություն (այսօնայի), խոսեցինք մի ժամկեց ամենի, նա հիշեց ինձ Պոլսից, լրագրերից և խմբովին ուղարկած հեռագրերից»:

Անցան աղմկալից հանդեսները և էջմիածնի կյանքում տիրեց նախկին խաղաղությունը: Կարա-Մուրզան առաջվան շարունակում էր իր ծրագրի կատարումը: Նա առավոտից մինչև ուշ գիշեր հանգիստ չուներ, բայց իրեն գցում էր շափաղանց երջանիկ, երբ տեսնում էր, որ իր փայտայած ծրագրին իրագործվում է արագ քայլերով: Նա համոզված էր, որ այդ ծրագրի իրագործումն ապահովված է, քանի որ կաթողիկոս էր գարձել Խրիմյան Հայրիկը՝ առաջադիմական պարտիայի թեկնածուն, որը հարգանք էր վայելում բոլորի կողմեց:

Սակայն ինչպես Կարա-Մուրզայի, այնպես էլ բոլոր առաջադիմականների հույսերը շատ շուտով ի դերև անցան: Թանն այն է, որ Խրիմյան Հայրիկը կաթողիկոս օծվելուց անմիջապես հետո միանգամայն փոխեց իր գաղափարական ուղղությունը, հարեց պահպանողական-կղերական պարտիային և սկսեց իրագործել այդ պարտիայի ծրագրը, որի առաջին քայլերից մեկն ուղղված էր Կարա-Մուրզայի դեմ: Ընդամենը մի քանի շաբաթ էր անցել նոր կաթողիկոսի օծման օրից, երբ քառաձայն երգեցողության թշնամիներն սկսեցին դավեր նյութել Կարա-Մուրզայի դեմ: Նրանք Հայ-

րիկին տեղեկացրին, որ Կարա-Մուրզան կաթողիկ է և խորի տարրեր է ներմուծում եկեղեցական երգեցողության մեջ, որ նա ամուսնացած է ոռու կնոջ հետ, այն էլ ոչ թե եկեղեցական, այլ քաղաքացիական ամուսնությամբ և որ նրա երեխաները մկրտված չեն, որ նա ծայրահեղ առաջադիմական է և իր քառաձայնով ալյավաղում է սուրբ մեղեդիները, որ մեծ խմբի մասնակցությունը թատրոնական տարր է ներմուծում պատարագի արարողության մեջ, որ ժողովուրդը գալիս է եկեղեցի ոչ թե աղոթելու, այլ նրա խմբի երգեցողությունը լսելու համար և ալյավիսով եկեղեցին վերածվում է ձրի համերգների մի գաճիճի և կորցնում է իր իսկական նըշշանակությունը և այն, և այն:

Այս տեղեկությունների հիման վրա կաթողիկոսը փոխում է իր կարծիքը Կարա-Մուրզայի մասին և որոշում է վերջ դնել նրա գործունեությանը ճեմարանում: Այս նպատակով նա իր մոտ է կանչում Կարա-Մուրզային և դիմում է նրան հետեւյալ խոսքերով.

«Դուն մեծ վարպետ ես, աղջին շատ օգտակար, քո ոկած գործն աղեկ գործ է, բայց ճեմարանի պատերը նեղ են քեզի համար: Քո գործը լայն ասպարեզ կպահանջի: Գնա, որդիս, դու ժողովրդի զավակ ես, ուստի ժողովրդի մեջ երգի ըստ երգը, այնտեղ դու ամելի հարկավոր ես. ի՞նչ պիտի անես հոս, վանքի պատերին մեջ»:

Կաթողիկոսի խոսքերը միանգամայն անսպասելի էին Կարա-Մուրզայի համար և մուրճի հարվածների նման իշնում են նրա գլխին: Լավ հասկանալով, որ միտք չունի կաթողիկոսի որոշման դեմ՝ հակածառելը, նա, այնուամենայնիվ, հարց է տալիս:

«Բայց իմ գործը՝ քառաձայն երգի տարածելը՝ հայերի մեջ, պահանջում է, որ այդ երգը լսվի նաև եկեղեցիներում: Կարո՞ղ եմ ես հուսալ, որ այսուհետև քառաձայնն այլևս չի հալածվի հայ եկեղեցու կողմից և որ եկեղեցու դռները բաց կլինեն ինձ համար»:

Կաթողիկոսը պատասխանում է: «Այո, որդյակս, դու

որ մայր եկեղեցում երգել են, պարզ է, որ այսուհետև ամեն եկեղեցում էլ պիտի երգես»:

Կաթողիկոսի այս պատասխանը մեծ հույսեր է ներշնչում Կարա-Մուրզային և նա իրեն միշտարում է այն ժողով, թե կարողանա իր գործը ծավալել ամբողջ Հայության մեջ։

Որո՞նք են Կարա-Մուրզայի հեռացման իսկական պատճաները։ Այս կապակցությամբ տարածված կարծիքներից մեկն այն է, որ իբր թի Կարա-Մուրզայի հեռացման պատճանը հանդիսացնել է նրա և Կոմիտասի միջև եղած ինտրիգան։ Այս տեսակետը միանգամայն սխալ է և հերքվում է ժամանակակիցների վկայություններով։ Որքան մեզ հայտնի է, Կարա-Մուրզայի և Կոմիտասի միջև գոյություն է ունեցել նորմալ ընկերական փոխարարերություն, թեև Կարա-Մուրզան նրանից մեծ էր տարիքով և հանդիսանում էր նրա ուսուցիչը։ Կարա-Մուրզան բարձր գնահատելով Կոմիտասի երաժշտական ընդունակությունները, նրա հետ պարագել է ժամանակակից նոտագրություն, դարձրել է իր խմբի մենարգիչը պատարագի ժամանակ և այն, իսկ Կոմիտասը փոխադարձար վերաբերել է նրան մեծ հարգանքով։ Այս մասին վկայում է Պետրոս Կարա-Մուրզան, որի հիշողություններում կարդում ենք։

Որքան ինձ հայտնի է, նրանց միջև (Կարա-Մուրզայի և Կոմիտասի. — Մ. Մ.) հարաբերությունները եղել են չափազանց բարեկամական։ Թրիստափոր Մակարովիշը Կոմիտասից շատ ավելի մեծ լինելով հանդիք, նրան վերաբերում էր ինչպես ընկերոջ հետ, գնահատելով նրա երաժշտական ընդունակությունները, օգնում էր նրան ելքոպական նոտագրության գործում և երբեք շեր կարող թույլ տալ իրեն որևէ անբարյացակամություն։ Կ կամ թե տանել որևէ առիտացիա Կոմիտասի դեմ։

Պատմելով Կոմիտասի հետ թերինում ունեցած իր հանդիպման մասին Պետրոս Կարա-Մուրզան գրում է.

«Այնուհետև մենք երկար խոսեցինք նրա հետ Թրիստափոր Մակարովիշի կատարած աշխատանքի մասին, և ուրա-

խություն իմ նա հայտնեց ամենազուանական կարծիքներ, որպէս հայկական երաժշտության պիոների գործունեության մասնանշելով նրա մշակման որոշ պրիմիտիվությունը»։

Այսպիսով տարածված այն կարծիքը, թե Կարա-Մուրզայի և Կոմիտասի միջև գոյություն է ունեցել որևէ ինտրիգա և որ դա է պատճառը դարձել Կարա-Մուրզայի հեռացմանը, միանգամայն զուրկ է հիմքից և իրականությանը չի համապատասխանում։

Կարա-Մուրզայի հեռացման իրական պատճառները բոլորովին այլ են։ Իջարկե այս գործում իրենց նշանակությունը ունեցան այն դրդապատճանները, որոնց մասին խոսվեց վերև, բայց նրա հեռացման ամենակարգությունը պատճառն այն էր, որ Կարա-Մուրզան, լինելով գեմոկրատական առաջադիմ հայացքների տեր մարդ, վճռականորեն պաշտպանում էր Շեմայրանի այն զասառուներին և ուսանողներին, որոնք պայքարում էին ռեակցիոն կղերականության կողմից ստեղծված անոտանելի ռեժիմի դիմ։ Իսկ այս հանգամանքը միանգամայն անհանդուրժելի էր ռեակցիոն կղերականության ներկայացուցիչների համար, և նրանք շտապեցին առաջին հերթին ազատինել այն «լուսանգավոր» մարդուց, որը մեծ ազդեցություն ուներ ուսանողության վրա։

Այսպիսով հակառակ իր հովաների ու սպասումների, ընդունենք մեկ տարի եղմիածնուած մնալուց հետո Կարա-Մուրզան ստիպված է լինում հեռանալ իր սիրած ու փայփայած գործից և կոկիծ սրբում խոստուվանել իր երազների խորտակությունը։

1893 թվի նոյեմբերին Կարա-Մուրզան Հրաժեշտ է տալիս Եջմիածնին։ Բաժմանման մոմենտը լինում է չափազանց սրտաշարժ, Շեմայրանի լսարաններից մեկում՝ հավաքվում են բոլոր աշակերտները, ուսանողները և դասատուների մեծ մասը, որպեսզի վերջին անգամ արտահայտեն իրենց բուռն սիրու և համակրանքի զգացմունքներն արվեստի այդ անխոնից մշակի նկատմամբ։ Նրանք հրաժեշտ են տալիս այն

ժարդում, որն իր վառվում ու անհանգիստ բնավորությամբ կենդանություն էր մտցրել ճեմարանի կյանքում: Ներկաներից մեկն արտասանում է իր գրած հրաժեշտի բանաստեղծությունը, որն ավարտվում էր հետեւյալ խոսքերով:

— Գնա՛ դու անվախ, անձնվեր երգիշ,
Փշոտ ուղիով, լի լեռկ քարերով.
Գնա՛ դու, մաքրիր խոպան սրտերը,
Շողզողուն արշալույս քեզ է սպասում:

Հրաժեշտի այս բանաստեղծությունը, որի մեջ արտահայտված էին Կարա-Մուրզայի նկատմամբ եղած սերն ու համակրանքը, մեծապես հուզում է ներկա դասնվողներին, և նրանք ուղեկցում են իրենց սիրելի ուսուցչին ճեմարանի պատերից գուրս, եղմիածնի փողոցներով: Երբ կառն անհայտանում է հեռվում, նրանք իրենց զգում են որրացած: Նրանց սրտերում դրանում է սուազին սպին:

Ճեմարանի ոեկտոր Արիստակիս եպիսկոպոս Սեպտակյանը, որպես հեռատես մարդ, հասկանում է, որ Կարա-Մուրզայի հեռացուածը ճեմարանից՝ սկիզբն է այն հալածանքների, որոնք ծրագրված էին կղերական-պահպանողական խափի կողմից ընտրեմ առաջադիմականների: Զապահելով այն օրվան, երբ կաթողիկոսն ինքը կկանչի նրան և կառաջարկի թողնել ոեկտորի պաշտոնը, Սեպտակյանը Կարա-Մուրզայի հրաժարականի հետ միասին կաթողիկոսին ներկայացնում է նաև իր հրաժարականը: Կաթողիկոսն առանց որևէ առարկության ազատում է նրան և դուցի իր սրտում նույնիսկ ուրախանում է, որ այդքան հեշտությամբ ազատվում է առաջադիմականների եղմիածնի խմբի ղեկավարից: Նրանից հետո ճեմարանից հեռացվում են բոլոր այն դասատունները, որոնք այս կամ այն շափով առաջադիմ հաւացքներ ունեին, և նրանց փոխարեն աշխատանքի են հրավիրում կղերական-պահպանողական պարտիայի ներկայացուցիչներին: Այդ փոփոխությունների հետեւյանքով ճեմարա-

նի ղեկավարությունն ամբողջապես անցնում է պահպանողականների ձեռքը և ճեմարանի ներսում ստեղծվում է անտանելի ոեժիմ: Հետևանքը լինում է այն, որ ճեմարանի սաներից մոտ 200 հոգի ապստամբությունն են քարձրացնում ճեմարանական Ընոր Կարգերի դեմ: Իրենց պահանջները ներկայացնելու համար ապստամբները ճեմարանի ոեկտորի մոտ են ուղարկում իրենց պատվամավորներին, որոնց մեջ լինում է նաև Կարա-Մուրզայի փոքր եղբայրը՝ Հովսեփը: Ճեմարանի ոեկտորը մերժում է նրանց պահանջները, և գործը հասնում է տուր ու դմիոցի: Հովսեփ Կարա-Մուրզան առաջին հարվածն է հասցնում ոեկտորին: Նրան հետևում են մյուսները: Իմանալով ոեկտորի բացատական պատստախանի մասին, ապստամբներն ավելի են հուզվում և արտահայտում իրենց զայրույթը: Նրանք հորինում են մի երգ, որն սկսվում էր «Առաջ խփեց Կարա-Մուրզան մեր տեսչի կըրծքին» խոսքերով և բարձրացնայն երգում են՝ գովելով Հովսեփ Կարա-Մուրզայի քաջագործությունը:

Վախիցած կղերականներն շտամպ օգնություն են իրանգությունի նահանգապահետից, որն անմիջապես ուղարկում է կազմակերի մի հեծելախումբ և զենքի ուժով կարողանում է ճնշել ճեմարանականների ըմբուծությունը:

Սկսվում են հալածանքներ ապստամբության մասնակիցների վեմ: Նրանցից 40—50 հոգի հեռացվում են ճեմարանից, ուղարկում են Երևան, որտեղ նրանք ստանում են նահանգապահետի հրամանը՝ 24 ժամվա ընթացքում հեռանալ Հայաստանի սահմաններից: Նրանք մեկնեցին Թիֆլիս և դիմեցին իրենց ուսուցչի՝ Կարա-Մուրզայի օգնությանը: Վերցինս հատուկ համերգ կազմակերպեց և գոյացած գումարը հաօտկացրեց ճեմարանից հեռացված սաների օգտին:

Ուսանողական այս ըմբուծությունը տեղի ունեցավ 1894 թվի սկզբներին և նրա ճնշումով ավարտվեց առաջադիմականների ու հետադիմականների պայքարն եղմիածնում: Հաղթանակած կղերական-պահպանությունն սկսում է ուժեղ հալածանք քառածայն երգեցողության դեմ, և նույն 1894

թվին Երևանի թեմական տեսուչ Կյուրեղ Եպիսկոպոս Արագածուանցն իր մի շրջաբերականում, ուղղված դպրոցների վարչություններին, կատենդորիկ կերպով արդելում է քառաձայն երդուրի տարածումը դպրոցներում, պատճառավանելով, որ տառափածը մեկ է, երգն էլ միաձայն պետք է լինի: Հետաղիմական այս տեսակիտն էջմիածնի պաշտոնական տեսակետն էր, և նրանով առաջնորդվելով ամենուրեք ծավալվում էր պայքար՝ քառաձայն երգեցողությունը հայկական եկեղեցի ներմուծելու բոլոր փորձերի գեմ: Եվ քանի որ գործի նախաձեռնութը Կարա-Մուրզան էր, ապա ամենից շատ էլ նրա մեջ էր ուղղված այդ պայքարը: Պատկերն ամբողջացնելու համար հիշենք Կարա-Մուրզայի այն բոլոր փորձերը, որոնք կազմած էին քառաձայն երգը հայկական եկեղեցի ներմուծելու հետ:

Խշպես վերեն ասվեց, քառաձայն պատարագը Կարա-Մուրզայի խմբի կողմից տուաշին անդամ կատարվեց Բաքվում 1887 թվին և արժանացավ հավանության: Այնուհետև 1890 թվին, երրորդ Կարա-Մուրզան պատրաստվում էր կրկնել քառաձայն պատարագի կատարումը, տեղի է ունենում մի անտակալ դեպք, որը վճռական նշանակություն է ունենում գործի համար: Բարու է գովիս Շամախու հոգեվոր թիմի առջնորդ Մերությ և միակողութ Սմբաթյանը և տեղեկանազով քառաձայն պատարագի մասին, ցանկություն է հայտնում լսել այս Բայց եկեղեցում կատարվելուց տուաշ նա ցանկանում է լսել պատարագի կոորդինը եկեղեցուց դուրս: Այդ նպատակով նա քահանաների ուղեկցությամբ գալիս է թեժական դպրոցը և ներկա է լինում խմբի գլխավոր փորձին: Եղանակը կատարում է մի շաբթ աշխարհիկ երդեր և մի քանի կտոր պատարագից: Ներկաները հավանում են կատարումը, Բայց թիմական առաջնորդը ցանկություն է հայտնում լսել նաև խմբի միաձայն կատարումը: Կարա-Մուրզան ընդուռ-շենք այդ ցանկությանը, առաջարկում է միևնույն կտորը նույն լսել քառաձայն, ապա միաձայն, որպեսզի Թարածարքի թիմի համեմատել միաժամց հետ: Այդպես էլ անում են

Խռմբը նախ երգում է քառաձայն «Տեր ողորմյա»: Մեծ խըմբի ներդաշնակ երգեցողությունը լավ տպավորություն է գործում առաջնորդի վրա և նա գովասանքով է խոսում կատարման մասին: Խռմբը սկսում է միմնույն «Տեր ողորմյան» երգել միաձայն: Դեռ երգը շավարտած առաջնորդը հոգված բացագանցում է: «Աս ավելի լավ է»: Այս խոսքերի վրա խմբի երգինսերից ոմանք այնքան բարձր են ծիծաղում, որ հասնում է առաջնորդին, և նա վիրավորվում է:

Կարա-Մուրզան թեև հոգվում է առաջնորդի նման վերաբերմունքից, բայց իրեն զսպելով սաստում է երգիչներին ու կարգի հրավիրում: Հետո իր ձեռքը վերցնելով շորս մոմի մոմակալը, նա մոտեցնում է առաջնորդին և հարցնում, թե արդյոք բավարար է նրա համար լուսավորությունը, նրանից ստանալով դրական պատասխան, նա հանգսնում է երգի մոմը՝ թողնելով մեկը և իրոնիայով դարձյալ հարցնում է, թե նրա համար լուսավորությունն ուժեղ էր շորս մոմից թե՝ մեկի ժամանակի:

Կարա-Մուրզայի այս ծաղրանքն ուժեղ կիրապով վիրավորում է առաջնորդին և նա վերցնելով իր ուղեկիցներին, ներկա գտնվողների խլացոցիւ ծիծաղի տակի հեռանում է գաճաճից: Կազմելով իր բացասական կարծիքը Կարա-Մուրզայի և նրա քառաձայնի նկատմամբ, նա հրամայում է այլևս ոտք չդնել եկեղեցի: Նա զեկուցում է էջմիածին Կարա-Մուրզայի քառաձայն պատարագի մասին, որի մեջ, ըստ նրա կարծիքի, լսվում են օճառամբ ոռուաց եկեղեցու, մասամբ էլ կաթողիկաց եկեղեցու երգեցողության տարրերը» և, հետևապես, անդունունելի է հայ լուսավորչական եկեղեցու համար: Էջմիածինը կազմում է իր տեսակենուն այս հարցում և Բաքվի հայ հասարակության ներկայացուցիչների հետագա դիմումները քառաձայն պատարագի կատարման թույլտվությունն ստանալու վիրաբերյալ, մնում են անպատճառին:

Զնայած այդ արգելքին Կարա-Մուրզային հաջողվում է, նույն 1890 թվին Աստրախանում և 1891 թվին Պետրովսկում

(Մախալ-Կալա) կատարել քառաձայն պատարագի հատվածները:

Այնուհետև էջմիածնում եղած ժամանակ Կարա-Մուրզան մեծ հաջողությամբ կատարում է քառաձայն պատարագը մայր տաճարում և արժանանում է կաթողիկոս Խրիմյանի շնորհակալությանը: Իսկ երբ Խրիմյանը նրան հեռացրեց ճեմարանից, նա հաստատ համոզված էր, որ ոչ մի արգելված չէր կարող լինել քառաձայն պատարագի կատարման ժամապարհին: Նա համոզված էր, որ Խրիմյանը հաստատ կմնա իր խոսքին: Այս է պատճառը, որ նա 1894 թվին հրավեր ստանալով Նոր-Նախիջևանի հայության կողմից՝ գալ և խմբեր կազմակերպել հայկական եկեղեցիների համար, անմիջապես համաձայնում և մեկնում է այնտեղ: Սակայն տեղում առաջանում են տարածայնություններ, որովհետև ծխականներից ոմանք բողոքում են եկեղեցական երգեցիկ խմբի կազմակերպման գործը էջմիածնի ճեմարանից ուղնդված Կարա-Մուրզային հանձնարարելու դեմ: Երբ այդ մասին հայտնում են Կարա-Մուրզային, նա խորհուրդ է տալիս դիմել էջմիածնի՝ թուլավություն ստանալու համար: Հետևելով նրա խորհրդին երեցփոխները գիմում են էջմիածնի: Նրանց տուաշին հեռագիրը բոլորովին մնում է անպատճանական, իսկ երկրորդ հեռագրին պատասխանում է կաթողիկոսի գրասենյակի վարիչ Խորեն եպիսկոպոս Ստեփանին: Նա հայտնում է, որ եկեղեցական խմբերի կազմակերպման գործը Կարա-Մուրզային հանձնարարելը կաթողիկոսը գտնում է անհարմար:

Որքա՞ն մեծ եղավ Կարա-Մուրզայի զարմանքն ու զայրութը, երբ նա ծանոթացավ այդ պատասխանի հետ և իմացավ, որ կաթողիկոսը դրժել է իր խոստումը և իր խոսքերին հակառակ արգելում է նրան եկեղեցական խմբեր կազմակերպել և քառաձայն պատարագը կատարել: Բոլորովին փոխելով իր կարծիքը կաթողիկոսի մասին նա դեն է գցում իր գըրած և կաթողիկոսին նվիրած «Թարյակ» որ գառա կանտատայի խոսքերը և այնուհետև իր համերգների ընթացքում այդ կան-

տատան կատարվում է Ամբաթ Շահագիկի «Ազնիվ ընկեր, մեռանում եմ» հայտնի բանաստեղծության խոսքերով:

Այս գեղգերից հետո Կարա-Մուրզան վճռում է ամբողջապես նվիրվել աշխարհիկ երաժշտության պրոպագանդային, սակայն եկեղեցին, որպես բազմամարդ լսարան քառաձայն երգեցողության տարածման համար, այնուամենայնիվ կրթեր դուրս չի գալիս նրա մտքից: Այդ պատճառով էլ նա ոչ մի առիթ բաց չի թողնում իր նպատակին հասնելու համար: Մի այլ փորձ Կարա-Մուրզայի կողմից տեղի է ունենում 1896 թվին Բարիում, բայց այս անգամ էլ կաթողիկոս Խրիմյանի ստորագրությամբ ստացվում է բացասական պատասխան, և Կարա-Մուրզան իբրև կաթոլիկ ու Ճեմարանից հեռացված գրկում է իր պատրաստած երգեցիկ խումբը զեկավարելու իրավունքից: Իր փոխարեն Կարա-Մուրզան առաջ է քաշում իր եղբոր՝ Պետրոս Կարա-Մուրզայի թեկնածությունը, թեև նա էլ էր կաթոլիկ: Հոգևորականության համաձայնությունն ստանալով Պետրոս Կարա-Մուրզան անցնում է գործի և 10-օրյա պարապմունքներից հետո (որոնց ներկա էր լինում Քրիստոնության Մակարովիշը և օգնում իր ցուցումներով) զատկական տոներին նա հանդես է գալիս քառաձայն պատարագի կատարմամբ:

Այսպիսով, հակառակ Կարա-Մուրզայի անընդհատ ջանքերի, պահպանողական հոգևորականությունն էջմիածնի գործիությունը ամեն կերպ աշխատում էր խոշնդրություններ հարուցել Կարա-Մուրզայի ճանապարհին և զրկել նրան քառաձայն երգեցողությունը հայկական եկեղեցի ներմուծելու հնարավորությունից: Միայն հետագայում, իր կյանքի վերջին տարիներին, երբ նա աշխատում էր Թիֆլիսում, նրան հաջողվեց առանց որևէ խոշնդրությունի կազմակերպել եկեղեցական խմբեր և զեկավարել քառաձայն պատարագի կատարմամբ: Այդ մասին մենք կպատմենք իր ժամանակին, իսկ այժմ դպնանք այն հարցին, թե ինչո՞վ զբաղվեց Կարա-Մուրզան էջմիածնի ճեմարանից հեռացվելուց հետո:

7. ԵՐԱԾՏԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՎԵՐՁԻՆ ՇՐՋԱՆԲ

1893 թվի նոյեմբերի 8-ին, դեռ էջմիածնում գտնված ժամանակ, Կարա-Մուրզան «Մշակի» խմբագրությանը գրում է մի նամակ, որի մեջ բաց է անում իր սիրան ընթերցող հասարակության առջև՝ ափսոսալով իր ծրագրի անկատար մնալու փաստը:

Ահա այդ նամակը.

«Ափսո՞ս իմ ծրագիր, ափսո՞ս իմ նպատակ, մտադրություն... նրանք որտե՞ղ պետք է իրագործվեն՝ հայտնի չէ, Այս բոպեիս գոնե խորտակված նավակի նման ծփում են կատաղի ալիքների մեջ. ո՞ր ափին պիտի մոտենան արդյոք..»

Ի՞նչ հույսերով եկա էջմիածին և ի՞նչպես, գրեթե ոչինչ չկատարած, ետ եմ գառնում: Երկու տարի ես և իմ ծրագիրն իր վահրճանին հասած կլիներ...

Մեր ազգը գնալով զարգանում է, նրան պետք է զարդացնել երաժշտությամբ, դրա համար մեծ բաների դիմել առաջմ չենք կարող, բայց դա չի նշանակում, որ փոքր բանի էլ ձեռք չպարզենք: Փոքր միջոցներով ազգը կարող ենք զարդացնել երաժշտության մեջ, դիցուք, մի քիչ, իսկ մեծ բաների սպասելով և ոչինչ շանելով չենք զարդացնում բոլորովին: Իշարկե լավ է մի քիչ, քան ոչինչ: Ինձ հաջողվել է մեր երգերը արծարելու համար ձեռք բերել մի փոքր միջոց, այն է, ուր գնամ, մի փոքր խոսք կազմել, մի քիչ պարապել, մի բանի երգ սովորեցնել և բեմից ժողովրդին ցուցադրել: Լավ կլիներ ուրիշները մեծ միջոցներով անեին այդ, բայց չեն առում:»

Ես շարունակում եմ իմ գտած միջոցով գործ տեսնել, գործի գրությունը և ծավալը կարելի է մնա դեռ շատ ժամանակ մի տասնյակ տարի ես միևնույնը, բայց հոգ չէ, ըստ իս, առ ի չգոյն, այդ էլ առ այժմ բավական է, ինչպես փորձերը ցուց են տալիս: Հարկավոր է միայն խմբերի թիվն ավելացնել: Գևորգյան ճեմարանում գերապատիվ Արիստակես

Էպիսկոպոս Սեդրակյանն իմ ծրագիրն ընդունեց, երեք տարվա ընթացքում առաջին անգամ կարող էին գուրս գալ մոտ 40—50 հոգի ընտիր երգեցողության ուսուցիչներ և խմբավարներ, ոչ այնպիսի ձայնագրագետներ, որ մինչև այժմ կան, այլ տեսակնապես և գործնականապես քիչ թե շատ երաժշտություն հասկացողներ՝ գոնե այն չափով, որ կարողանալին ուսումնարաններում սովորեցնել երկձայն երգեր, եկեղեցիների համար՝ քառաձայն պատարագ և փոքրիկ ծավալով համերգների համար կազմել բեմական խմբեր: Այժմ ես մենակ կարողանում եմ ամենաշատը տարին երեք կամ չորս խոսք պատրաստել, երբեմն պակաս, իսկ եթե դիցուք 50 խմբավարներ էլ լինեին, նրանք էլ յուրաքանչյուրը տարեկան մի-մի խոսք կազմեին, կավելանար տարին 50 խոսք ևս Տարբերությունը մեծ է, երկրորդ, երրորդ տարին կրազմանալին ավելի ու ավելի:

Հազիվ սկսել էինք կանոնավոր քառաձայն երգեցողությամբ պարապել ճեմարանում, հենց երկրորդ տարվա սկզբում ինձ հեռացրին և էլի մտցրին հին արևելյան ոնդային ճնշող միաձայն երգեցողությունը և աննպատակահարմար դասերը... Դրա համար ասում եմ՝ արդյոք ո՞րեղեղ կիրագործի իմ ծրագիրը... Մտադիր եմ իհարկե այս տարի գնալ զանազան տեղեր և թափառել ինչպես բախտը կբերի» («Մշակ» 1895 թ. նոյեմբերի 16, № 8):

Հոգեկան ծանր ապրումներով Կարա-Մուրզան թողնում է էջմիածինը և ուղղություն Թիֆլիս՝ հաստատ վճռելով ամրուցապես նվիրվել համերգային գործունեությանը, շրջել Կովկասի և հարավային Ռուսաստանի հայաբնակ քաղաքները, ամենուրեք կազմակերպել երգեցիկ խմբեր և տարածել քառաձայն երգը: Նա փաստորեն վերագանում է այն գործունեությանը, որն սկսված էր 1891 թվին: Նա իր համերգային գործունեությամբ հետզհետե ընդգրկում է հայշատ այն քաղաքները, որտեղ դեռ չել եղել ինքը:

Նշանավոր են նրա այն համերգները, որոնք տեղի են ունենում Շուշիում 1894 թվին: Այդտեղ նա դերասան Հովհան-

նես Արելյանի հետ միասին ներկայացնում է նաև Գալֆայա-նի «Արշակ Բ.» ողբերգությունը, իր խմբով կատարելով խըմ-բական երգերը ներկայացման ընթացքում: Իր համերգները հաջողությամբ ավարտելուց հետո նա անցնում է Վրաստան, որտեղ նա աշխատանք է ծավալում վրացախոս հայերի մեջ երգեցիկ խմբեր կազմակերպելով: Այնպիսի քաղաքներ, ինչ-պիսիք են Գորին, Բորժոմը, Բաթումը, Արդվինը, Արտամուշը, Արդաշանը և այլ քաղաքներ, առաջին անգամ ունկնդրում են հայկական քառաձայն երգեր:

Վրաստանից նա անցնում է Գանձակ (Ելիզավետպոլ, այժմ Կիրովաբադ), կազմակերպում է երգեցիկ խումբ և տա-էս համերգ, իսկ 1895 թվի փետրվարին վերադառնում է Բա-քու, որտեղ մարտի 25-ին կազմակերպում է իր համերգային գործունեության 10-ամյակը: Նա Բաքվի հայ հասարակու-թյանը ներկայացնում է իր հաշվետվությունը: Մի թիրթիկի վրա, որը գտնվում է Կարա-Մուրզայի անձնական արխիվում, հեղինակի ձեռքով հայերեն և ոռուերեն գրված է. «10 տար-վա ընթացքում (1885—1895) 16 քաղաքներում կազմակերպ-ված է 22 երգեցիկ խումբ և տրված է 94 համերգ»: Իրակա-նում նա շատ ավելի մեծ թվով երգեցիկ խմբեր է կազմակեր-պել այդ տարիներին: Այդ է ապացուցում մեր կազմած ժա-մանակագրական տախտակը: Թեև նա 10 տարուց 8 տարին հիմնականում անց է կացրել Բաքվում, այնուամենայնիվ կազմակերպել է բազմաթիվ երգեցիկ խմբեր և այդ բնագա-վառում կուտակելով հարուստ փորձ, հետագա տարիների ընթացքում հասնում է ավելի մեծ արդյունքների:

Կատարելով իր համերգային գործունեության 10-ամյա-կը նա նյութական օգնություն ստանալու որևէ ակնկալություն չուներ: Նա միայն ցանկանում էր ամփոփել իր գործունեու-թյան արդյունքները և զրանով իսկ ստեղծել հասարակական կարծիք իր գործի շուրջը: Եվ նա հասնում է իր նպատակին: Հայ հասարակությունը գովասանքով է խոսում նրա գործու-նեության մասին և խրախուսում է նրան անխոնչ՝ կերպով

շարունակել սկսած գործը: Եվ նա իսկապես նոր եռանդը գործի է անցնում:

1895 թվի ապրիլի 29-ին նա բեմադրում է Գալֆայանի «Արշակ Բ.» ողբերգությունը: Բեմադրությանը մասնակցում են ամուսիններ Սաֆրավյանները, Ավալյանը և Ավետիսյանը: Երգեցիկ խումբը և նվազախումբը ղեկավարում է Կարա-Մուր-զան: Սա մի փորձ էր հայերեն լեզվով ինքնուրույն երաժշ-տականացված դրամայի բեմադրության ուղղությամբ: Ճիշտ է, ողբերգության միայն առաջին գործողությունն էր լրիվ կերպով երաժշտականացված, իսկ մյուս գործողություննե-րում կային միայն առանձին երաժշտական համարներ, այ-նուամենայնիվ, իբրև առաջին փորձ կովկասահայ իրակա-նության մեջ երաժշտական դրամայի բեմադրման ուղղու-թյամբ նա ունի պատմական խողոր նշանակություն:

Բաքվի հանդիսատես հասարակության վրա այս ողբեր-գության բեմադրությունը լավ տպավորություն է գործում և այդ պատճառով էլ նույն թվի մայիսի 14-ին ներկայացվում է երկրորդ անգամ:

Այս շրջանում Կարա-Մուրզան գրում է «Ո՞վ է երշա-նիկ», վերնագրով ֆանտաստիկ մի կոմեդիա երեք գործովու-թյամբ: Այս կոմեդիայի համար նա գրում է նաև երաժշտու-թյուն, բայց դժբախտաբար ոչ կոմեդիան և ոչ էլ նրա երա-ժշտական մեջ չեն հասել և այդ պատճառով էլ դժվար է նրա մասին որևէ բան ասել:

Ամառվա ամիսներին նա շարունակում է իր համերգային շրջագայությունները Կովկասի վրացախոս քաղաքներում (Թիելավ, Սղնախ, Զաքաթալա), ապա անցնում է Հյու-սիսյան Կովկաս, ընդգրկելով այնպիսի քաղաքներ, ինչպի-սիք են Ղզլար, Վլադիկավկազ*, Սրմավիր, Եկատերինողար**, Ստավրոպոլ և այլն: Ամենուրեք կազմակերպելով 40—70 հո-գուց բաղկացած երգեցիկ խմբեր նա տալիս է հայկական քառաձայն երգի համերգներ՝ պատճառելով զեղարվեստական

* Ներկա Զարուցիկառ:

** Ներկա Կրամնողարը:

քավականություն ոչ միայն հայ, այլև ալլազգի ունկնդիմներին: Այդ մասին վկայում է «Կապըեկ» լրագրի թղթակիցը, որի հոդվածում կարդում ենք.

«Պետք է խոստովանել, որ մենք առանձին կասկածանքով մտանք թատրոն, որտեղ սպասում էինք լսել եվրոպացու հոգուն քիչ բան խոստացող, արևելյան միակերպ մի երաժշտություն, բայց որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ մեր առաջ տեսանք 70 հոգուց՝ երեխաներից, պատանիներից, կանանցից և տղամարդկանցից կազմված, խիստ ջոկողությամբ, լսվ պատրաստված նորը ձայներով մի կանոնավոր խոսմբ: Համերգը տրվեց խրոխտ, և երաժշտական ֆորտ քառօ-ն զարմացրին մեզ իրենց հնչումով, նրբությամբ և բազմաթիվ ունկնդիմներին մեծ հրճվանք պատճառեցին: Համարյա բոլոր երգերն էլ մի քանի անգամ կրկնվեցին» («Հազեր» 1896 թ., № 70):

1897 թվին Կարա-Մուրզան անցնում է Ղրիմ, խմբեր է կազմակերպում և համերգներ տալիս Ղարասու-Բաղարում, Մելիխովում, Ելպատորիայում, Հին Ղրիմում, Թեոդոսիում, Կերչում և Սիմֆերոպոլում:

Սիմֆերոպոլում գտնված ժամանակ, երբ նրա խոսմբն արդեն պատրաստ էր համերգին, նահանգապետն արդելում է նրա համերգը, պատճառաբանելով, որ նրա ծրագրի երգերը թույլատրված պիեսների և երգերի ցանկում չկան: Կարա-Մուրզան ցուց է տալիս կովկասյան գրաքննության կողմից թույլատրված երգերի տետրը, բայց նահանգապետը մնում է անդրդիմիլի: Կարա-Մուրզան ընդհատելով իր աշխատանքը մեկնում է Պետերբուրգ, դիմում է ներքին գործերի մինիստրությանը և ստանալով անհրաժեշտ թույլտվությունը, հաղթանակով վերադառնում է Սիմֆերոպոլ: Մինչև նրա վերադր, հակառակորդները տարածում են զանազան հերյուրանքներ, նրան անվանելով բախտախնդիր, խաբերա և այլն թայց երբ նա վերադառնում է Սիմֆերոպոլ և մեծ հաջողությամբ տալիս է իր համերգը, չար լեզուները պապանձլում

են, իսկ համակրողները մեծապես հրճվում են նրա հաղթանակով:

Ղրիմից Կարա-Մուրզան անցնում է Օդեսա, Գրիգորիովու, Ակկերման, Քիշինև ու այլ քաղաքներ՝ ամենուրեք կազմակերպելով նոր խմբեր և հաջողությամբ տալով իր համերգները: Այստեղ նա ձայնագրում, քառաձայնում և համերգների ընթացքում կատարում է նոր, այդ թվում նաև ուկրաինական և ռուսական ժողովրդական երգեր:

1898 թվին Կարա-Մուրզան կրկին վերադառնում է Կովկաս, շարունակելով իր համերգային շրջադաշտությունը գլխավորապես այն քաղաքներում, որտեղ ինքը դեռ չէր եղել: Այդ քաղաքների թվին են պատկանում Ղարաբիլսա*, Ղարս, Սարիղամիշ և արիշները: Այսպիսով նա փաստորեն լինում է այն բոլոր քաղաքներում, որտեղ քիչ թե շատ հայ ազգաբնակություն կար և ամենուրեք կատարում է միևնույն շնորհակալ աշխատանքը:

1898 թվի վերջերին Կարա-Մուրզան մեկնում է Մոսկվա, չուպատակ ունենալով ավելի երկար մնալ այստեղ և լայնորեն ձավալել իր գործունեությունը: Ամենից առաջ նա ցանկանում էր շարունակել, ավարտել և բեմադրել իր սիրած «Նուշան» օպերան: Սա շափագանց կարենոր աշխատանք էր և այդ պատճառով էլ նա ցանկանում էր ամենայն լրջությամբ լծվել աշխատանքի: Դրան զուղընթաց Մոսկվայի հայ ուսանողներից նա կազմակերպում է ուսանողական երգեցիկ խումբ և սկսում է պատրաստվել համերգի: Սակայն տեղի ունեցած մի միջադեպ խանգարում է Կարա-Մուրզային իրագործելու իր ցանկությունները:

Մի քանի խոսք այդ միջադեպի մասին: Հայտնի է, որ 90-ական թվականների վերջերին բանվորական ունուցիչներ շարժմանը զուղընթաց նույսաստանի խոշոր քաղաքներում ծավալվում և խորանում է նաև ուսանողական ունուցիչներ շարժումը, որին մասնակցում էր իր հայրենիքի ազատագրությամբ, որին մասնակցում էր իր հայրենիքի ազատագրությամբ:

* Ներկա՝ Կիրովականը:

մանը ձգողով հայ (Հատկապես լազարյան ճեմարանի) ուսանողությունը: Երբ Կարա-Մուրզան կազմակերպում է իր երգեցիկ խոռոքը, նրա կազմի մեջ մտնում են նաև այդ ուղղություն շարժմանը մասնակցող հայ ուսանողները: Յարական կառավարության հետապնդումների շնորհիվ նրանք ստիպված էին դիմել զանազան խորամանկ միջոցների, որպեսզի կարողացին քողարկել իրենց ժողովները: Այս է պատճառը, որ հայ ուղղություն ուսանողներից ոմանք շատ նպատակահարմար են համարում իրենց գաղտնի ուսանողական ժողովը քողարկել երգեցիկ խմբի պարապմունքներից մեկով: Եվ այս նրանցից մի քանիսը դիմելով Կարա-Մուրզային խնդրում են թույլ տալ այդ գործը կազմակերպել: Կարա-Մուրզան համաձայնում է: Ժողովը տեղի է ունենում, բայց ըստ երեխութիւն ուսանողների շարքերում լինում են լրտեսներ, որոնք շուտափութ կերպով այդ մասին տեղեկացնում են ժանդարմերիային: Գործը բացվում է: Ժողովի ժամանակ ներխուժում են ոստիկանները և ձերբակալում ուսանողներից շատերին: Ձերբակալվում և բանտարկվում է նաև Կարա-Մուրզան: Միքանի շաբաթ ցարական բանտում նստելուց հետո Կարա-Մուրզան ազատ է արձակվում, բայց ստացվում է Մոսկվայի իշխանությունների կտրուկ հրամանը՝ 48 ժամվա ընթացքում թողնել Մոսկվան և մեկնել Պետրովսկ (Մախաչ-Կալա): Կասկած էր ծագել, որ Կարա-Մուրզան իր շրջագայությունների ընթացքում զբաղված էր ոչ թե համերգային գործունեությամբ, այլ ուղղություն-պրոպագանդիստական աշխատանքով՝ ուղղված ցարական կարգերի դեմ:

Այսպիսով, «Շուշան» օպերայի ավարտման և բեմադրումն հետ Կարա-Մուրզայի կապած Հովսերը շեն իրագործվում: Նա ստիպված է լինում վերցնել իր ընտանիքը և 1899 թվի գարնանը հապճեալ կերպով մեկնել Պետրովսկ: Ճանապարհին նա կորցնում է իր բոլոր իրերն ու ձեռագրերը, ուղոնց թվում նաև «Շուշան» օպերայի առաջին գործողության պատրաստի պարտիտուրան:

Պետրովսկում նրա համար ստեղծվում է նյութական

ժամանքական կուսակցություն են սահմանական նրա վրա և թույլ չեն տալիս մեկնել Անդրկովկաս: Նա թեև փորձում է անցնել Բաքու, բայց նրան անմիջապես վերադարձնում են իր աքսորատեղին՝ Պետրովսկ: Եվ միայն մի քանի տարվա շարչաբանքներից ու անընդհատ դիմումներից հետո նրան թույլատրվում է փոխադրվել Թիֆլիս:

Այս անգամ Կարա-Մուրզան որոշում է Թիֆլիսը դարձնել իր գործունեության հիմնական վայրը և վարել համեմատաբար նստակյաց կյանք: Ասում ենք համեմատաբար, որովհետեւ նա, թեև ավելի հազվադեպ, այնուամենայնիվ դարձյալ սովորություններ է կատարում զեպի զանազան քաղաքներ համերգներ տալու նպատակով:

Թիֆլիսում նա ամենից առաջ երաժշտության ուսուցչի պաշտոն է ստանում առևտրական դպրոցում և իր պարապմունքներով մեծ աշխատություն է մտցնում այդ դպրոցի կյանքում: Նրա այս շրջանի գործունեության համար ամենակարևորը հանդիսանում է այն, որ նա ավելի սերտ կերպով է կապվում մշշակը թերթի հետ, գառնում է նրա երաժշտական թղթակիցը, գրում է ուղենգիսիներ օպերալին ներկայացումների և համերգների մասին և հոգվածներ երաժշտական զանազան հարցերի շուրջը: Նրա հոգվածներից մի քանիսը տպագրվում են «Մուրճ» ամսագրի 1901 թվի համարներում («Զուգեպիկի Վերդի», «Արևելյան տարրը եվրոպական երաժշտության մեջ» և այլն): Այս տարիներին գրսերվում է Կարա-Մուրզայի երաժշտագիտական աշխատանքը, որն ունի շատ կարևոր նշանակություն և որի վրա կանոնական առանձին:

Կարա-Մուրզան այստեղ շարունակում է նաև իր խմբավարական աշխատանքը: Ամենից առաջ նա կազմակերպում է իր մշտական քառական երգեցիկ խումբը և երբեմն երեմն համերգներ է տալիս: Բացի այս նրան հանձնարարվում է նաև Թիֆլիսի հայկական երկու եկեղեցիների քառական խմբերի զեկավարությունը: Այսպիսով նա վերջին անգամ մոտենում է եկեղեցուն, բայց այս անգամ առանց որևէ ար-


գելքի: Դա հետևանք էր այն փոփոխությունների, որոնք տեղի էին ունեցել վերջին տարիներին: Մակար Եկմալյանն ավարտել էր Պետերբուրգի Կոնսերվատորիան, իրը և դիպլոմային աշխատանք ներկայացնելով եռաձայն և քառաձայն «Պատարագ», որն արժանացել էր բոլորի հավանությանը, տպագրվել էր Լայպցիգում և պաշտոնապես ընդունվել Եջմիածնի Կողմից: Այսպիսով կշմիածինը փաստորեն ընդունվել էր քառաձայնի գաղափարը և վերջ էր տվել «աստված մեկ է, ձայնն էլ մեկ պետք է լինի» ուհակցիոն տեսակետին: Բացի այդ, Եջմիածինը թույլ էր տվել Կոմիտասին մեկնել Բեյլին՝ բարձրագույն երաժշտական կրթություն ձեռք բերելու համար:

Այս բոլորի հետևանքով փոխվել էր Եջմիածնի վերաբերմունքը երաժշտական նոր նվաճումների նկատմամբ և քառաձայն երգեցողությունն օրինականացվել էր եկեղեցում: Հենց այս է պատճառը, որ Կարա-Մուրզան այս անգամ առանց խոշոնդոտի կազմակերպում է եկեղեցական խմբեր և կատարում քառաձայն պատարագը:

Կարա-Մուրզան, ծանոթանալով Եկմալյանի «Պատարագի» հետ, գտնում է, որ այն անհամեմատ ավելի հաջող է, քան իր քառաձայնումը: Ելնելով դրանից նա հրապարակայնորեն (մամուկի միջոցով) արգելում է իր քառաձայն պատարագի կատարումը և հանձնարարում է Եկմալյանի «Պատարագը»: Բացի այդ նա հանձն է առնում իր խմբով նույնպես կատարել այն: Շատ կարճ ժամանակամիջոցում սովորեցնելով իր խմբին, նա այս «Պատարագը» կատարում է եկեղեցում հեղինակի ներկայությամբ: Պատարագից հետո Եկմալյանը շնորհակալություն է հայտնում Կարա-Մուրզային և հայտարարում է, որ ինքը վերջապես լսեց պատարագի այնպիսի կատարում, որպիսին իրեն չեր հաջողվել, բայց որին ինքը ձգտում էր:

Նախանձի փոխարեն փոխադարձ ըմբռնողություն և կատարված գործի իսկական գնահատումն՝ ահա շափականց ուսանելի այս փաստի իսկական էությունը:

Իր կյանքի վերջին տարիների ընթացքում նա առանձնա-



Հենց այս Կարա-Մուրզանը կատարում է իր գործը՝ իր խմբում (Փաթեթ 1901 թվականի բուհական պատճենաթուղթի լուսապատճենության ժամանակ).

կի ուշադրություն է դարձնում խմբավարական կաղըերի պատրաստման վրա: Եթե մինչ այդ նա այդ կարևոր գործով զբաղվել էր էպիզոդիկ ձևով, դեպքից դեպք, ապա այժմ նա առանձին հոգատարությամբ է զբաղվում այդ խնդրով: Այս նպատակով նա կազմակերպում է խմբավարական հատուկ դասընթացներ, ամեն կերպ զբութացնելով ընդունվողների կողմից ուսման վարձը վճարելու գործը: Նրա այս դասընթացներում սովորել են այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են Ազատ Մանուկյանը, Մտեփան Դեմորյանը և ուժիշները:

Ամառիւա ամիսներին նա դարձրալ համերգային 2րժակայություններ է կատարում գեղի Կաղզիսա*, Գանձակ**, Շուշի, Շամախի և այլ քաղաքներ: Ամենուրեքնաց Համերգներ է տալիս տեղում կազմակերպված երգեցիկ խորբագիր և թողնում է անջնջելի տպավորություն ունկնդիր հայրակության վրա:

1900 թվի Փարիզի միջազգային ցուցահանդեսը դարձյալ հանդիսատ չի տալիս Կարա-Մուրզային: Երրորդ անգամ նա փորձում է իր խմբով մասնակցել միջազգային ցուցահանդեսին և երրորդ անգամ այս գործը ձախողվում է շնորհիվ նյութական միջոցների բացակայության: Նրան առաջարկում են 10000 ռուբլի դրամագլուխ, սակայն այնպիսի անձեռնորոգայմաններով, որ նա ստիպված է լինում հրաժարվել այդպիսի պարտքից:

Եթե նրան չի հաջողվում մասնակցել Փարիզի ցուցահանդեսին, ապա նա լիակատար հաջողությամբ մասնակցում է Կովկասյան ցուցահանդեսին, որը բացվում է 1901 թվի աշնանը՝ Վրաստանը Ռուսաստանին միակցելու 100-ամյակի կապակցությամբ: Ազգային տարազ հագած նրա խումբը մի ամիս շարունակ ելույթներ է ունենում ցուցահանդեսում: Երգում է զուտ ժողովրդական երգեր և պարերգեր՝ պատճառելով գեղարվեստական մեծ բավականություն ցուցահանդես

* Ներկա Կիրովականիը,

** Ներկա Կիրովարդը:

Համախող հասարակությանը: Նրա խոմբը համարվում էր միակ ինքնատիպ և կանոնավոր խոմբը բոլոր այն խմբերից, որոնք ելույթներ էին ունենամ ցուցահանդեսի դահլիճում: Առումը բաղկացած էր 50 հոգուց և լավ պատրաստված էր համերգների:

1902 թվի փետրվարին Կարա-Մուրզան հրավեր է ստանում Բաքվի մարդասիրական ընկերությունից՝ գալ և մասնակցել ընկերության տարեկան երեկություն: Չնայած իր հիվանդությանը վիճակին (նա տառապում էր սրտի արատով), Կարա-Մուրզան մեծ ուրախությամբ ընդունում է հրավերը և մեկնում Բաքու, որտեղ նա վայելում էր տարիների տքնաշան աշխատանքով վաստակած անխախտ ժողովրդականություն: Մի քանի տարվա ընդմիջումից հետո հանդիպելով իր հինգարեկամբին, Բաքվի հայ հասարակությունը նրան ընդունում է գրկարաց ու հրճվանքով: Ընդամենը մի քանի օրվա ընթացքում կազմակերպված խոմբը բացառիկ հաջողությամբ մտանակցում է մարդասիրական ընկերության տարեկան երեկություն: Հասարակությունը Կարա-Մուրզային նվիրում է ուսումնական պատճեն: Դա մի նոր ապացուց էր նրա երկարամյա գործունեության տված արդյունքների մասին:

Բաքվից Կարա-Մուրզան վերադառնում է Թիֆլիս անուշան ոգևորությունն իր սրտում և ցանկանում է նոր եւանդով շարունակել իր գործը: Սակայն նրան մեծապես խանգարում է սաստկացող հիվանդությունը: Տարիների անհոգ աշխատանքը, զրկանքներն ու անհանդիստ թափառաշրջիկ կյանքը վերջ ի վերջո հասցնում են ֆիզիկական թուլաթյան և սրտի վտանգավոր հիվանդության: Բանն այնտեղ է հասնում, որ բժիշկները նրան արգելում են երգել: Նույնիսկ խոսմ զեկավարելն անդամ համարվում է նրա համար վտանգավոր աշխատանք: Այս բանը չափաղանց ծանր է թշում Կարա-Մուրզային և նա դանդադատվում է.

«Ինձ առաջարկում են շանել այն, ինչ որ իմ էությունն է եղել մինչև այժմ: Շանր է»:

Չնայած բժիշկների նախազգուշացումներին նա շարունակում է արհամարհել հիվանդությունը, առաջգա նման պարապում է իր երգեցիկ խմբերի հետ և պատրաստվում է նոր համերգի, որը, սակայն, չի կայանում, թեև ափիշաներն արգեն տպագրված էին: Հիվանդության արագ զարգացումը Կարա-Մուրզային նետում է անկողին և շուտափույթ օգնության համար կանչված բժիշկը նրան գտնում է անշնչացած... Այդ տեղի է ունենում 1902 թվի մարտի 27-ի (ապրիլի 9-ի) առավույց:

Կարա-Մուրզայի մահվան լուրը կայծակի արագությամբ տպարածվում է ամենուրեք, ուր ապրում էին հայերը, ուր նա իր երաժշտական գործունեության ընթացքում եղել և համերգներ էր տվել: Եվ ցավակցական հեռագրերի հեղեղն ամեն կողմից թափվում է «Մշակ»-ի խմբագրատունը: Հեռագրերը գալիս էին հիմնարկություններից, ընկերություններից, կոլեկտիվներից և անհատներից (հատկապես նրա բազմաթիվ աշակերտներից):

Մահից երեք օր հետո տեղի է ունենում Կարա-Մուրզայի թաղումը, որի նմանը Թիֆլիսը վաղուց չէր տեսել: Բազմաթիվ պատկեր, հուղարկավորողների մեծ բազմություն, երգեցիկ խոմբը, նվազախումբ, — այս բոլորը միասին վերցրած թաղմանը տալիս էին մեծաշուրջ հանդիսավորություն: Թե եկեղեցում և թե գերեզմանատանը ճառեր են արտասանվում, որոնց մեջ գնահատվում են հանգուցյալի անձնական հատկությունները և նրա կատարած կուտարական մեծ աշխատանքները: Կարա-Մուրզայի աճյունը թաղվում է Թիֆլիսի Կովկայի կաթոլիկական գերեզմանատանը: Գերեզմանի վրա հետագայում, 1912 թվին կանգնեցվում է հուշարձան այն գումարով, որը գոյացել էր հասարակական հանդանակությունից:

Կարա-Մուրզայի մահից հետո նրա ընտանիքը* մնում
է նյութական բոլորովին անապահով գրության մեջ: Իր ամ-
բողջ երաժշտական-հասարակական գործունեության ընթաց-
քում Կարա-Մուրզան կրել է նյութական զրկանքներ: Այդ մա-
սին վկայում է «Ալարտֆերի ցուցակը», որի մեջ գրանցված են
նրա պարտքերը 1882—1899 թվերի ընթացքում: Պարզ է, որ
մահից հետո ընտանիքի գրությունը պետք է շատ վատ լի-
ներ և կարիք էր զգացվել նյութական շուտափույթ օքնու-
թյան:

«Մշտկ»-ի խմբագրությունը հայտարարում է հանգանա-
կություն՝ նպատակ դնելով ստեղծել մի գումար հանգույցյալի՝
ընտանիքի գրության բարելավման և հեղինակի ստեղծագոր-
ծությունների տպագրության գործի կազմակերպման համար:

Կարա-Մուրզայի ընտանիքի նյութական ծախսերը հոգա-

* Կարա-Մուրզայի ընտանիքը բաղկացած էր հինգ հոգաց՝ կի-
նը և չորս երեխա: Տալիս ենք տեղեկություններ նրա ընտանիքի անդամ-
ների և սեղնդի մասին: ա) Կինը՝ Եվա Ֆրանցինա Մայկոնիայան (ծնվ.
վել է 1870 թ.) այժմ ապրում է Բաքվում իր մհծ աղջիյի մոտ և աշխա-
տում է տրիկոտաժի գործարանում: բ) Սեծ աղան՝ Սերգեյը (ծնվ.
1891 թ.) մասնագիտությամբ ինժեներ-էլեկտրիկ, աշխատում է Բաքվի
Աղջիքառական գործարանում, ունի մի աղջիկ՝ Հենրիկիանա, որը մասնագիտությամբ պատ-
ճառան է: գ) Սրկորդ աղան՝ Լիլ (ծնվ. 1893 թ.) մասնագիտությամբ
տնհանագետ-ստատիստիկ, աշխատում է Բաքվում, Աղբյնշանական ՍՍՌ
ինդուստրիալ հիմնարարությամբ: Համատեղության կարգով աշխատում է
Ֆիզկուլտուրայի ինստիտուտում (Ֆիզկուլտուրայի վասնակավոր վար-
պետ): նա: ունի մեկ աղան և երկու աղջիկ, աղան՝ Քրիստափոր Լիլիը
իրավաբան է, աղջիկ՝ Նինան Բաքվի օտար լեզուների ինստիտուտի
ուսանողաւոր է: դ) Կարա-Մուրզայի մի աղջիկը՝ Լիդա Քրիստափորի-
նան ամուսնու աղջանունով Ավգիկա ծնվ. 1901 թ.) մասնագիտությամբ
բուսաբանության ֆիզիոլոգ է, գոցենա, բիոլոգիական գիտությանների
թեկնածու, աշխատում է Մոսկվայում, ՍՍՌՄ Գիտությանների Ակադեմիա-
յի միկրոբուլոգիայի ինստիտուտում: Ունի երկու երեխա՝ Օլեգ և Սվետ-
լանա, որոնք սպասում են: հ) Կարա-Մուրզայի մլուն աղջիկ՝ Լյուզմի-
լա Քրիստափորինան (ծնվ. 1896 թ.) մահացել է 21 տարեկան հասա-
կում: թէ Կարա-Մուրզայի որդիները և թի թոռները չեն գրադվում հե-
րաժշտությամբ, այլ ընտրել են բոլորովին տարբեր մասնագիտություն-
ներ:



Նկ. 7. Կարա-Մուրզան իր կնոջ և երեխաների հետ:
Ն կարգած է 1895 թ. Բաքվում:

լու և երեխաների դաստիարակությունն ապահովելու ծանր պարտականությունն իր վրա է վերցնում՝ Մկրտիչ Կարա-Մուրզան, որը Քրիստովորից փոքր էր վեց տարով և թարգմանիշ գրականագետ էր: Նրա օգնությամբ Կարա-Մուրզայի բոլոր երեխաներն էլ ստացել են բարձրագույն կրթություն և դարձել են պիտանի մասնագետներ յուրաքանչյուրն իր բնագավառում:

Ինչ վերաբերում է Կարա-Մուրզայի ստեղծագործությունների հրատարակությանը, ապա իր կենդանության ժամանակ լույս է տեսել միայն մեկ գործ՝ «Փոպուրի Հայկական երգերից դաշնամուրի համար»: Մահից հետո 1904 թվին Լեռնիդ Կնինալի փոխադրությամբ Կարա-Մուրզայի մշակած երգերը լույս են տեսել երկու տեսրով, դաշնամուրի համար: Այս հրատարակությունը անհաջող է և գաղափար չի տալիս Կարա-Մուրզայի ստեղծագործության մասին: Միակ հաջող հրատարակությունն իրագործված է Սովետական Հայաստանում 1935 թվին, Ռոմանոս Մելիքյանի խմբագրությամբ, և պարունակում է 12 ժողովրդական երգի մշակում: Այս երգերն էլ ամենից շատ կատարվում են Համերգների ընթացքում:

8. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ Ա. ԲԺԵՔԸ

Կովկասյան իլականության մեջ Կարա-Մուրզան աշխատեց 20 տարի (1882—1902 թ. թ.), որոնցից 17 տարին նաև նվիրեց Համերգային գործունեությանը: Այդ 17 տարվա ընթացքում նա շրջեց 50-ից ավելի քաղաքներ, կազմակերպեց մոտ 90 երգեցիկ խումբ և տվեց ավելի քան 250 համերգ: Նրա խմբերում երգել են մոտ 6000 հոգի, որոնց ճնշող մեծամասնությունը ոչ մի առնշություն չի ունեցել երաժշտության հետ: Նրա խմբերի կազմը եղել է շափականց խայտարգետ: Այդ մասին մեզ պարզ պատկերացում է տալիս մի ռեցենզիա, որը տպագրված է «Քազբեկ» թերթի 1896 թվի համարներից մեկում:

ԱՀա թե ինչ ենք կարդում այդ ռեցենզիայում.
«Խմբի կազմը վերին աստիճանի հետաքրքիր է։ Մուշ
նայելով երգիչների դեմքերին, դուք կտեսնեք այստեղ առա-
ջին կարգիրում ձեր հարևանության, նրա կողքին՝ գիմնազիա-
ցի ձեր ծանոթ մի աշակերտին, մյուս կողքին լազարյան ճե-
մարանի մի սանին. այստեղ ձեզ հայտնի վարժուհուն, նրա
կողքին կանգնած երգում է գինեկավաճառը, իսկ սրա կողքին
գոշկակարը։ Եվ այս բոլորը ձեզ ծանոթ դեմքեր, որոնց գուք
ամեն օր պատահում եք փողոցում, և ոչ մի մասնագետ եր-
գիշ»։

Կարա-Մուգայի կազմակերպած խմբերն ամենուրեք ու-
նեցել են մոտավորապես այսպիսի խայտարդետ կազմ։ Այ-
շնայած դրան, շնորհիվ իր կազմակերպչական արտակարգ
ընդունակությունների նա շատ կարճ ժամանակամիջոցում
կարողացել է ընդհանուր հայտարարի բերել, այդ խայտա-
րդեալ մասսայից կազմակերպված կոլեկտիվ ստեղծել և հա-
ջողությամբ տալ իր համերգները։ Բացի այդ նա արվեստա-
գետի սուր աշքերով որոնում և գտնում էր թաքնված տա-
ղանդներ հենց այդ մասսայի շարքերից և աճեցնում էր նը-
քանց՝ ինամքություն այգեպանի նման։

ԲԵՐԵՆՔ ՄԻ Քանի օրինակ:

Կարա-Մուրզայի կողմից նկատվել, առաջ քաշվել և մաս նապետ երգիչներ են դարձել.

1) Ներսես Շահլամյանը՝ դրամատիկ տենոր, որը մեծ հաջողություն էր վայելում Թուսատանում, Կովկասում և եվրոպական երկրներում որպես օպերալիին արտիստ:

2) Բեգլար Ամիրջանը՝ բարիտոն, որ աշխատում էր
թիֆլիսի օպերայում:

3) Մակար Վարդիկյանը՝ լիրիկական տենոր, Կովկասում հոգակած երգիչներից մեկը:

4) Ծովակը՝ հրաշալի բարիտոն, Միլանի կոնսերվատորիայի ուսանող, Նրա ձայնը Միլանում ստացել էր bri-lianto էպիտեմը:

Հիշյալ երդիշների մեծ մասը Կարա-Մուրզայի ջանքերով

թոշակ են գտել և մեկնել արտասահման իրենց ձայնը կատարելագործելու համար:

Եթե վերոհիշյալ ցուցակին ավելացնենք նաև այս երգիւ-
էրգուհիների ազգանունները, որոնք երգել են Կարա-Մուգ-
զայի խմբերում և հանդես են եկել որպես մենակատարներ,
ապա մեզ համար պարզ կլինի այս մեծ աշխատանքը, որ
կատարում էր Կարա-Մուգզան երաժշտական կադրերի դաս-
տիարակման ուղղությամբ:

Ահա՝ նրանցից երկուսը.

1) Ամբրումյան՝ Բաքվի ծխախոտի գործարանի բանվոր: Դրամատիկական տեհնոր, ուժեղ և լայնածավալ դիապազոնով: Կարս-Մուրզայի կողմից առաջ է քաշվել 1891 թվին, որպես խմբի մեներգիչ:

2) Ղաղար Արիստակենյան՝ նույնպես դրամատիկական
տենոր: Երգել է որպես մեներգիչ սկզբում Քրիստափոր Կա-
րա-Մուրզայի, իսկ հետագայում՝ Պողոս Կարա-Մուրզայի:
Խմբերում:

Կարա-Մուրզայի խմբում երգել է նաև բանաստեղծ Հակոբ Հակոբյանը, որը նույնպես ունեցել է զուրեկան ձայն և շատ հաճախ հանդիս է եկել իր մենակատարումներով:

Վերոհիշյալ փաստերը միասին վերցրած ցուց են տա-
լիս, որ իսկապես Կարա-Մուրզան խոշոր աշխատանք է կա-
տարել ժողովրդի խորքերից երաժշտական կադրերի հայտնա-
բերման և առաջ քաշման ուղղությամբ: Նա շափազանդ խո-
շոր աշխատանք է կատարել նաև մասսայական ունկնդիր
հասարակության ճաշակի զարգացման գործում: Իր խմբերը
կազմակերպելով և համերգներ տալով այն բոլոր քաղաքնե-
րում, որտեղ փոքրիշատե հայություն կար, Կարա-Մուրզան
ոչ միայն պատճառել է գեղարվեստական մեծ հաճույք ուն-
կընդիր հասարակությանը, այլև պատվաստել է սեր զեպի
երաժշտությունը և համերգային գործունեությունը: Նրա հե-
ռանալուց հետո շատ և շատ քաղաքներում տեղական ուժե-
րով կազմակերպվել են ներկայացվել են համերգներ: Իր հա-
մերգային գործունեությամբ Կարա-Մուրզան հասավ այն

բանին, որ քառաձայն երգեցողությունը դարձավ անհրաժեշտությունը հայ ունկնդիր հասարակության համար: Որքան ճիպ ու ջանք պահանջեց այդ մեծ կուլտուրական նվաճումը, որքան դժվարություններ հաղթահարվեց Կարա-Մուրզայի կողմից, որքան զրկանքներ ու չարչարանքներ տեսավ նա, մինչև որ իր գաղափարը մարմնավորեց գործի մեջ: Եթե նրա գործունեության սկզբում ունկնդիրները տարօրինակ էին համարում քառաձայն՝ երգը, ապա գործունեության վերջում այդ նույն քառաձայն երգը լավում էր մեծ հաճուքքով: Նրա համերգների աճող հաջողությունը հանդիսանում է ամենակարեվոր ապացուցներից մեկը նրա գործունեության հասարակական նշանակության աճման և տված արդյունքների մասին:

Կարա-Մուրզան իր համերգային գործունեությամբ միաժամանակ իրագործում էր մի քանի դժվարին ու մեծացնեքինդիրներ: Նախ այն, որ նա հայերի մեջ տարածում էր ներդաշնակված երգի գաղափարը և զրանով իսկ զարգացնում էր նրանց ճաշակը: Երկրորդ, խմբեր կազմակերպելով նա տարածում էր հավաքականության, սերտ միության գաղափարը, որը չափազանց կարելոր էր ցաք ու ցրիվ ապրող հայերի համար: Երրորդ, նա հայերի մեջ տարածում էր հայոց լեզուն և կուլտուրան, ներշնչում էր ամենքին ազգային հքարարություն: Չորրորդ, խմբերում երգողներին տալիս էր երաժշտական տարրական գիտելիքներ և նրանց մեջ պահպատում էր սեր դեպի երգն ու երաժշտությունը:

Ահա թե որքան կարևոր խնդիրներ էր լուծում նա իւ համերգային շրջագայությամբ: Եվ նա այդ բոլորը գիտակցելով հանձն էր առնում ամեն տեսակի զրկանք ու շարշարանք և հետևողականորեն շարունակում էր իր գործը:

Կարա-Մուրզան խոշոր գործ կատարեց հայ աշխատավոր կանանց ու օրիորդներին հասարակական գործունեության ասպարեզ ներգրավելու ուղղությամբ:

Սկսած 1887 թվից (իսկ կովկասում 1891 թվից) իր երգեցիկ խմբերին նա մասնակից է դարձրել հայ օրիորդներին

ու կանանց՝ հակառակ նրանց դարավոր ամոթխածությանը՝ նրանք բեմ են դուրս եկել և երգել են տղամարդկանց ներկայությամբ, նրանց հետ կողք կողքի: Հետադիմականները փրփրել են, լուսանքներ թափել նրա գլխին և զանազան հետուրաններ տարածել նրա հասցեին, իսկ նա առանց տատանվելու, հետևողականորեն շարունակել է իր գործը և գործնականորեն իրականացրել իր նպատակադրումը:

Իր համերգային գործունեության ընթացքում Կարա-Մուրզան ամենից առաջ ստիպված է եղել մտածել այն մասին, որպեսզի իր «նոր խոսքը»՝ քառաձայն երգը մատչելի լինի ժողովրդական լայն գանգվածներին: Այս է պատճառը, որ նա որքան հնարավոր է պարզեցրել է իր երգերը: Եվ երբ մենք այսօրվա հարմոնիայի բարձունքից նայում ենք նրա քառաձայնին, մեզ այն թվում է շատ պրիմիտիվ, շատ տարրական, շատ պարզ: Բայց դա բոլորովին էլ հետևանք չէ նրա տեսական անպատճառականությանը: Ճիշտ է, Կարա-Մուրզան կոնսերվատորիա չի ավարտել (նա միայն երազել է այդ մասին, բայց նյութական հնարավորություններ չի ունեցել այդ երազի իրագործման համար): Սակայն անընդհանուր ինքնազարդացման հետևանքով և մասամբ էլ երաժշտության դասատուների օգնությամբ նա բավականաշափ խորը կերպով ուսումնասիրել է երաժշտության տեսությունը, հարմոնիան և պոլիֆոնիան: Այդ մասին վկայում են երաժշտության տեսության այն ծրագրերը, որոնցով նա մտադիր էր պարապել եշմիանի ճեմարանի սաների հետ: Այդ մասին վկայում են նրա քննադատական հողվածներն ու ուեցենդիաները, որոնց մեջ նա վերլուծման է ենթարկել մի շարք կոմպոզիտորների ստեղծագործությունները և օպերային արտիստների կատարումները: Վերջապես այդ մասին վկայում է նաև այն փաստը, որ նա աշխատել է իր ստեղծագործություններում կիրառել բազմաձայնության պարզ ձևեր, հատկապես՝ կանոնը: Այդպիսի մի օրինակ մենք տեսնում ենք «Ծուշան» օպերայի նախերգանքի վերջաբանում («Հեյ բեգ»):

Այդպիսին է նաև «Աստղը ցոլաց, գնաց» խմբերից (Հվերջավորվող կանոն):

Նրանք, ովքեր կարծում են, որ Կարա-Մուրզան միանվածից կարող էր օգտագործել բազմաձայն բարդ ձևերը, շարաշար կերպով սխալվում են: Ամեն մի երկութիւն կերպով հասկանալու համար անհրաժեշտ է դիտել պատճական այն միջավայրում, որտեղ հանդես է եկել տվյալ երևովիթ: Այսպիսի մոտեցման դեպքում մենք կտեսնենք, որ Կարա-Մուրզայի գործունեության շրջանում, երբ մենք ունենք միայն հատ ու կենտ պրոֆեսիոնալ կոմպոզիտորներ, երբ մենք չունենք հայկական և ոչ մի երաժշտական դպրոց, երբ մեր գրավոր երաժշտական կուլտուրան նոր էր սկիզբ առել (Եթե չհաշվենք հայկական խաղերը, որոնք մինչև այժմ էլ մնացել են չվերծանված), երբ հայ հասարակությանը զեռ խորթ էր քառաձայն երգի գաղափարը և տիրապետողը մոնողիան էր (միաձայնությունը), + ապա այդպիսի պայմաններուն բոլորովին անհնարին էր մտածել բազմաձայնության բարդ ձևերի օգտագործման մասին:

Կարա-Մուրզայի բազմաձայնը հիմնված է ուղղահայաց հնչողականության և ոչ թե հորիզոնական ձայնատարության վրա: Այստեղից էլ բխում է նրա երգերի երաժշտական ֆոնակցիոնալությունը: Նրա քառաձայնի առանձին ձայները սիթմական և ինտոնացիոն քայլերի տեսակետից ամբողջապես ենթարկված են գլխավոր մելոդիային և այդ պատճառով էլ լրիվ շափով ինքնուրուցն չեն: Սա նույնպես հեշտացնուած էր երգերի կատարումը:

Կարա-Մուրզան շատ լավ էր հասկանում, թե ինչպիսի երաժշտական պատրաստականություն ունեցող մարդկանց հետ գործ ունի և ինչից էր անհրաժեշտ սկսել քառաձայն երգի գաղափարը պատվաստելու համար:

Կարա-Մուրզայի հարմոնիվացիայի պարզությունը պայմանավորված էր, նկատի առնելով հետեւյալ կարևոր հանգամանքները.

1) Հայ ունկնդիր հասարակության միանգամայն ան-

պատրաստականությունը անգամ ամենատարրական բազմացյն երգի բնագավառում:

2) Երգեցիկ խմբերին մասնակցող «Երգիշ-Երգչութիւների» երաժշտական անգրագիտությունը, որի հետևանքով նրանք իրենց պարտիաները սովորում էին միայն հիշողությամբ և բարդ պոլիֆոնիկ երգը նրանց ուժերից միանգամայն վեր էր:

3) Երգեցիկ խմբերի պատրաստման համար գործադրվող յամանակի սղությունը (մեկից-երկու շաբաթ):

4) Պարզից գեղի բարդը գնալու հայտնի ղեկավար ըսկը զբանը:

Եթե Կարա-Մուրզան հաշվի շառներ այս կարևոր հանգամանքները և միանգամից սկսեր բազմաձայնության բարդ ձևերի պրոպագանդայից, ապա քառաձայն երգի տարածման գործն անպայմանորեն կձախողվեր և նրա գործունեությունը չէր տա այն հսկայական արդյունքները, որոնց նա հասավ 17 տարվա ընթացքում: Անցյալ դարի 80-ական թվականներին, երբ Կարա-Մուրզան տվեց իր առաջին քառաձայն համերգները, հայ հասարակությունը բոլորովին ծանոթ չէր բազմաձայնի հետ: Միաձայն երգին վարժված նրա ականջներին տարօրինակ էր հնչում նույնիսկ ամենապարզ քառաձայն երգը: Եվ 17 տարվա անխոնց աշխատանքի հետևանքով Կարա-Մուրզային հաջողվեց օրինականացնել քառաձայնը, սեր պատվաստել գեղի այն: Բայց նույնիսկ այդ հսկայական աշխատանքից հետո անգամ, երբ հանդես եկավ Ֆեծ Կոմիտասը, նրա գեղեցիկ բազմաձայն երգերը ևս դեռ ամբողջապես չէին հասնում հասարակությանը: Պետք է անցներ որոշ ժամանակ, կատարվեր հսկայական նախապատրաստական աշխատանքը, հասներ մեր ժամանակաշրջանը, որպեսզի Կոմիտասի բազմաձայնն ստանար իր արժանի գնահատականը:

Այսպիսով Կարա-Մուրզայի ներդաշնակության պարզությունը, նույնիսկ տարրականությունը, պատահական չէր, պայմանավորված էր այն ժամանակված հասարակական պայ-

ժամաներով և համապատասխանում էր Հայ Հասարակության երաժշտական զարգացման մակարդակին:

Կարա-Մուրզան առաջինն էր, որ խոշոր աշխատանք կատարեց Հայկական ժողովրդական երգերի հավաքման, քառաձինման և մասսայականացման կարևորագույն գործի ուղղությամբ: Հետևելով մեծ Գլխնկային, նա քաղաքացիություն տվեց ժողովրդական երգին: Ժողովրդական երգերի ձայնագրման և հավաքման գործով նա զբաղվել է գեռես իր Համերգային գործունեությանը նախորդող շրջանում, բայց Հատկապես ուժեղացրել է իր կյանքի վերջին տասնամյակում: Հատկանշական է այն, որ նրա Համերգների ծրագրերում ժողովրդական երգերի տեսակարար կշիռը Հատկապես աճեց գործունեության վերջին տարիներին: Եթե իր Համերգային գործունեության սկզբում նա մեծ տեղ էր Հատկացնում ազգային-հայրենասիրական տիպի երգերին և Համերգային ծրագրերի մեծ մասը կազմված էր այդ տիպի երգերից, ապա հետագայում՝ Հատկապես 90-ական թվականների վերջերում, նա իր Համերգների ծրագրերը գերազանցապես կազմում էր ժողովրդական երգերից:

Այդ Համերգների ծրագրերում տեղ էն գտել ոչ միայն ժողովրդական երգերի մշակումները, այլև Կարա-Մուրզայի ու մի շարք այլ հեղինակների ինքնուրույն ստեղծագործությունները նա մասսայականացրել է Չուփաջյանի, Եկմալյանի, Տնտեսյանի, Քաղցածյանի, Երանյանի, Թաշլյանի և այլ հեղինակների գործերը: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ Կարա-Մուրզան իր Համերգների ծրագրերում տեղ է տվել նաև ուստական, ուկրաինական ու եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններին (Գլխնկա, Զայկովսկի, Բեթհովեն, Շոպեն, Գունո, Բելլինի, Վերդի, Շուբերտ և ուրիշներ), ապա մեզ Համար միանգամայն պարզ կլինի, որ Կարա-Մուրզան մեծ աշխատանք է կատարել Հայ ունկնդիր Հասարակությանն ինչպես Հայ, նույնպես և այլազգի կոմպոզիտորների ստեղծագործություններին ծանոթացնելու ուղղությամբ:

Կարա-Մուրզան շատ ավելի մեծ թվով երգեր կմտցներ: Իր Համերգային ուսեպերուարի մեջ, եթե ցարական գրաքննությունը նրա ձեռքերը չկապեր: Հայտնի է, որ Կարա-Մուրզական գործունեությամբ և Հատկապես Համերգների ուսեպերը տուարով մշտապես հետաքրքրվել է: Կովկասի գրաքննիւթյան կարա-Մուրզան ստիպված է եղել պարբերաբար ներկայացնել գրաքննիւթի Հաստատմանը Համերգների ընթացքում կատարվելիք բոլոր երգերի տեքստերը: Բավական էր, որ գրաքննիւթի աշբին ընկներ Հայ բառը, որպեսզի կարմիր թանաքով անմիջապես ջնջեր և նրա կատարումն արգելվեր: Այս տեսակետից շափազանց մեծ արժեք էն ներկայացնում այն տեսրակները, որոնք Կարա-Մուրզայի կողմից ներկայացվել են գրաքննիւթին ի Հաստատություն և այժմ գտնվում են հեղինակի արխիվում: Այդ տետրակներում գրաքննիւթյան չափանիշը չունեցել է ներկայացված երգերի 40—50 տոկոսը: Երբեմն գրաքննիւթը ջնջել է ոչ միայն ազգային և քաղաքական տիպի երգերը, այլև այնպիսի երգեր, որոնք բոլորին անմեղ էին իրենց բնույթով: Այսպիս օրինակ, ջնջած երգերի շարքում մենք գտնում ենք Զիվանու «Այծյամը» («Անհոգ ես, չես գիտեր՝ ինչ կա քո մասին»), «Սիլուհիս, քեզ Համար» Հայտնի երգը և այլն: Յարական ցենզուրան գաղաղած՝ աճող Հայկական ազգային-ազատագրական շարժումների հետեւնքով, երբեմն ընկնում էր ծիծաղելի դրության մեջ, արգելելով նոյնիսկ ժողովրդական սիրային երգը:

Կարա-Մուրզան ստիպված էր լինում զիմել եղողոսոյան լեզվին, որպեսզի կարողանար շրջանցել գրաքննության կողմից և այս կամ այն երգը թողնել Համերգի ծրագրում: Այսպես օրինակ. «Բավ է, եղբայր, վիզը ձկել» երգի եղանակն օգտագործելու համար նա գրել էր նոր տեքստ «Հրավեր ներդաշնակության» խորագրով: Երգի ծանոթ եղանակի կատարման ժամանակ իհարկե լսողները ասոցիացիայի կարգով մերձենայաբար հիշում էին նաև երգի առաջին տեքստը: Ալիշարենայաբար Հիշում էին նաև երգի առաջին տեքստը: Այլիշարենի «Բամփի որոտան» երգը նրա Համերգների ծրագրում շատ

Հաճախ հանդես է եկել «Մուսայի գովքը»՝ խորագրով և մըշտապես կատարվել է:

Նման օրինակներ կարելի է բերել որքան կամենաք: Սա-
կայն վերոհիշյալ օրինակներն էլ միանդամյն բավական են՝
ցուց տալու համար այն, որ Կարա-Մուրզան խսկապես
համառ կերպով պայքարել է ցարական գրաքննության սահ-
մանափակումների դեմ և ամեն կերպ աշխատել է զարտուղի
միջոցներով շարունակել իր գործու:

Կարա-Մուրզան որպես երգեցիկ խմբեր կազմակերպող և մասսայական համերգային գործունեություն ցուցաբերող պրոպագանդիստ տվել է հզարի օրինակ մեր երաժշտության պատմության մեջ: Այդ ասպարեզում նա մինչև այժմ էլ մը-նացել է շփերազանցված մի գործիչ, թեև նրա օրինակով վարակվել և նրա գործը շարունակել են շատերը: Հետեւելով իրենց ուսուցչի օրինակին այդ ուղղությամբ խոշոր գործ են կատարել կոմպոզիտորներ Ազատ Մանուկյանը, Եղիշե Բաղդասարյանը, Ստեփան Դիմուրյանը և ուրիշները: Առանձնապես պետք է մատնանշել Պողոս և Պետրոս Կարա-Մուրզաների կատարած աշխատանքը, որոնք հաճախակի համերգ ներ են կազմակերպել իրենց եղբօր ստեղծագործություններից և հանդես են եկել, որպես երգեցիկ խմբեր կազմակերպողներ: Իսկ երբ հանդես եկան մեծանուն Կոմիտասը, Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը և ուրիշները, Կարա-Մուրզայի սկսած գործը դրվեց նոր հիմունքների վրա և հասավ զարգացման բարձր աստիճանի:

Կարս-Մուրզան հանդիսացել է մեր երաժշտական կուտուրայի զարգացման նոր շրջանի պիոները։ Նրա գործունեության վերջին շրջանում և նրանից հետո միայն հանդես եկան մեր խոշոր կոմպոզիտորները, որոնք, զինված ոռւասկան և արևմտակրոպական երաժշտական կուտուրայի ուղևական մտքի նվաճումներով, մեծ թափով առաջ տարան մեր երաժշտական կուտուրայի զարգացման գործը։

9. ԿԱՐԱ-ՄՈՒՐԳԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՄՔԸ

Ի՞նչ է իրենից ներկայացնում Կարա-Մուրզան որպես կոմպոզիտոր: Որո՞նք են նրա ինքնուրուց ստեղծագործությունները և ի՞նչ արժեք են ներկայացնում:

Բայտ մեղ հասած տեղեկությունների Կարա-Մուրզան
գրել է 67 ինքնուրուց ստեղծագործություն, չ'աշփած այն-
քազմաթիվ ժողովրդական երգերը և այլ կոմպոզիտորների
ստեղծագործությունները, որոնք քառաձայնվել և կատարվել-
են նրա կողմից իր համերգային գործունեության ընթացքում:
Կարա-Մուրզան Հավաքել և մշակել է 320 ժողովրդական երգ:
Դժբախտաբար նրա ինքնուրուց ստեղծագործությունները և
ժողովրդական երգերի մշակումները մեղ հասել են մասամբ
միայն, առանձին կտորներով, փշտանքների ձևով: Նրա ստեղ-
ծագործությունների և մշակումների ճնշող մեծամասնությու-
նը անհետ կորել է և մեղ չի հասել: Ինքնուրուց ստեղծա-
գործությունների մի մասը վերականգնված է հիշողությամբ
պրոֆ. Ք. Ս. Կուշնարյանի, Փողոս Կարա-Մուրզայի և Ան-
տոն Մայկլանի կողմից: Իր ձեռքով գրված գործերից մեր
տրամադրության տակ կան միայն մի քանի կտորներ, որոնք
հնարավորություն չեն տալիս լինի գաղափար կազմել նրա
ստեղծագործությունների մասին:

Ամենից առաջ պետք է ընդգծել այն հանգամանքը, որ նա թի' բանաստեղծ էր և թի երաժիշտ, թեև նա սիստեմա-տիկորեն չի զբաղվել բանաստեղծությամբ, այլ միայն ամե-նաանհրաժեշտ դեպքերում, այն էլ իր սեփական ստեղծա-գործությունների համար («Հրդեհ», «Գաղթականներ», «Մնաք բարեկ», «Գամբանականներ» և այլն): Այս հանգամանքը նույնպես վկայում է նրա անվիճելի ստեղծագործական ու-նակությունների մասին: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նա զրել է ոչ միայն առանձին բանաստեղծություններ, այլև մի երաժշտական կոմեդիա՝ «Ռվակ է երջանիկ» (1895 թ.):

Կարս-Մուրգայի ինքնուրուց ստեղծագործով մի բազեանցապես կը կարագանցապես վոկալ գործեր են, թեև նա ունի նաև մի քա-

նի ինստրումենտալ (գործիքային) ստեղծագործություններ («Պոպուլի հայկական երգերից՝ դաշնամուրի համար»), դամբանականներ և այլն):

Կարա-Մուլդայի վոկալ ստեղծագործությունները կարենի է բաժանել երեք խմբի՝ ա) ժողովրդական բնույթի և բռն ժողովրդական երգեր, բ) ազգային-հայրենասիրական երգեր և գ) կրոնական:

Կանգ առնենք այս խմբերից յուրանաքչյուրի վրա առանձին-առանձին:

ա) Բռն ժողովրդական և ժողովրդական բնույթի երգերը կազմում են Կարա-Մուլդայի ստեղծագործության հիմնական մասը: Սրանց թվին են պատկանում ժողովրդական երգերի քառածայն մշակումները, որոնք զգալի տեղ են գրավում նրա ստեղծագործությունների շարքում և մի քանի ինքնուրույն գործեր, որոնք զրված են այդ նույն ժողովրդական երգերի բնույթով:

Մշակումների թվին են պատկանում «Վարդ կոշիկս», «Զան գյուղում», Լեպո լելե», «Գացեք, տեսեք՝ ովէ կերել զէծ», «Ճինչ ու զինչ տամ լողվորչուն», «Հոյ, Նազան իմ», «Բերդիցը դուրս ելա, Ալագյազ տեսա», «Որիկ» և շատ ուրիշները: Սրբանք բռն ժողովրդական երգեր են, որոնք հավաքել և գրի է առել ինքը՝ Կարա-Մուլդան և գեղարվեստական մշակման ենթարկելով տվել է նրանց նոր համ ու հոտ, նոր թարմություն: Հայկական ժողովրդական երգը մշակելիս Կարա-Մուլդան բոլորովին անփոփոխ է թողել մայր եղանակը, իրար հետ միացրել է տարբեր տրամադրությունների (տիսուր և ուրախ), տարբեր տեմպերի (զանդաղ և արագ) և տարբեր տոնայնությունների (մամոր և մինոր) երգեր, աշխատելով երգերի ընտրությունը կատարել այնպես, որպեսզի ստացվի օրդանական մի ամբողջություն: Այս պրիոմը հետագայում լայնութեն օգտագործվել է Կոմիտասի և մյուս կոմպոզիտորների կողմից:

Օգտագործելով ժողովրդական երգերի ինտոնացիաները, նրանց ոճն ու առանձնահատկությունները, որոնք շատ լավ

ծանոթ էին Կարա-Մուլդային, նա գրել է մի շարք ինքնուրույն ստեղծագործություններ, որոնք նույնպես բարձր արժեք են ներկայացնում: Այս կարգի ստեղծագործությունների թվին են պատկանում «Հրդեհ» և «Գարդակամները», որոնց տեքստը նույնպես պատկանում է Կարա-Մուլդային և որոնք հեղինակի կողմից կատարվել են շատ հաճախ՝ միացված նկարիչ Բաշինչաղյանի նկարների հետ: Այդ նկարները ծառայում էին, որպես յուրատեսակ դեկորացիաներ և մեծապես նպաստում էին Կարա-Մուլդայի այս գործերի թողած ազդեցության ուժեղացմանը:

Այս կարգի ստեղծագործությունների թվին են պատկանում նաև «Շուշան» օպերայի առաջին գործողության հատվածները և հեղինակի մի քանի երգերը («Աստղը ցոլաց», կընաց», «Հայրիկ, ա'խ, ի'ն գեղեցիկ է», «Մուկու ախապեր», «Աղատն աստված» և ուրիշները): Դժբախտաբար այս կարգի երգերի մի մասը մինչև այժմ էլ գրի չի առնված Կարա-Մուլդայի աշակերտների և բարեկամների կողմից: Այնինչ դա շափականց անհրաժեշտ է վերոհիշյալ գործերը կորստից փըրկելու և հասարակության սեփականությունը դարձնելու համար:

Այս ստեղծագործություններից ամենամեծը և ամենաարժեքավորը «Շուշան» օպերայի նախերգանքի և առաջին գործողության երաժշտությունն է: Նրա մեջ հեղինակն օդտագործել է ոչ միայն հայկական, այլև ուրիշ ազգությունների ժողովրդական երաժշտության ինտոնացիաները: Հատկապես «Հե՛յ բեք»-ը, «Ելի քաղցրիկ օրեր», «Հանդարտվիր, քուրքիկ» և մի քանի այլ հատվածներ պատկանում են օպերայի հաջողված հատվածների թվին: Անհրաժեշտ է «Շուշան» օպերայի նախերգանքի և առաջին գործողության գրի առնված օպերայի համեմատել հեղինակի սեպիր ձեռագրերի հետ, ձշտել ու լրացնել և, այդպիսով ամբողջականացնելով, այն ժանոթացնել մեր հասարակայնությանը:

«Շուշան» օպերայի նյութը վերցված է թուրքահայերի կյանքից և պատկերում է հայերի ու քրդերի փոխհարաբերու-

Թլումը: Դեպքերը ծավալվում են քուրդ բեգի կողմից Շուշանին փախցնելու և իր կինը դարձնելու փաստի շուրջը: Շուշանը հավատարիմ է մնում իր ազգին ու կրոնին և մեռնում է «այս, հայ եմ, հայ էլ կմեռնեմ» խոսքերը բերնին: Այս էլ հենց կազմում է լիբրետոյի կենտրոնական իդեան: Հայկական ազգային-ազատագրական շարժման ծավալման ըրջանում այդ իդեան շատ հրատապ էր ու կարևոր:

Անձրաժեշտ է հատկապես շեշտել այն, որ Կարա-Մուրգան նպատակ էր զրել բեմ դուրս բերել ուալ մարդկանց, որոնց ներքնաշխարհը, հույզերն ու ապրումները պետք է արտահայտվեին երաժշտական միջոցներով: Հերոսներից ամեն մեկը պետք է ունենար իր համապատասխան տեղը հասարակական կյանքում: Այդ երկում է Կարա-Մուրգայի հետևալ նշումից՝ «Որոշել գործող անձանց ա) տարիքը, բ) դասակարգը, գ) զարգացումը, դ) տեմպերամենուրը, ե) հոգվո գեղեցկությունը, զ) հասարակական նշանակությունը, է) փոխադարձ հարաբերությունը, ը) տիպերը, նույնը խմբի վերաբերմամբ»:

Այս նշումը թույլ է տալիս ենթազրել, որ Կարա-Մուրգան նպատակ է զրել ստեղծել ունալիստական մի գործ: Թե որքանով այդ կհաջողվեր նրան, ավելորդ է կուածել, սակայն հենց այն հանգամանքը, որ նա իր առջև այդպիսի խնդիր էր զրել և աշխատում էր իրագործել, ունի պատմական խոշոր նշանակություն:

Ինչպես «Շուշան» օպերայի, նույնպես և այս կարգի մյուս ստեղծագործությունների մեջ ժողովրդական երգերի ուղղակի մեջբերումներ չկան, սակայն նրանք իրենց բնույթով, իրենց էությամբ ու ոճով միանգամայն հարազատ են իսկական ժողովրդական երգերին: Այս է պատճառը, որ Կարա-Մուրգայի այս ստեղծագործությունները նույնպես պահպանել են իրենց արժեքը:

Մենք այսուել հնարավորություն չունենք (և դա մեր նըպատակից դուրս է) մանրամասնորեն վերլուծել այս ստեղծագործություններն առանձին-առանձին (այդ թողնում ենք

Հ. 7. 8. Կարա-Մուրգայի Շուշանի օպերայի միանգամանքների վերաբերյալ պահպանական գործառությունների մասին հայտապես առաջարկությունները:

քի այլ անգամվա), իսկ այստեղ վերն ասածներին միայն կավելացնենք, որ այս կարգի ստեղծագործություններն իսկապես արժեքավոր են, որովհետև նրանց մեջ է, որ արտահայտվել է Կարա-Մուրզայի ստեղծագործական դեմքը:

Իրենց էությամբ լինելով ժողովրդական, այս ստեղծագործությունները պահպանել են իրենց թարմությունը և շարունակում են գեղարվեստական բավականություն պատճառել մեր այսօրվա ունկնդիրներին:

բ) Ազգային-հայրենախրական երգեր: Այս տեսակին են պատկանում այն երգերը, որոնք գրված են մեծ մասամբ օրիլա հրատապ խնդիրներն արտահայտող բանաստեղծական տեքստերի վրա: Այստեղ պետք է հիշատակել Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Պեշիկթաշլյանի, Նալբանդյանի և այլոց բանաստեղծությունները: Այս տիպի երգերն իրենց մելոդիաների վրա կրում են շտապողականության կնիք, և նրանց մի մասը վրան գեղարվեստական արժեք չեն ներկայացնում: Կապահանձին գեղարվեստական արժեք չեն ներկայացնում: Կապահած լինելով իր ժամանակի քաղաքական դեպքերի ու երեխությների հետ, հանդիսանալով այդ դեպքերի արտահայտությունը երաժշտության մեջ, այս երգերն ունեցել են որոշ պատմական-հասարակական նշանակություն, իր ժամանակին տարածվել են հասարակության մեջ, նպաստել են հայական տարածվել կամքի կազմակերպմանը և ազգային-աշախատավորների կամքի կազմակերպմանը մասնակից դառնալում: Դրանք մեծ մասամբ հանդիսանում են «Հայոց հարցի» էվլուցիայի հետ կապված գործեր և այժմ կորցրել են իրենց նշանակությունը: Այս տիպի երգերի թվին են պատկանում «Ի՞նչ անենք», «Բաժակներ առնունք, եղբայրք» (իսուքերը Ռ. Պատնենք), «Խտալացի աղջկա երգը» (Մ. Նալբանդյանի), կանյանի), «Խտալացի աղջկա երգը» (Ղուկասյանի) և այլն: Այս տիպի երգերը կազմում են Կարա-Մուրզայի ինքնուրույն ստեղծագործությունների համեմատաբար մի փոքր մասը:

գ) Կրոնական կամ եկեղեցական: Այս կարգի երաժշտական գործերի թվին են պատկանում նրա քառաձայնաձայնական գործերի թվին են պատկանում նրա քառաձայնաձայնական գործերը, շարականները և այլ հոգևոր ստեղծագործությունները

թյումներ, որոնք այնքան էլ մեծ աեղ չեն գրավում նրա ստեղծագործությունների ցանկում:

Հայտնի է, որ Կարա-Մուրզան իր ըմբռնումներով եղել է աթեիստ: Այդ մասին մենք կխոսենք ներկա աշխատության վերջին գլխում: Իսկ այժմ ցանկանում ենք մատնանշել, որ եթե Կարա-Մուրզան որոշ գործ է կատարել հոգեոր եղանակների քառաձայնման և կատարման ուղղությամբ, ապա այդ պետք է բացատրել ոչ թե նրա կրոնական համոզմունքներով, այլ բոլորովին ուրիշ գրդումներով: Քառաձայն երկը հայկական եկեղեցի ներմուծելու հարցում նա ամենից առաջ ենում էր այն բանից, որ այն ժամանակվա պայմաններում եկեղեցին հանդիսանում էր ամենաբազմամարդ «լսարանը», որտեղ ժողովրդական մասսաները ազատ մուտք ունեին և առանց նյութական որևէ ծախսի կարող էին ազատ կերպով լսել քառաձայնը և վարժվել նրան: Ինչպես տեսանք, այս էր միակ պատճառը, որ նա այնքան եռանդ ցուցաբերեց այդ ուղղությամբ:

Պատարագը, շարականները և այլ հոգեոր երգերը քառաձայնելիս Կարա-Մուրզան աշխատել է պահպանել նրանց մելոդիան և ընդհանուր բնույթը: Լավ ծանոթ լինելով պատարագի բազմաձայնման բոլոր փորձերի հետ, Կարա-Մուրզան քննադատել է այն, և չի ցանկացել կրկնել իր նախորդների սիսալները: Իսկ երբ 1896 թվին տպագրվեց եկմալյանի քառաձայն պատարագը, նա ոչ միայն դրական կարծիք հայտնեց կատարված աշխատանքի մասին, այլև հանձն առավ և իր խմբով կատարեց այդ պատարագի ամբողջ արարողությունը:

Կարա-Մուրզայի քառաձայն պատարագը և այլ հոգեոր երգերն (ինչպես նաև նրա ազգային երգերն) այժմ ունեն զուտ պատմական նշանակություն, որովհետեւ նրանք հանդիսացել են հոգեոր երգերի զարգացման էտապներից մեկը և այժմ գործածությունից դուրս գալով դարձել են պատմության սեփականություն: Բայց այն փաստը, որ նա առաջինն էր քառաձայն երգը հայկական եկեղեցի ներմուծողներից և

ունեցավ իր հետևորդները՝ այդ փաստն ունի պատմական խոշոր նշանակություն:

Կարա-Մուրզայի վոկալ ստեղծագործությունների ժանրերը բազմազան չեն: Այստեղ մենք հանդիպում ենք խմբական երգերի, մեներգերի (երգեցիկ խմբի և դաշնամուրի նըլվագակցությամբ) և անավարտ օպերաների: Նա մեծ մասամբ ստեղծագործել է ղեպքից ղեպք, ելնելով իր համերգային գործունեության պահանջներից և արձագանքելով իր ժամանակի հրատապ հարցերին: Նա որևէ ծրագրված և պլանաշափ ստեղծագործական աշխատանք չի կատարել: Նա փաստորեն իր ստեղծագործական աշխատանքը զոհաբերել է երածշտական-հասարակական գործունեությանը: Ստեղծագործելիս նա միշտ զբաղվել է իմպրովիզացիայով և խուսափել է գրի առնելուց: Միևնույն երգը կատարելով տարբեր համերգներում, նա ամեն անգամ տվել է նոր ներդաշնակությամբ, պահպանելով միայն այդ ներդաշնակության ընդհանուր բնույթը: Այդ մասին առանձնապես վկայում է Կարա-Մուրզայի աշակերտ կոմպոզիտոր Ազատ Մանուկյանը: Այս մասին վկայում են նաև բոլոր նրանք, ովքեր երգել են նրա խմբերում և կամ լսել են նրա համերգները: Զպետք է մոռանալ այն հանգամանքը, որ իր խմբերգերի դաշնամուրային ընկերակցությունը միշտ ինքն է կատարել և դա նրան հնարավորություն է տվել ազատ իմպրովիզացիա անել ու հետզհետեւ կատարելագործել այն:

Իբրև կոմպոզիտոր Կարա-Մուրզան չի կարողացել գտնել անհրաժեշտ քանակությամբ արտահայտչական միջոցներ, որպեսզի իր զգացածը վերարտագրի թղթի վրա և այս հանգումանքը պետք է համարել ամենակարևոր պատճառներից մեկն այն բանի, որ այսօր մենք շատ քիչ գործեր ունենք մեր ձեռքի տակ՝ նոտագրված հեղինակի ձեռքով: Նա խուսափել է իր բուռն զգացմունքներն ու հուզերը թղթին վստահելուց, որովհետեւ զգացել է այն խորը տարբերությունը, որ գոյություն ուներ իր գրածի և կատարածի միջև: Նրա ամեն մի երգը դառնում էր բոլորովին այլ, երբ կատարվում էր հեղինա-

կի ղեկավարությամբ։ Այս մասին միաբերան վկայում են Կարա-Մուրզայի բոլոր ժամանակակիցները։ Եվ այս շնորհիվ այն հանգամանքի, որ նա իր կատարածի մեջ կարողանում էր դնել սրտի ներքին կրակը, որ նա ոչ միայն ինքն էր ոգևորվում, այլև ոգևորում էր ուրիշներին, որ նա իր ամբողջ էռթյամբ ձուլվում էր իր երգի հետ։ Խսկ թղթի վրա նա այդ բուժությունը չեր կարողանում արտահայտել։

Այս բոլորից պարզ է, որ Կարա-Մուրզայի երաժշտական գրավոր ժառանգությունն ունի խոշոր թերություններ։ Այդ թերությունները միանգամայն հասկանալի են և նրանց հաղթահարման ճանապարհով է, որ Կարա-Մուրզայից հետո հանդես եկած կոմպոզիտորները հասել են նոր բարձունքների։ Սակայն միանգամայն սխալ կլիներ այդ թերությունների շնորհիվ նսեմացնել Կարա-Մուրզայի խաղացած գերը և կամ խսպառ ժխտել նրա նշանակությունը, ինչպես այդ արվել է մինչև վերջին ժամանակներս։ Եվ եթե այդ այնուամենայնիվ տեղի է ունեցել, պետք է համարել մեր երաժշտական իտուր թերություններից մեկը։

10. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ

Վերը մատնանշվեց, որ Կարա-Մուրզան իր կյանքի վերջին տարիներին (1899—1902 թ. թ.), իրեն մշտական աշխատանքի վայր ընտրելով թիֆլիսը, իր մյուս աշխատանքների հետ զուգընթաց՝ դարձավ «Մշակ»-ի երաժշտական ուսցենականը։ Այդ տարիներին նա սիստեմատիկորեն զբաղվել է ինչպես օպերային ներկայացումների, ուունպես և առանձին համերգների մասին ուսցենականեր գրելով, որոնցից և կատարված են մեր մեջբերումները։ Ոչ մի ներկայացում, ոչ մի համերգ չի վրիպել նրա սրտես աշքից։

Այստեղ մենք կաշխատենք պարզաբանել Կարա-Մուրզայի որպես երաժիշտ քննադատի հայրացքները և դրանց հիման վրա անել մի քանի ընդհանրացումներ նրա աշխարհայցքի ու քաղաքական դավանակի մասին։

Եր քաղմաթիվ ուցենակիաներում Կարա-Մուրզան զբաղվել է ոչ միայն երգիշ-երգչուուիների կատարողական արվեստի, այլև բեմպրվող օպերաների, որպես երաժշտական ստեղծագործությունների, վերլուծմամբ։

Մենք կրերենք մի քանի հատկած նրա ուցենակիաներից։

Կարա-Մուրզան առանձնապես հետեւել է ոռուական օպերայի զարգացմանը։ Իր ուցենակիաներում նա վերլուծել է այն բոլոր նոր օպերաները, որոնք հանդես են եկել XIX դարի վերջին քառորդում։ Ընդ որում նա բոլորովին չի քաշվել իր համակրանքը կամ հակակրանքն արտահայտելուց դեպի առանձին օպերաներ։ Եթե նա Զայկովսկու «Եվգենի Օնեգին» ու «Պիկովայա դամա», Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարս-նացուն», Բորովինի «Ծխան իգոր» և այլ օպերաների մասին բոլոր կամաց խոսել է գովասանքով և դրանք համարել բոլոր գեպքերում խոսել է գովասանքով և դրանք համարել է խոշոր նվազում համաշխարհային օպերային գրականության մեջ, ապա Մուսորգսկու «Բորիս Գոդունով» օպերայի թիամատներ և միանգամայն բացասական կարծիք։ Ազամասին հայտնել է միանգամայն բեմպրման կապակցությամբ։ Թե ինչ է գրել այդ օպերայի բեմպրման կապակցությամբ։

«Բորիս Գոդունով», — հեղինակություն Մուսորգսկու, — իրեն պատմական պիեսա, այն էլ Պուշկինի գրած, ոմի իր համար մասնակությունը, բայց իրեն օպերա նա գեղարվեստի ցուցակից դուրս պետք է լինի, որովհետև բոլորովին հակամուգիկան հեղինակություն է»։

Կարա-Մուրզան կողմնակից էր մասսայական ժողովը դական տիպի օպերային և ոչ թե իտալական օպերա-սերիալին։ Այդ երեսում է Գրինկայի «Մուլան և Լյուդմիլա» օպերային նվիրված ուցենակայից։ Եթե այդ ալգական է, ապա մեղյին անհամար մնում է անհամականալի, թե ինչո՞ւ նա բացասական կարծիք է հայտնել «Բորիս Գոդունովի» նման մի օպերայի մասին, որի գլխավոր հերոսը ժողովուրդն է։ Ըստ երեսութիւն այստեղ դեր է խաղացել Մուսորգսկու նոր ոճը, որը խորթ էր ոչ միայն Կարա-Մուրզայի, այլև շատ-շատերի համար։

Վերլուծելով Զայկովսկու «Մազեպա» օպերայի կատարումը Կարա-Մուրզան գրում է հետևյալը։

«Մագեպա», — երաժշտություն Զայկովսկու, — կարելի է համարել սիմֆոնիական ձևով գրված օպերա: Սկզբից մինչև վերջ դուք լսում եք մտածված կանոնավոր և ավելի հոգեկան դրության համապատասխան երգ: Ոչ մի տեղ չի երևում ոչ մի սույնուն, ոչ մի անհարմար դարձվածք, սահման, վսեմ ձըդումներով, կարծես իմաստուն մուզիկա լինի: Բայց և այնպես դա Զայկովսկու թույլ գրվածքներից մեկն է»:

Կարա-Մուրզան խոսելով նապավնիկի «Դուքրովսկի» օպերայի մասին, տալիս է հետեւյալ գնահատականը.

«Նապավնիկի «Դուքրովսկի» օպերան, գրավել էր բարձր պատվավոր տեղ է բռնում: Այդ օպերան ոռուաց օպերաների գլխիկայի հետևողը, իր մուզիկան գրել է բոլորովին այլ եղանակով: Գլխիկան, ոռուաց գեղարվեստական մուզիկան ստեղծելով, ժողովրդականին էլ քաղաքացիություն տվեց, մինչդեռ նապավնիկի օպերայում ոչ մի ոռուաց եղանակ չենք լսում: Նա հետևել է գեղարվեստին միայն, բայց և այնպես դա ոռուաց սիրելի օպերաներից մեկն է, որովհետև նյութը Պուշկինից է վերցրած և երաժշտությունն էլ բավական գեղեցիկ և մատչելի է»:

Այս մի քանի օրինակը միանգամայն բավական է ցուց տալու համար այն, որ Կարա-Մուրզան ուշի-ուշով հետեւում էր ոռուական օպերայի զարգացմանը, ուրախությամբ գնահատում նրա նվաճումները և համարձակ կերպով և յուրատեսակ ձևով քննադատում նրա թերությունները:

Իր ոեցենզիաներում նա ոչ միայն կանգ է առել ոռուական կոմպոզիտորների առանձին ստեղծագործությունների վրա, այլև արել է մի քանի ընդհանրացումների: Այսպես օրինակ իր մի հոդվածում, տպված «Մշակ»-ի 1900 թվի փետրվարի 26-ի և 37-ում, բերելով թվական տվյալներ նա ցույց է տալիս ոռուական օպերաների տեսակարար կշռի աճումը թիֆլիսի օպերայի թատրոնի ոեպերտուարում: Այսպես 1899 թվի սեպտեմբերի 19-ից մինչև 1900 թվի փետրվարի 20-ը թիֆլիսում ներկայացվել է 13 եվրոպական կոմպոզիտորնե-

րի 22 օպերաները, և ոռուաց 8 կոմպոզիտորների 23 օպերաները: Ներկայացումների թիվն ընդամենը կազմել է 146, որոնցից եվրոպական օպերաների ներկայացումներ—81, ուռուական օպերաներինը—65, որը կազմում է ընդհանուր թիվ 44,5 տոկոսը: Եթե նկատի ունենանք այն, որ դրանից 20 տարի առաջ այդ տոկոսը հազիվ հասնում էր հինգի, իսկ 10 տարի առաջ 15 տոկոսից ավելի չէր, ապա մեզ համար միանգամայն պարզ կլինի ոռուական օպերայի տեսակարար կշռի աճումը թատրոնական ոեպերտուարում:

Ողջունելով ոռուական օպերաների և նրանց ներկայացումների քանակական աճը, Կարա-Մուրզան ավելացնում է.

«Յանկալի կլիներ, որ մեր հեղինակները միմիայն օպերաների թիվն ավելացնելով շղեկավարվեին, այլ օրինակ առնելով եվրոպական կլասիկական գրվածքներից, գեղարվեստին ավելի մեծ տեղ տային և շովինիստական նեղ հայացքներով գրված օպերաները ծրագրից դուրս գցեին, որով թե մեծ ծառայություն կմատուցանեն երաժշտական գրականությանը և թե կազատեն հասարակությունը թեր ու դեմ կարծիքների մոլորեցնող բացարություններից»:

Մի այլ տեղ Կարա-Մուրզան ընդգծում է ոռու կոմպուտորների հետեւյալ դրական հասկությունը.

«Մուս կոմպոզիտորների ամենալավ հատկություններից մեկն այն է, որ իրենք օպերաների համար նյութեր ընտրում են տաղանդավոր բանաստեղծներից, գրվածքներից, որով օպերայի կեսը պատրաստ կարելի է համարել...»:

Մենք հնարավորություն չունենք մեջ բերել Կարա-Մուրզանը առողջ առույթները ոռուական կոմպոզիտորների և նըրանց ստեղծագործությունների մասին: Բավական համարելով վերը կատարված մեջբերումները, մենք միայն ցանկանում ենք մատնանշել, որ նրա այդ կարգի ասույթները բավական շատ են և կարող են նյութ ծառայել առանձին ուսումնասիրության:

Կարա-Մուրզան լուրջ ուշադրություն է դարձրել նաև եվրոպական կոմպոզիտորների օպերաների վերլուծման վրա:

Այստեղ նույնպես նա չի քաշվել իր համակրանքն ու հակակրանքն արտահայտելուց: Նա առանձնապես հավանել է «Ֆառատ», «Միգոլետո», «Հուգենոտներ», «Ախտ», «Տրավիատա», «Բոհեմա» և մի շարք այլ օպերաներ: Այս բոլոր օպերաների մասին նա իր ռեցենզիաներում խոսել է բազմիցս:

Իր ռեցենզիաներում Կարա-Մուրզան քննության է առել օպերաների ոչ միայն երաժշտական, այլև հասարակական-քաղաքական կողմը: Նա հատկապես ընդգծել է օպերաների բովանդակության սոցիալական մոմենտը և դասակարգային էությունը, նրանց դաստիարակչական նշանակությունը և այլ արժանիքները: Այդ մասին մենք կանգ կառնենք իր ժամանակին, եթե կվերլուծնք Կարա-Մուրզայի հայացքներն օպերայի մասին ընդհանրապես և նրա քաղաքական դավանագի համար կապված հարցերը: Իսկ այժմ իբրև հզրակացություն մենք կարող ենք պնդել, որ Կարա-Մուրզան երբեք էլ չի բավականացել սոսկական հիշատակումով այն օպերաների, որոնց մասին նա գրել է իր ռեցենզիաները: Ընդհակառակը, նա միշտ աշխատել է վերլուծել ըստ էության և այդպիսով դյուրմբոնելի դարձնել իր ընթերցողների համար:

Սա Կարա-Մուրզայի ռեցենզիաների մի կարևոր կողմն է, նրա ռեցենզիաների մի այլ, ոչ պակաս կարևոր կողմն այն է, թե նա ինչ վերաբերմունք է ցուցաբերել դեպի դերակատարները և ներկայացումների տեխնիկական կողմը:

Դերակատարների նկատմամբ նա ցուցաբերել է նույնպես անաշառ վերաբերմունք: Եթե նա համարձակորեն քննադատել է օպերաների հեղինակներին, ապա ինքը սիրութինքան պարզ է, որ դերակատարների նկատմամբ նա պիտի ցուցաբերեր ավելի մեծ խստություն: Եվ իրոք, նա անողոք է եղել այն դերակատարների հանդեպ, որոնք չեն համապասխանել իրենց դիրքին: Այդպես է նա վարվել Լոդիչ ազգանունով մի երգչի հետ, որը թեև հոչակված երգիշ էր, բայց երգում էր կոկորդալին ձայնով: Մի այլ երգչի նկատմամբ, որն իր առաջին ելույթի ժամանակ երգել էր խզված ձայնով և վատ տըպավորություն էր գործել նրա վրա, նա արտահայտվում է բացասաբար: Հետագա ներկայացումների ընթացքում այդ

երգիշը ցուց է տալիս, որ դա ժամանակավոր երկույթ էր, երկի մրածության հետևանք: Կարա-Մուրզան շտապում է ուղղել իր սխալը և այդ մասին նա գրում է հաջորդ ռեցենզիաներում:

Կարա-Մուրզան առանձին գովասանքով է խոսել Շալյապինի մասին: Ահա թե նա ինչ է գրում.

«Շալյապինն իբրև դերակատար, հանճար է, նա Մեֆիստոփելից այնպիսի մի գորեղ ոգի է ստեղծել, որ ամեն ինչ իրան է ենթարկում, —բեմ, օրկեստր, խումբ, դերակատարներ՝ դահլիճ, այս բոլորը կարծես նրան հպատակվելու համար են: Նու բարձրից լիովին տիրապետում է բոլորին, ամենքը երկրորդական են, նրա յուրաքանչյուր շարժումը սարսկցնում է տեսնողին: Ամբողջ ներկայացմանը անընդհատ երկու դեր է կատարում, մինը խարելով գրավել իր զոհերին, մյուսը հեկնաբար ծաղրել նրանց և այդ ցնցում է երգով, ձայնի փոփոխությամբ, խաղով և առանձին միմիկայով այնքան ազդու, որ միշտ երկյուղով ես հետևում նրա ամեն մի շարժմունքին»:

Շալյապինի Մեֆիստոփելը նա համեմատում է Ադամյանի Համլետի հետ և ավելացնում է: «Ահավասիկ մի արտաքորդ կարգի Մեֆիստոփել, որի նմանը մինչև օրս չէ տեսնված, այնպիս տարօրինակ, ինչպես Ադամյանի Համլետը»:

Մենք ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել մի հատված նրա այն ռեցենզիաներից, որոնց մեջ նա խոսել է հոչակավոր օպերային երգչունի օրիորդ Պապայանի մասին: Ահա թե նա ինչ է գրել օրիորդ Պապայանի մասին:

«Օրիորդ Պապայանն օժտված է օպերային արտիստունու բոլոր լավ հատկություններով: Նրա հազվագյուտ գեղեցիկ ձայնն ունի լայն դիապազոն, որի բոլոր նոտաները վերեկցմինչև ներքև միտաեսակ մաքուր են թե՛ պայծառ և թե տիսուր բնավորության դերերում: Ֆրագիրովկան հասած է վերին աստիճանի կատարելագործության, նյուանսներն այնքան մըտածված են նույր են, որ ամեն մի մոտիվ առանձին ներգործում է: Տեխնիկան՝ ամենակիրթ, երաժշտագիտությունը՝ անսահման, լսելիքը՝ անփոխարինելի և բախումների զգաց-

մունքը զարգացած։ Այս բոլորը պարզ երևում են նրա կատարած Տրավիատայի և Զիլդայի գերերում։

Ծնորհիվ այս հատկությունների նա չի կարող մուզիկայից կաշկանդված լինել, ընդհակառակը, ոչ թե նա է հպատակվում օրկեստրին, այլ օրկեստրն է իրեն հպատակեցնում, ուրով ինքն ազատ խաղում է, ինչպես կամենում է։ Երգելու շեղան այնքան լավ է, որ կարծես կյանքում լիներ երգելիս խոսելու տեղը և ոչ թե գերում։ Իսկ գերի մեջ այնպես է մըստնում, որ Պապայանի տեղ տիպ է միայն երևում։ Տրավիատայի մահվան տեսարանն անբացատրելի բնական կատարեց։ Իսկ «Թիգոլետո»-ի վերջին գործողության Զիլդայի Հոր Հետ երկծայնը այնպես ագոր էր հնչում Բրոդջի հետ երգելիս, որ միմիրայն գեղեցիկ ներդաշնակություններ և արբանյակ ձայններ էին լսվում, որը կախում ունի ձայնների մաքրութունից։

Զիլդան իր մեռնելով հուզեց հասարակությանը։ Պապայանը ծննդել է երգելու համար։

Այսպիսի հատվածների թիվը բավականին մեծ է ԿարաՄուրդայի ոեցենզիաներում։ Մենք սահմանափակվում ենք միայն մի հատվածով և կարծում ենք, որ նա միանգամայն բավական է ցուց տալու համար Կարա-Մուրդայի վերաբերյանը դեպի արտիստուհի Պապայանը։

Այսպիսի դրական գնահատական է տվել նա նաև այլ երգիշ-երգչուհիների՝ Բրոդջի, Բորիսենկոյի, Սերեբրյակովի, Տերյան-Ղորջանյանի և ուրիշների նկատմամբ, որոնք նորհալի կերպով կատարել են իրենց գերերն օպերային ներկայացումների ընթացքում։

Իր ոեցենզիաներում Կարա-Մուրդան ուշադրություն է դարձրել ներկայացումների նաև այլ էլեմենտների վրա։ Նրա կծու դիտողությունները շարժվող գեկորացիաների (ժայռեր, պատեր և այլն), քայլել շիմացող ստատիստների (անխոռ դերակատարների), պարերի, հագուստների և տեխնիկական կարգի այլ խնդիրների մասին՝ ցուց են տալիս, որ նա բազմակողմանի մոտեցում է ունեցել ներկայացումների նկատ-

մամբ և ցանկացել է տալ ամբողջական պատկերն իր դիտած և քննության ենթարկած ներկայացումների, ելակետ ընդունելով այն, որ «ներկայացումների ներգործության համար հարկավոր է բեմական ամբողջություն»։

Նույնպիսի մոտեցում է նա ցուցաբերել նաև համերգների նկատմամբ։ Նա առանձին խստությամբ է վերաբերվել այն կոնցերտանտների նկատմամբ, որոնք համերգների վրա նայել են միայն որպես փող աշխատելու միջոց։ Այսպիսի կոնցերտանտներին նա պախարակել է։ Նրա կարծիքով ամեն մի համերգ անպայմանորեն պետք է հետապնդի որևէ դրական նպատակ և նպաստի հասարակության ճաշակի զարգացմանը։ Ամեն մի համերգ պետք է որևէ նորություն տա հասարակությանը։ Համերգները պետք է անպայմանորեն նախապատրաստված լինեն ըստ արժանվույն և ապա միայն ներկայացվեն հասարակությանը։

Կարա-Մուրդայի երաժշտական ոեցենզիաները մեզ համար ունեն խոշոր նշանակություն հետեւյալ կարեոր պատճառներով. նախ, որ նրանք իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ փաստական տվյալներ Թիֆլիսի երաժշտական կյանքի մասին և երկրորդ, որ նրանց մեջ ցայտում կերպով բացահայտվում է հեղինակի վերաբերմունքը դեպի այդ ժամանակի երաժշտական կարևորագույն երևույթները։

Իր ոեցենզիաներում և երաժշտական-տեսական մի քանի այլ հոդվածներում, որոնք տպագրվել են «Մշակ»-ում և «Մուրճ»-ում, Կարա-Մուրդան արտահայտել է նաև իր էսթետիկական հայացքները։ Այստեղ մենք կաշխատենք վերլուծել նրա այդ էսթետիկական հայացքները՝ հենվելով հատկապես այդ հոդվածների վրա։

Կարա-Մուրդան երաժշտության վրա նայում էր որպես մի արվեստի վրա, որն ապրում է անընդհատ զարդացման պրոցես։ Իր «Արևելյան տարրը ելլուպտական երաժշտության մեջ» հոդվածում* նա գրում է.

* «Մուրճ» 1901 թ., № 1, էջ 230—234։

«Կյանքը հոսանք է, իսկ երաժշտությունն ունի իր կյանքը, ուրեմն իր անցյալը, ներկան և ապագան։ Կյանքն ընթանում է դեպի նորը։ Երաժշտությունն ևս ետ չի մնում»։

Այս խոսքերով նա ընդգծում է երաժշտության զարգացման դիալեկտիկական պրոցեսը և ենելով դրանից աշխատում է վերլուծել ու հասկանալ այդ պրոցեսի պատմական առանձնահատուկ օրինաշափությունը։ Նա գտնում է, որ «Երաժշտությունը, ինչպես և գիտությունն ու արվեստը, ծագեցվ Ասիայում, անցնում և զարգանում է նախ Հունաստանում, հետո Իտալիայում, Իսպանիայում և ապա տարածվում Եվրոպայի մյուս մասերում»։

Այսպիսով Կարա-Մուրզան ճիշտ կերպով է դնում երաժշտության զարգացման ընհանուր պատմական պրոցեսը։ Այստեղ կարեոր է նաև այն, որ նա երաժշտությունը չի համարում որևէ ժողովրդի սեփականություն, նրա մենաշնորհը։ Նա երաժշտությունը համարում է համամարդկային մի կուտուրա, որի զարգացմանը տարբեր ժամանակներում նպաստել են տարբեր ժողովուրդներ, ներմուծելով այդ կուտուրայի գանձարանն իրենց լուման, որը համապատասխանում է տվյալ ժողովրդի երաժշտական ընդունակությանը։ Համամարդկային այդ երաժշտական կուտուրան ունեցել է իր պատմական անցյալը, ունի իր ներկան, որը տարբեր արտահայտություն է գտնում տարբեր ժողովուրդների մոտ, կունենա նաև իր ապագան։ Այդ կուտուրան նա բաժանում է երկու խոշոր հատվածի՝ Եվրոպական և ասիական երաժշտական կուտուրաների, որոնք տարբերվում են միմյանցից, բայց որոնք փոխադարձաբար ազդում են միմյանցիք։

Կարա-Մուրզան Եվրոպական օրինտացիայի կողմնակից էր։ Ընդ որում նա «Եվրոպական» ասելով հասկանում էր նաև ոռականը։ Նա այն կարծիքին էր, որ ասիական, այդ թվում նաև հայկական երաժշտությունը պետք է ներդաշնակվի՝ օգտագործելով պոլիֆոնիայի և հարմոնիայի նվաճումները։ Եվ իր ամբողջ գործունեության ընթացքում թե որպես

կոմպոզիտոր և թե որպես ժողովրդական երգերի ներդաշնակող ու կատարող նա իրոք դեկավարվել է հենց այդ սկզբունքով։

Ինչպես հայտնի է այդ նույն խնդրի նկատմամբ բոլորովին այլ մոտեցում ցուցաբերեց մեծանուն Կոմիտասը, որը թեև նույնպես հիմնվեց հարմոնիայի և պոլիֆոնիայի նվաճումների վրա, այնուամենայնիվ կարողացավ փնտրել և գտնել ներդաշնակման այն յուրահատուկ լեզուն, որն անհրաժեշտորեն բխում էր հայկական երաժշտության ոճական առանձնահատկություններից։ Այսպիսով Կարա-Մուրզայի և Կոմիտասի մոտեցումները ժողովրդական երգերի ներդաշնակմանը մեծապես տարբերվում են միմյանցից։ Ինչ խոսք, որ Կոմիտասի մոտեցումն ավելի ճիշտ է և համապատասխանում է հայկական երաժշտական կուտուրայի զարգացման առաջընթացին։ Այդ պատճառով էլ Կոմիտասի ստեղծագործական մեթոդը դարձավ մեր երաժշտության հետագա զարգացման հիմքը։

Կարա-Մուրզայի ուեցենպիհաներում և երաժշտագիտական հոդվածներում մեծ տեղ է հատկացված այն խնդիրներին, որոնք վերաբերում են բեմական ներկայացումներին, հատկապես օպերային։ Նա օպերայի վրա նայում է որպես սինթետիկ ժանրի վրա։ Ահա թե ինչ է գրում նա այդ մասին։

«Օպերան իր մեջ պարունակում է չորս գեղարվեստ՝ բանաստեղծություն, նկարչություն, դրամատիկական արվեստ և երաժշտություն։ Եթե օպերայում հեղինակության կամ ներկայացման կողմից գեղարվեստի այս չորս ճյուղերից մեկը թույլ կամ պակասավոր լինի, օպերան շատ բան կկորցնի իր կոչման համար»։

Իսկ ո՞րն է օպերայի կոլումը, ո՞րն է ընդհանրապես բեմի կոչումը։ Կարա-Մուրզան այս հարցերին պատասխանում է հետևյալ կերպ։

«Բեմի կոչումն է ցուցյ տալ մարդկության սիսական և այսպիս ուղղել մարդկանց, որոնք, որքան էլ կրթված լինեն, միշտ թերուս են։ Զբավականանալով ձեռքի տակ եղած բա-

նաստեղության, նկարչության և դրամատիկական արվեստի միջոցներով, բեմը, իր նպատակին ավելի լավ հասնելու համար, դիմում է և շորորդ գեղարվեստին, այն է երաժշտության, որն ազգեցության համար ամենազորեղ և անփոխարինելի միջոցն է:

Այն, ինչ որ բեմը չի կարող անել դրամատիկական ներկայացումներով, նրան հաջողվում է անել օպերաներով, որոնց երաժշտությունը լրացնելով մյուս երեք գեղարվեստների պակասությունը, ուղղակի ազդելով մեր ջղերի վրա, սթափեցնում է մեզ:

Իր ասածն ապացուցելու համար Կարա-Մուրզան բերում է «Թիգոլետո» օպերայի երրորդ գործողության օրինակը, որտեղ Վերդին երաժշտական միջոցներով չափազանց ուժեղ կերպով ընդգծում է ստախոս և անբարոյական հերցոգի ստորությունը և անմեղության տիպար Զիլդայի բարձրությունը: Իրար հակադրելով մի կողմից հերցոգին և նրա նոր սիրուհուն, իսկ մյուս կողմից Զիլդային ու նրա հորը, վերջինս կառողացել է մեծ վարպետությամբ և բացառիկ խորությամբ արտահայտել նրանց հոգեկան ապրումները: Այս տեսարանն իրոք որ ցնցող տպավորություն է գործում ունկելի հասարակության վրա:

Մի այլ տեղ խոսելով թատրոնի նշանակության մասին Կարա-Մուրզան ընդգծում է.

«Թատրոնը մեծերի ուսումնարանն է և՝ կրթում է նրանց, թայց այս սուրբ տաճարը երկայրի սուր է: Աստված մի արասցե, որ նա ընկնի վատ և անազնիվ մարդկանց ձեռքը: Այն ժամանակ նա կառաջացնի անբարոյականության այնպիսի մի տիզմ, որի մեջ մինչև կոկորդը խորասուզված զոհերին եթե ոչ անկարելի, գոնե սարսափելի դժվար կլինի փրկել: Երկու բան ցանկանանք. առաջինը՝ որ բեմը լինի ազնիվ մարդկանց ձեռքում և երկրորդ՝ թատրոնն իր գներով մատշելի դառնա թե ունեղորին և թե շոնեղորին»:

Այս միտքը նա մի քանի անգամ և հետևողականորեն կրկնում է իր հողվածներում ու ուցենզիաներում: Գմլար չէ

տեսնել, որ նա այս խնդրում միանգամայն իրավացի է: Այն, ինչին ձգտում էր Կարա-Մուրզան՝ թատրոնին տալով այդքան խոշոր նշանակություն հասարակության դաստիարակության գործում, այսօր մենք տեսնում ենք իրագործված սովետական իրականության մեջ, որտեղ թատրոնն իսկապես գրանցում է իր կոչման բարձրության վրա և իրագործում է իր առաջ դրված ազնիվ նպատակները:

Նա ամենայն խստությամբ դեմ է գորս եկել այն մարդկանց, որոնց կարծիքով երաժշտությունը լոկ զվարճության միջոց է: Այդ մասին նա գրում է.

«Սխալ կարծիք է, որ երաժշտությունը զվարճության համար է, օպերա գնանք, որ զվարճանանքը Ընդհակառակը, երաժշտությունը շատ լուրջ ֆակտոր է մեզ հուզելու և ուղեղու համար:

Հոչակավոր Հենդելը, արքունական պալատում եպիսկոպոսների ներկայությամբ իր «Օրատորիան» (սրբազն երաժշտական հեղինակություն) կատարելիս, երբ թագավորն ասում է, «Ծնորհակալություն, Հենդել, որ մեզ զվարճացրիր», — Հենդելը բացագանչում է. «Ես նրա համար շեմ գրել, որ ձեզ զվարճացնեմ, այլ նրա համար, որ ձեր պակասություններն ուղղեմ»:

Դժվար չէ կռահել, որ Կարա-Մուրզան միանգամայն համակարծիք է Հենդելի հետ:

Այսպիսով աներկբայցրեն պարզ է, որ Կարա-Մուրզան օպերային և ընդհանրապես երաժշտությանը տվել է չափաղանց խոշոր դաստիարակչական նշանակություն՝ համարելով այն հասարակության դաստիարակման ամենազորեղ ֆակտորներից մեկը:

Ելնելով դրանից նա պախարակել է նաև այն մարդկանց, որոնց կարծիքով երաժշտությամբ զբաղվելը փող աշխատելու հեղտ ճանապարհ է: Ահա թե ինչ է գրում նա այդ նույն հոգվածի շարունակության մեջ:

«Սխալ է նմանապես ասել, որ արտիստներն այս ասպարեզով հեշտ ճանապարհ են գտել փող աշխատելու: Ընդհա-

կառակը, եթե կա աշխարհում դժվար գործ, ուստի երաժշտությամբ անդրադարձնելու գործն է:

Օպերային արտիստներին աշխարհ տաս՝ քիչ է: Մարդկությունը եթե կարողացել է հաստատել մի բարձր հիմնարկություն, դա այս տաճարն է, ուր երեք մեծ պրոֆեսորներ մեզ դասեր են տալիս, դրանք են՝ թատերգության հեղինակը, երաժշտության հեղինակը և դերակատարը: Չնայելով, որ երեք անձ են, բայց դաղափարը մի՛ է»:

Այս է Կարա-Մուրզայի կարծիքն օպերայի, որպես ունկըի հասարակության դաստիարակման հզոր միջոցի մասին: Կարեռ է այն, որ նա այդ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև արվեստի մնացած բոլոր տեսակներին: Այս բանում համոզվելու համար մենք կրերենք մի օրինակ ևս և դրանով կսահմանափակվենք:

Խոսելով խորմեյստեր Սլավյանսկու մասին, որն իր խմբով եկել էր Թիֆլիս և համերգներ էր տվել, Կարա-Մուրզան ասում է. «Սլավյանսկին ծառայում է այն դաղափարին, որ ժողովրդին պետք է կրթել տարրական երաժշտության մեջ և աշխարհին էլ ծանոթացնել ժողովրդական երաժշտության շարութափյան հետ: Այդ դաղափարը տարտօնուու համար ունի իր կազմած մշտական խառն խորմը, որը ման է ածում զանազան քաղաքներ, բեմ է դուրս բերում, կոնցերտներ է տալիս և գործը բեմից ցուց տալով, իր նպատակին հայտնի շափով հասնում է: Ռամիկը հրճվում է, որովհետև նրա սրտից, նրա կյանքից է երգում, իսկ մյուս դասակարգերն ուրախանում են, որ լսում և սովորում են ժողովրդական երգեր, որոնց հեղինակությունը բացի կլասիկական մուզիկայից բոլոր մյուս միջին երաժշտական հեղինակություններից բարձր է, հետևապես և ավելի կրթիչ»:

Ի՞նչ կարելի է եղբակացնել վերոհիշյալ մեջբերումներից: Ամենից առաջ այն, որ Կարա-Մուրզան արվեստի ասպարեզի վրա նայել է որպես սրբության վրա, որտեղ ոչ մի դեպքում չպետք է մուտք գործեն շահամոլ և արկածախնդիր մարդիկ: Երկրորդ, արվեստը պետք է անպայմանորեն իրագործի իր

դաստիարակչական դերը: Երրորդ, արվեստը պետք է մատչելի լինի ժողովրդին, որովհետև ումիկ դասակարգն է կազմում հասարակության ձնշող մեծամասնությունը և մյուս դասակարգի հետ հավասար կարիք ունի լուրջ գեղարվեստական դաստիարակության: Չորրորդ, ամեն մի արվեստագետ պարտավոր է իրեն մատչելի միջոցներով իրագործել վերոհիշյալ վեհականությունը:

Ահա սրանք են Կարա-Մուրզայի հայացքները գեղարվեստի, մասնավորապես երաժշտության նշանակության մասին: Սակայն շատ կարեռ է նաև այն, որ նա չի սահմանափակվել միայն իր հայացքները շարադրելով, այլ աշխատել է իր պրակտիկ երաժշտական-հասարակական գործունեությունն ի սպաս դնել ուամիկ դասակարգի երաժշտական դաստիարակության գործին: Նրա մասին ամբողջությամբ կարելի է կրկնել այն բոլորն, ինչ նա գրել է խորմեյստեր Սլավյանսկու վերաբերյալ: Այս վեղջինիս նման նա էլ աշխատել է ժողովրդին չկրթել տարրական երաժշտության մեջ և աշխարհին էլ ծանոթացնել ժողովրդական երաժշտության հարստության հետո»: Տարբերությունը միայն նրանց գործադրած միջոցի մեջ է: Եթե Սլավյանսկին ունեցել է իր մշտական խոռմը, որի հետ նա շրջել է տարբեր քաղաքներ և համերգներ տվել, ապա Կարա-Մուրզան իր խմբերը կազմակերպել է իր շրջած քաղաքների հասարակության ներկայացուցիչներից և այդպիսով նա ավելի խորը հետք է թողել այդ հասարակության մեջ: Նրա գործունեությունն իր արդյունքների տեսակետից անհամեմատ ավելի բեղմնավոր է եղել, քան մեր անցյալի իրականության մեջ գործած հասարակական որևէ այլ գործի գործունեությունը:

Կարա-Մուրզայի իդեոլոգիական դեմքը լրիվ՝ կերպով պատկերելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև մի շատ կարեռ խնդրի վրա: Դա Կարա-Մուրզայի քաղաքական դավանանքի հարցն է:

Մենք կաշխատենք մեր այս առաջին փորձով վերականգնել Կարա-Մուրզայի ճշմարտացի քաղաքական դեմքը: Զպետք է մոռանալ այն, որ այս կապակցությամբ մինչև այժմ տարածվել են մի շարք բոլորովին շհիմնավորված կարծիքներ Կարա-Մուրզայի մասին: Խնդիրն այն է, որ գոյություն չունի որևէ փաստաթուղթ, որն ապացուցեր նրա պատկանելությունն այս կամ այն պարտիային: Մեզ մնում է հիմնվել Կարա-Մուրզայի ժամանակակիցների և հատկապես նրա եղբայրների ցուցմունքների վրա: Խսկ նրանք միաձայն պնդում են, որ նա երբեք չի պատկանել պարտիաներից որևէ մեկին:

Այժմ քննենք այն հարցը, թե Կարա-Մուրզան եղե՞լ է արդյոք ազգայնական: Այն մարդիկ, որոնք պնդում են, թե Կարա-Մուրզան եղել է ազգայնական, նկատի են ունենում միայն այն, որ նա իր համերդների ընթացքով կատարել է մի շարք ազգային-հայրենասիրական երգեր և գրել է մի քանի ինքնուրույն երգեր Ռափայել Պատկանյանի ռազմաշրջան բանաստեղծությունների վրա: Ճիշտ է և առաջինը և երկրորդը, քայլ դա բավական չէ Կարա-Մուրզային ազգայնականների շարքը դասելու համար: Ամենից առաջ հանրահայտ ճշմարտություն է այն, որ եթե Կարա-Մուրզան իր ստեղծագործությունների ցանկում և համերգների ծրագրերում որոշակի տեղ է հատկացրել վերոհիշյալ երգերին, եթե նա հատուկ նշանակություն է տվել հայոց լեզվին և իր համերգներն ու դասախոսությունները կազմակերպել է հայերեն, — ապա նաև այդ արել է ոչ թե որպես ազգայնական-շովինիստ, այլ որպես իր ժողովրդի հարազատ դավակը, ժողովրդի, որի կովտուրան, գիրն ու գրականությունը, լեզուն մշտական հալածանքի էին ենթարկվում ցարական կառավարության կողմից, մի ժողովրդ, որի գլխին,

որպես դամոկլան սուր, կախված էր Գիզիկական ոչնչացման ահավոր վտանգը: Քաջ գիտենալով, որ ցարական կառավարությանն անհրաժեշտ էր Հայաստանն առանց հայերի, Կարա-Մուրզան չէր կարող շանել այն ամենն, ինչ իրենից էր կախված, որպեսզի իր ազգակիցների սրտերում թեժ պահի ազգային հապալությունը և ստիպի նրանց մտածել իրենց ազգային ինքնուրույնության ստեղծման, իրենց բազմադարյան կովտուրայի պահպանման ու զարգացման մասին:

Ահա թե ինչու նա այդքան մեծ եռանդ ցուցաբերեց մայրենի լեզվի պրոպագանդայի հարցում և այն հետեւղականորեն, կարմիր թելի նման անցկացրեց իր ամբողջ գործունեության ընթացքում:

Կարա-Մուրզան միշտ էլ հեռու է եղել շովինիզմից: Այդ են ապացուցում հետեւյալ փաստերը, որոնք որևէ կասկածի ենթակա չեն:

1) Շովինիստ մարդն իր համերգների ծրագրերում շէր կարող մտցնել ուրիշ ժողովուրդների երգերը: Մինչդեռ իրական փաստ է, որ Կարա-Մուրզան միշտ էլ իր ծրագրերում տեղ է տվել ոռուսական, ուկրաինական, քրդական, վրացական, մոլդավական և մի շարք այլ ժողովուրդների երգերին: Բնդ որում վերցնելով այդ երգերի մայր եղանակները նա քառածայնել և այնպես է կատարել: Բացի այդ, նա իր ծրագրերում մտցրել և համերգների ընթացքում կատարել է վերոհիշյալ ժողովուրդների ոչ միայն ժողովրդական երաժշտության, այլև կլասիկ երաժշտական ժառանգության նմուշները: Այդ մասին պերճախոս կերպով վկայում են նրա համերգների ծրագրերը, որոնք գտնվում են հեղինակի արխիվում և որոնց մեջ մենք հանդիպում ենք ոռուսական, իտալական, ֆրանսիական, գերմանական, լեհական, հունգարական և այլ ազգի կոմպոզիտորների ստեղծագործությունների:

2) Կարա-Մուրզայի կազմակերպած երգեցիկ խմբերում իրար կողք-կողքի կանգնել և երգել են ոչ միայն հայեր, այլև ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ (ուստաներ, վրացիներ, աղբբեջանցիներ և այլն): Շովինիստ մարդը չէր կարող հանդուրժել այդպիսի մերձեցով այն ժողովուրդների միջև, որոնք ցարական կառավարության կողմից հակադրվում էին միմյանց և որոնց միջև անընդհատ սերմանում էին ազգային ատելությունն ու թշնամանքը:

3) Կարա-Մուրզան համերգներից առաջ և այլ առիթներով կարդացած իր գասախոսություններում միջտ էլ առանձին տեղ է հատկացրել համամարդկային կուլտուրայի ուսումնափության և ժողովուրդների եղբայրասիրական համագործակցության գաղափարին: Այդ մասին վկայում են բոլոր նրանք, ովքեր երգել են նրա խմբերում և դեռևս կենդանի են:

4) Վերջապես շափականց ցուցադրական փաստ է այն, որ նա հրապարակայնորեն, մամուլի միջոցով դիմել է ուստի կոմպոզիտորներին՝ հորդորելով դուրս գցել օպերաների ցանկից «Շովինիստական նեղ հայացքներով գոված օպերաները» (տես վերը կատարած մեջբերումը): Շովինիզմով տառապով մարդը երբեք չէր կարող նման որևէ պահանջ առաջադրել ուստի կոմպոզիտորներին:

Եյս բոլոր փաստերը գալիս են անելիքայորեն ապացուցելու այն, որ Կարա-Մուրզան չէր կարող և չի պատկանել նեղսիրտ ազգայնականների շարքին: Ընդհակառակը, նա իր հայացքներով եղել է ինտերնացիոնալիստ, բայց լինելով իր տաճաշված ժողովրդի հարազատ զավակը, իր բալոր ուժերն ու ընդունակություններն ի սպաս է դրել նրա կուլտուրայի զարգացմանը: Նրա միակ ցանկությունն է եղել տեսնել իր ժողովուրդը կանգնած առաջավոր կուլտուրական ժողովուրդների շարքում: Միայն դրանով պետք է բացատրել այն, որ նա հոգով և մարմնով անվերապահորեն նվիրվեց հայ ժողովրդի ազգային երաժշտական կուլտուրա-

յի զարգացման գործին, հայ հասարակության երաժշտական մակարդակի բարձրացման գործին: Միայն դրանով պետք է բացատրել այն, որ նա այդքան մեծ ճիպ ու ջանք գործադրեց և երեք անգամ փորձեց իր խմբով մասնակցել համաշխարհային ցուցահանդեսներին (Վիեննայի, Զիկագոյի և Փարիզի) և այդպիսով ցուցադրել ամբողջ աշխարհին ու ճանաչել տալ հայկական բազմադարյան հարուստ և ինքնուրույն երաժշտական կուլտուրան: Նրա մեղքը չէ, որ նրան չհաջողվեց այդ կարենոր գործերը գլուխ բերել նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով:

Կարա-Մուրզայի քաղաքական հայացքների մասին ավելի լրիվ գաղափար կազմելու համար մենք ավելորդ չենք համարում կատարել մի քանի մեջբերումներ նրա ուցենդիմաներից: Այդ մեջբերումներն առանձին պարզությամբ բընորոշում են նրա քաղաքական դեմքը:

Վերլուծելով «Ծիգուետո» օպերայի կատարումը, Կարա-Մուրզան ավելացնում է: «Ծուրք ամբողջ ժամանակ լաց էք լինում և հայցոյում շարժիքի պատճառ Հերցոգին»: Եվ ապա դիմելով հասարակությանը նա կոչ է անում: «Տեսե՞ք «Ծիգուետո» օպերան, լսեցե՞ք նրա երաժշտությունը, նրա հիշատակը ձեր սրտում կանգուն պահեցեք: Թող դա ձեր սուրբ գիրքը լինի: Պաշտպանեցե՞ք անմեղ կույս Զիլդաներին և իմաստ արտահայտեցեք ձեր զգվանքը դեպի անբարոյական բարձրաստիճան Հերցոգները»:

Պարզ է, որ միայն իսկական դեմոկրատը գալիցինան ուժիմի պայմաններում կարող էր այդպիսի մի կոչ անել և այդքան համարձակ կերպով դուրս դալ բարձրաստիճան Հերցոգների դեմ:

Բացի այդ, իր մի նամակում, ուղղված «Մշակ»-ի խմբագրությանը, Կարա-Մուրզան վերլուծման ենթարկելով Շուշի թեմական դպրոցի դրությունը, գրում է.

«Հարցնում ենք: «Ենչո՞ւ դպրոցը ենթարկված պիտի լինի մի այսպիսի աննախանձելի դրության»: Եվ պատասխանում ենք: «Նրա համար, որ թարգապետը կարողացել է իր

շողոքորթություններով համոյանալ բուրժուա դասակարգին. նա այժմս էլ, այդ փորձություններից հետո վիզիտներ է անուամ հարուստների մոտ, որպեսզի նրանց ուժով հաստատ մնա իր պաշտոնում և արժանանա նրանց աջակցության, որին նա դիմում է միշտ:

Եվ հենվելով աղայական դասակարգի աջակցության վրա, նա դպրոցի վարչության մեջ մտցրել է եզրիտական կարգեր: Նա իր խստությամբ այն տեղն է հասել, որ արգելում է դպրոցի երաժշտագետ ուսուցչին ազատ ժամերին պատրաստած բարեգործական կոնցերտ տալու: Նա ունի արբանյակների, աշակերտների՝ ծառաների մի լեզուն, որոնց հանձնում է հսկել մյուս աշակերտների ամեն մի քայլին: Այս ձեզ կըթություն, որ տանում է աշակերտներին միմիայն դեպի կորուստ:

Այսպիսի համարձակությամբ դուրս գալ մի կրոնավորի դեմ և մամուլի մեջ խարսազնել նրա սխալները, դուրս գալ բուրժուա կամ աղայական դասակարգի այն ներկայացուցիչների դեմ, որոնք իրենց հովանավորության տակ էին վերցրել Բ.... վարդապետի նման մարդկանց,— կարող էր միմիայն համոզված դեմոկրատը, ժողովրդի խսկական զավակը:

Կարա-Մուրզան ընդհանուր առմամբ ունեցել է բացասական վերաբերմունք դեպի կրոնը և նրա սպասավորները: Նա եղել է համոզված աթեւստ: Այդ են ապացուցում պրոֆեսոր Ք. Ս. Կոշնարյանի և Պետրոս Կարա-Մուրզայի վըկայությունները: Նրանք պատմուած են, որ Կարա-Մուրզան իր երեխաներին շի կնքել մինչև 10—11 տարեկան հասակը և միայն դպրոց ուղարկելու համար նա ստիպված է եղել հետին թվով ձևակերպել երեխաների կոնմքը և ստանալ համապատասխան տեղեկանք, առանց որի երեխաներին դպրոց չեն ընդունում:

Այս հարցի լուսաբանության համար շատ կարևոր նըշանակություն ունի հետևյալ փաստը, որի մասին պատմում է Պետրոս Կարա-Մուրզան իր հիշողություններում:

«1889 թվին Քրիստափոր Մակարովիչը մեզ երեքիս (իսպա-քը Պողոս, Պետրոս և Մարիա Կարա-Մուրզաների մասին է.—Մ. Մ.), վերցրեց և Ղրիմից փոխադրեց Բաքու, որպեսզի ինձ և եղբորս տեղավորի միջնակարգ դպրոցում: Նրա բնակարանում ստանալով առանձին սենյակ երեքիս համար, մենք ավագ քրոջս հետ միասին կարգավորեցինք մեր սենյա-կը և պատերից կախեցինք թանկարժեք սրբապատկերներ, որոնք ստացել էինք մեր մորից իբրև նվեր Ղարաբալ-Բաղա-թից մեկնելու մոմենտին և հետո էլ պատվեր էինք ստացել ամեն օր որոշյալ ժամին աղոթել աստծուն, ինչ մենք կա-նոնավոր կերպով կատարում էինք: Բայց որքան մեծ եղագ մեր զարմանքը և կրոնական գագամունքների վիրավորանքը, մեր մի գեղեցիկ օր Քրիստափոր Մակարովիչը մտավ մեր սենյակը և մեզ ստիպեց պատերից ցած բերել բոլոր սրբա-պատկերները և հանել խաչերը, որոնք նույնպես մենք կրում էինք մոր պատվերով: Սրանով սկսվեց մեր հակակրո-էինք մոր պատվերով: Այսանով սկսվեց մեր համակրո-նական դաստիարակությունը, որը տանում էր Քրիստափոր Մակարովիչը սիստեմատիկ կերպով, հետևողականորեն և Մակարովիչը սիստեմատիկ կերպով, հետևողականորեն և Մակարովիչը սիստեմատիկ կերպով, ոչ միայն մեր՝ երեխաներիս նը-հաստատակամությամբ ոչ միայն մեր՝ երեխաներիս նը-կատմամբ, այլև մեր քրոջ նկատմամբ, որպեսզի նա մեզ կարգաված կրոնական ազգեցություն չգործեր»: (Մեջբերումը կա-պարփած է վերը բերված նամակից):

Կոմենտարիաներն ավելորդ են: Այս վկայությունը միանգումայն պարզ կերպով ապացուցում է մեր ասածն այն միանգումայն պարզ կերպով Կարա-Մուրզան եղել է աթեւստ: Ինչ վերա-ձանական իրոք Կարա-Մուրզան եղել է աթեւստ: Ինչ վերա-ձանական իրոք կարգին, որ նա բացասական վերաբերմունք բերում է այն հարցին, որ նա բացասական վերաբերմունք է ոնցել նաև կրոնի սպասավորների նկատմամբ, ապա այդ է ոնցել նաև կրոնի սպասավորների նկատմամբ, ապա առաջացագ նրանից, որ կրոնի սպասավորներն սկսած կա-պահանջական առաջնորդներով ու քա-թողիկոսից և վերջացրած թեմական առաջնորդներով ու քա-թողիկոսից և վերջացրած թեմական հայացքներով հանաներով ոչ միայն իրենց հետադիմական հայացքներով հա-խորհություններ էին ստեղծում քառաձայն երգեցողության տա-խորհություններ էին ստեղծում քառաձայն երգեցողության տա-

ծաղկեց քառաձայն երգեցողությունը հայկական եկեղեցի ներմուծելու ուղղությամբ, ապա այդ պետք է բացատրել միայն նրանով, որ եկեղեցին նրա համար հանդիսանում էր բազմամարդ մի լսարան, որտեղ նա կարող էր բազմաձայն երդի գաղափարը տարածել ժողովրդական լայն մասսաների մեջ: Այս դեպքում նա եկեղեցու վրա նայել է լոկ որպես մի-չոցի վրա իր նպատակին հասնելու համար:

Մեզ մնում է պարզել մի շատ կարևոր հարց ևս: Դու Կարա-Մուրզայի վերաբերմունքն է ցարական կառավարության նկատմամբ:

Կարա-Մուրզան միշտ էլ թշնամաբար է տրամադրված եղել ցարական կառավարության նկատմամբ: Դա հետևանք էր այն բանի, որ որպես առաջադիմական հայցքների տեր մի մտավորական նա առանձնապես սուր կերպով է զգացել ցարական կառավարության կիրառած քաղաքականությունն իր ժողովրդի նկատմամբ: Հայկական դպրոցների ու մամուլի օրգանների փակումը, լեզվի հետապնդումը, ազգամիջյան առելության ու կոտորածների հրահրումը, հայերի ֆիզիկական ունչացումը հետապնդող քաղաքականությունը և այլն չեն կարող առաջ չըերել բացասական վերաբերմունք դեպի ցարական ուժիմը այնպիսի մի զգայուն մարդու մեջ, ինչպիսին Կարա-Մուրզան էր:

Մեր ասածները հաստատելու համար մենք դարձյալ դիմում ենք Պետրոս Կարա-Մուրզայի վկայությանը: Վերը հիշված նամակում նա այս մասին գրում է.

«Յարական ուժիմի նկատմամբ նա որոշակի կերպով բացասաբար և թշնամաբար էր վերաբերվում: Նա անձամբ ականատես էր լինում զանազան քաղաքներում ցարական իշխանությունների կողմից հայկական դպրոցների փակման դիաստերին: Նա ծանր էր վերապրում և բառացի կերպով տաճքվում էր այդ ժամանակվա այս կամ այն հասարակական գործչի հետապնդման և ձերբակալման մասին լուրեր առանալիս: Նրա ամբողջ երաժշտական աշխատանքը համա-

տարած պրոպագանդա և ազիտացիա էր հօգուտ հայկական ազգային ազատագրական շարժման: Նա ընտրում էր հայկական ժողովրդական այնպիսի երգեր, որոնց բովանդակությունն արտահայտում էր ազգային վիշտը, գլուղացու անելանելի վիճակը, և կամ երգեր, որոնք զարգացնում էին հայրենասիրական զգացմունքները և պայքարի կոչ էին անում հանուն իրենց ազգային իրավունքների պաշտպանության:

Քրիստովոր Մակարովիչը բոլոր այս երգերը մեծ դժվարությամբ էր մտցնում համերգների ծրագրերում, քանի ուղարկված մի քաղաք, որտեղ քաղաքավուսը կամ ոստիկանապետը մի քաղաք, որտեղ ափագրավուսը կամ սատիկանապետը խոչընդուներ չստեղծեին ափիշաներ տպագրելու և փակցընելու գործում՝ մատնանշելով համերգներում կատարվելու երգերի տեսնդենցիովության վրա: Այնպիսի երգեր, ինչպես երգերի տեսնդենցիովության վրա: Այսպիսի երկել, ողորմելի երկել, ժամանակը «Բավկ», եղբայրք, վիզը ճկել, ողորմելի երկել, ժամանակը հասել է արդ հայ դրոշակին ծածանվել», տեղական գրաքննիչների կողմից չնշվում էին ծրագրերից և դա մշտական քրիստովոր Մակարովիչի մեջ դժկամություն և բարպես գրիստափոր Մակարովիչի մեջ հետիւն նկատմական դիմումն էր հարուցում գոյություն ունեցող ուժիմի նկատմամբ: Այսպիս զարգացավ և ամրապնդվեց նրա թշնամամբ:

Մենք հասուկ դիտավորությամբ կատարեցինք այս երկար մեջբերումը, որպեսզի կենդանի վկայի խոսքերով հաստատենք մեր ասածները: Մի բան անվիճելիորեն պարզ է: որ Կարա-Մուրզան իր ամբողջ գործունեության ընթացքում հավատարիմ մնաց իր ժողովրդի շահերին, որպես համոզված դեմոկրատ: Եվ մեր կարծիքով բնալ էլ պատահական չեր, որ նա 1898 թվի վերջերին գտնվելով Մոսկվայում, շըմվելով ուսուցիչուն հայ ուսանողության հետ, այդքան հեշտ ապահովություն համաձայնեց իր խմբական փորձերով գոյություն համաձայնեց իր խմբական փորձերով այդ կայդ ուսանողների կազմակերպած գաղտնի ժողովը, այդ կայդ ուսանողների ձերբակալվեց և ապա 1899 թվի սկզբներին պակացությամբ

Մուկվայից աքսորվեց Պետրովսկ (Մախաչ-Կալա): Մեր կարծիքով դա հետևանք էր այն բանի, որ Կարա-Մուրգան իսկական դեմոկրատ էր և չէր կարող չողովնել ամեն մի քայլ, որն ուղղված էր ժողովրդի զրությունը բարեւալու և նրա կյանքի դարնությունները վերացնելու ազնիվ նպատակների իրագործման համար:

Ամփոփենք:

Կարա-Մուրգան մեր իրականության մեջ XIX դարի վերջին քառորդի ամենախոշոր երաժշտական դիմքն է և առանց նրա կատարած լուրջ նսխապատրաստական աշխատանքի անհնարին կլիներ պատկերացնել Կոմիտասի նման խորագույն արվեստագետի հանդես գալը: Նա հանդիսացել է չափանց անհրաժեշտ մի էտակ մեր երաժշտական գրավոր կուլտուրայի և կատարողական արվեստի զարգացման ճանապարհին: Նրանով է սկսվում հայկական երաժշտական կուլտուրայի նոր շրջանը:

Ճիշտ է, նա շատ բաներում թերացել է, սկսածը չի հասցրել վախճանին, հաճախակի խուսափել է գրելուց, զգացով երաժշտական արտահայտչական միջոցների պակասը, սակայն դա ամենափափառ չի կարող նսեմացնել այն հսկայական գործը, որ նա կատարել է մեր երաժշտական արվեստի զարգացման և ժողովրդականացման ուղղությամբ:

Նրա մատուցած ծառայությունը մեր երաժշտական կուլտուրան կանոնավոր հիմքերի վրա դնելու գործում հանդում է հետևյալն:

1) Նա տվել է քառաձայն երգի առաջին համերգը հայերեն լեզվով և իր գործունեությամբ հասել է այն բանին, որ քառաձայն երգը դարձել է անհրաժեշտություն հայ ունկընդիր հասարակության համար:

2) Կատարել է մեծ կուլտուր-լուսավորական աշխատանք իր երգեցիկ խմբերը կազմելով աշխատավորներից, իր համերգները տալով հայերեն լեզվով, բհմ հանելով ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց:

3) Հավաքել մշակել և քառաձայնել է բազմաթիվ ժողովրդական երգեր, և պրոպագանդա անելով ժողովրդի մեջ, ժողովրդի ստեղծագործությունը նոր որակով վերադրել է ժողովրդին:

4) Որպես երգեցիկ խմբեր կազմակերպող և մասսայական համերգային գործունեություն ցուցաբերող պրոպագանդիստ՝ տվել է եղակի օրինակ մեր երաժշտության պատմության մեջ: Ոչ նրանից առաջ ոչ էլ նրանից հետո դեռ ոչ մի երաժիշտ-խմբավար չի կազմակերպել այնքան երգեցիկ խմբեր, որքան կազմակերպել է նա: Բնդ որում նա միացրել է երգն ու պարը, օգտագործել է ազգային տարագրքերը և դարձնելով և մեր տաղնի աշխատավոր ժողովրդական ժողովրդին ու պարի անսամբլի նախատիպարը:

5) Նկատել և առաջ է քաշել շնորհալի արտիստական ուժեր, օժանդակել է նրանց բարձրագույն երաժշտական կրթություն ձեռք բերելու համար, և, Կարա-Մուրգայի շնորհիվ, նրանցից մի քանիսը հոշակ են վայելել ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանում ու Եվրոպայում:

6) Պատրաստել է խմբավարներ երգեցիկ քառաձայն խմբեր կազմակերպելու, ղեկավարելու և խմբական երգետարածելու համար:

7) Բեմադրել է առաջին թարգմանական օպերան հայերեն լեզվով, թեև ոչ լրիվ («Ֆառւստ»— 1890 թ.), փորձել է գրել ու բեմադրել հայկական ինքնուրույն օպերաներ («Ծուշաշան» 1-ին գործողությունը, «Արշակ 2-րդ» առաջին գործողություն), Փույթ չէ, որ նա լրիվ կերպով չի հասել այդ նըղատակին:

8) Նա իր ոեցինպիաներով և երաժշտագիտական հոգվածներով խոշոր աշխատանք է կատարել հայ հասարակությանը եվրոպական և ոռուսական օպերային գրականության հետ ծանոթացնելու համար:

9) Իր երաժշտական-հասարակական գործունեությամբ

Հայաստել է հայերի ինքնագիտակցության զարգացմանը և
ինքնաճանաշմանը, միաժամանակ ձգտելով ամրապնդել ին-
տերնացիոնալ կապերը հարեան ժողովուրդների հետ:

10) Իր օրինակով, իր անսահման էնտուզիազմով, իր
նվիրվածությամբ ու անշահախնդրությամբ վարակել է շահ
շատերին՝ հայկական կուլտուրայի և հատկապես երաժշտա-
կան կուլտուրայի զարգացմանը նվիրվելու համար:

Այս այս բոլորը միասին վերցրած մեղ տալիս են լրիվ
գաղափար Կարա-Մուրզայի մասին և այս բոլորը միասին
պետք է նկատի ունենալ Կարա-Մուրզայի կատարած խոշոր
երաժշտական-հասարակական գործը Ցիշտ կերպով արժե-
քավորելու համար:

Կարա-Մուրզայի թողած երաժշտական ժառանգությունը,
հատկապես նրա մշակած ժողովրդական երգերը, ինքնու-
րույն երգերի մի մասը և «Շուշան» օպերայի նախերգանքն
ու առաջին գործողությունը մտնում են մեր երաժշտական
կուլտուրայի գանձարանը, որպես արժեքավոր գործեր և ան-
պայմանորեն պետք է օգտագործվեն մեր աշխատավորու-
թյան գեղարվեստական դաստիարակության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԱՐԴԻ ԿՈՇԻԿՅԱՆ

Չափավոր-միջակ

Մշակված 1895թ.

Վարդի կո - չի - կըս, վարդի կո - չի - կըս,

վարդի կո - չի - կըս, վարդի կո - չի - կըս,

Վարդի միջակ

վարդի կո - չի - կըս, վարդի մո - չի - կըս:

վարդի կո - չի - կըս, վարդի մո - չի - կըս:

ՀՈՅ ՆԱԶԱԽԱԾՄ

Մշակված 1859թ.

ՉԱՓԱԿՈՐ

ՉԱՓԱԿՈՐ

Մշակված 1859թ.

ՉԱՓԱԿՈՐ

Յար զնու, բոլ բա - բոլ ե - լոր,

սիմ աս - պա - սիմ, Յար զնու, բոլ բա - բոլ ե - լոր,

սիմ աս - պա - սիմ.

ՌԴՀԻ ԱՆՆԱԿ

Սկզբան մնակ

Զիր սան մէ - զր բաշ - լող սր - դա. կարմիր խնու - ձոր բաշ - լող սր - դա. վարդ կռ - շի - կրտ զրտ - լող սր - դա. սր - դա դր - կռ. վարդ կռ - շի - կրտ :

Տղան մնակ զիր սան մէ - զր բալ նել չեմ ես, կարմիր խնու - ձոր բաշ - ինջ չեմ ես, վարդ կռ - շի - կրտ զր - սել չեմ ես, իմ մն - սրա չե վարդ կռ - շի - կրտ :

Կառ-ւազ սա - թէ - ռով և - կար, կար-միլ առ - թէ -
կառ-ւազ սա - թէ - ռով և - կար, կար-միլ առ - թէ -
պով և - կար, կար-միլ առ - թէ - պով և - կար,
պով և - կար, կար-միլ առ - թէ - պով և - կար,
պով և - կար, կար-միլ առ - թէ - պով և - կար,
պով և - կար, պով և - կար,

ՀԵՅ ԲԵԿ.

„Շոշան” օպերայի Յախերդամի ֆինալը
(Fugato)

(Fugato)

Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման:
 Դժոխք կեր-թանք քեզ հա-մար սոր մեզ միայն դու հրա-ման...

ԷԼԻ ՔԱՂՅՈՒԿ ՕՐԵՐ ԳԱՐԵԱՆ

Խմբերգ „Ծուշան օպերայից

Moderato.

Sopr. Alt.

է - լի քաղց - րիկ օ - րեր գար սան
 ծի - ծաղ դեմ - րով ե - կան հա - սան, մեր աշ - խար - իի
 հանդ, ան - դաս - սնն կա - նաչ կար - միր շո - րեր հա - գան:
 շնն շս - սիր մեզ մնս
 coro
 վար - դի հիս մն - րանը
 թու - պու - լիկ վախ - կոս: Այս:
 ձար - պու ան կոս - րանը

ՀԱՆԴԱՐՏԻՐ ՔՈՒՅԹԻԿ

Խմբերգ „Ծուշան“ օպերայի գործողությունից՝

Alegretto.

ԱՍՏՂԱ ՑՈՎԱՅ ԳԵՎԱՅ

կանոն

ՀՐԴԱՅ

2mp ph-ph, gnis u-ph, 2mp ph-ph, gnis u-ph
m - shi կող-միս, siu - ubph, siu - ubph
sh - ubph ինչ սաս-փե է, sh - ubph իրա - կը, sh - ubph
ինչ սաս փե է, կըս - — կը:

Moderato. Կանոն խոմը
Uu-ph = ybph, puhi-ph = ybph, u2-իս = sh-ybph, sh վա-յubph

qn - սն : զիր-շին, qn - սն զիր-շին, այս փոր-ձաւ - քից
այս փոր - ձաւ - քից, ս - զա - սհ - յիր, ս - զա - սհ - յիր
զիւ - զա - յի - ին, զիւ - զա - յի - ին, զիւ - — զա
— յի - ին : Տղամարդկանց իսութը էլ թո - յիր, բն - յիր
Moderato.
էլ բն - յիր, էլ, էլ բն - յիր, էլ բն - յիր, բն - յիր
ս - սն մի բան, մի կողմ բն բան, սհ - սիր վըլ - վըլ

A musical score page featuring two staves. The top staff is for the voice and piano, with lyrics in Russian: "ish - eh - uh - luh-puh", "luh-puh - eh - eh - uh-puh", "luh-puh - eh - ph - uh-puh", and "luh-puh - eh - ph - uh-puh". The bottom staff is for the piano, with dynamics "p" and "pp" and a tempo marking "8". The piano part includes a section labeled "Bassi" and "luh-puh - eh - ph - uh-puh". The score is in common time, with various key changes indicated by sharps and flats.

ԿԱՐՍ-ՄՈՒՐԶՈՅԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԵՐԱԾՏԱԿԱՆ-ՀԱՅԱՀԱՅ

- 1853 թ. փետրվարի 18— Սնկել է Քրիստուակոր Կարա-Մուրզան Ղրիմի Ղարասու-Բաղար քաղաքում:

1861 թ.— Սկսում է սովորել ծխական դպրոցում և դաշնամուրի նվագի մասնավոր դասեր վերցնել:

1867 թ.— Ավարտում է ծխական դպրոցը:

1867 թ.— 1871 թ.— Սովորում է Պերսեպանի մոտ՝ ընդհանուր կրթական առարկաներից և Ստեփան Մուրզայանի մոտ՝ դաշնամուրի նվագ ու երաժշտության տեսություն:

1882 թ. սեպտեմբերի 18— Մեկնում է Անդրկովկաս:

1882—1883 թ. թ.— Թիֆլիսում տպագրվում է Կարա-Մուրզայի «Պոպուրի Հայկական երգերից դաշնամուրի համար»:

1885 թ. մարտի 15— Հայկական բառաձայն երգի առաջին համերգը Թիֆլիսում, Արծրունու թատրոնի դաշինում, Կարա-Մուրզայի ղեկավարությամբ:

1885 թ. նոյեմբերի 23— Կարա-Մուրզայի խմբական երգի առաջին համերգը Բաքվում:

1887 թ.— Ուղևորություն գիպի արտասահման: Հանդիպումներ երիմյանի, Չուխաչյանի, Փատկանյանի և ուրիշների հետ:

1887 թ.— Կարա-Մուրզայի առաջին երկու երգեցիկ խմբի կազմակերպումը Ղարասու-Բաղարում:

1889 թ.— Կարա-Մուրզայի ամուսնությունը Եվա Ֆրանցինա Մահսկայայի հետ:

1890 թ. աշուն— Գոմնոյի «Ֆառուտ» օպերայի հայերեն թարգմանության առաջին բեմադրությունը Բաքվում Կարա-Մուրզայի ղեկավարությամբ:

1890—1891 թ. թ.— Աշխատում է «Շուշան» օպերայի վրա:

1891 թ. աշուն— «Շուշան» օպերայի նախերգանքը («Հեյ բեղ») առաջին համերգային կատարումը Բաքվում:

1891—1892 թ. թ.— Համերգային շրջադաշտությունները:

1892 թ. Հոկտեմբեր—Հրավիրվում է Էջմիածին Գևորգյան ճեմարան՝
որպես երաժշտության դաստու:

1893 թ. ամառ—Համերգային շրջագայություններ՝ Երևան, Ալեքսան-
դրապոլ (Լենինական), և Իգդիր քաղաքներում:

1893 թ. նոյեմբեր—Հեռացվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երա-
ժշտության դաստուի պաշտոնից:

1894—1899 թ. թ. Երգեցիկ խմբեր է կազմակերպում Անդրկովկասի,
Հյուսիսային Կովկասի, Ղրիմի և այլ քաղաքներում:

1895 թ. մարտի 25—Համերգային գործունեության 10-ամյակի նշումը
Բարվում:

1899 թ. գարուն—Զերբարկվում և բանտարկվում է Մոսկվայում և ա-
պա արորդում Պետրովսկ (Մախաչ-Կալա):

1899 թ. Կ. Մ. իր խմբով կատարում է Եկմալլանի պատարագը և ար-
ժանանում Հեղինակի հավանությանը:

1901 թ. աշուն—Իր երգեցիկ խմբով մասնակցում է Կովկասյան ցուցա-
հանդեսին:

1902 թ. ապրիլի 9—Կարա-Մուրզան վախճանվում է և թաղվում Թիֆլի-
սի Կուկիալի կաթոլիկների գերեզմանատանը:

Յ Ա Ն Կ
Ս.Յ. ՔԱՂԱՔՆԵՐԻ, ՈՒՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԵՐ է
Ա.Յ.Մ.Ա.ԿԵՐՊԵԼ 1885—1902 թ. թ. ԸՆԹԱՅՔՈՒՄ.

(Այլբենական կարգով)

1. Աբասթուման
2. Ալեքսանդրապոլ (Լենինական)
3. Ախալբալտիք
4. Ախալցխա
5. Ակկերման
6. Աստրախան
7. Արդարձան
8. Արդիին
9. Արմավիր
10. Արմյանսկ
11. Արդանուշ
12. Բաքու
13. Բաթում
14. Բոբովով
15. Գորի
16. Գրիգորիովպուր (Գանձակ,
Կիրովաբադ)
17. Ելիզավետպուր (Գանձակ,
Կիրովաբադ)
18. Եկատերինոդար (Կրասն
դար)
19. Ելազարորիս
20. Երևան
21. Զարաթալա
22. Էջմիածին
23. Թելավ
24. Թիոգոսիա
25. Թիֆլիս
26. Իգդիր
27. Կաղզկան
28. Կերչ
29. Հին Ղրիմ
30. Ղարաբաղլիսա (Կիրովական)
31. Ղարս
32. Ղարասու-Բաղար
33. Ղզլար
34. Մելիտոպոլ
35. Մոսկվա
36. Նախիջևան Դ/Վ
37. Նովի
38. Շամախի
39. Շուշի
40. Պետրովսկ (Մախաչ-Կալա)
41. Սարիղամիք
42. Սիմֆերոպոլ
43. Սղնախ
44. Ստավրոպոլ-Կովկասի
45. Ստավրոպոլ-Ղրիմի
46. Վաղարշապատ
47. Վլադիկավկազ (Զառչիկառ)
48. Քեչենել
49. Քութաիսի
50. Օդիս

ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱՅԻ ԽՆՔՆՈՒԹՈՒՅՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ. ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

Համար	Խոսքերի հեղինակը	Ստեղծագործության անունը	Տարբեր թվական
1	—	Ա. ԽԵԺՈՒՐՈՎՆ	
2	Ա. ԳԱԼԻՔԻՄՅԱՆ	«Պողոսի հայկական երգերից դաշ-	1882
		նամուրի համար» (Օր, 11)	1883
3	Կ. ԿԱՐՄԱ-ՄՈՒՐՋԱ	երաժշտություն «Արշակ Բ.» զրա-	1883
4	»	մայի համար (I դորձ. օպերա,	1885
5	»	ընդամենը 33 կտոր, (նվազախմբի,	1885
6	»	երգեցիկ խմբի և մեներգի համար)	1885
7	Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ	«Հովհաննելի»	1885
8	—	«Գաղթականներ»	1885
9	Հ. ԶՈՒԿԱՍՅԱՆ	«Օ սօձատել!» (աղոթք, ոռուելին)	1886
10	ԿԱՐՄԱ-ՄՈՒՐՋԱ	«Մաղթանք յաղատություն 17 հոկ-	1886
11	Ա. ՄՈՐԱԿԻՆ	տերթեր» (խմբերգ)	1888
12	ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ	«Դամբանական Ռաֆֆու հիշատակին»	1888
13	Գ. ԲԱՐԽՈՎՈՂԱՐ-	«Որ գտնեցեր» (խմբերգ)	1889
14	»	«Մինչ աստ ծաղի» (զամբանական	1890
15	»	դենարիսս Դորգանյանի հիշատակին)	1890
16	»	«Շուշան» — օպերա (I դորձ.) . .	1890
17	»	ա) «Հիմ բեզ—նախերգանք	1891
		բ) «Եկի քաղցրիկ օրեր» — խմբերգ	
		I դորձ	
		դ) «Հանդարտիկ, քույրիկ»	
		դ) «Հնչիր»	
18	»	«Զակուսկին, ճաշը, իրիկնահացը»	
19	(Ա. Է. Ք. Ք. Մոցիքուլյաթին» կոմեդ.)	1891	
20	»	«Աստղեր» («Հայրիկ, ախ, ինչ գեղե-	1892
21	»	ցիկ ե»)	1892
22	»	«Ազատն աստված այն օրիդ» . . .	1892
		«Աստղը ցոլաց, գնաց» (կանոն) . .	1892
23	»	«Ինչ անենք» (խմբերգ)	1892

Համար	Խոսքերի հեղինակը	Ստեղծագործության անունը	Տարբեր թվական
18	Դ. Աղայան	«Առ Խրիմյան հայրիկ» («Թող բարձ- րացնեն ճոփնչ աղաղակ»)	1892
19	—	«Դամբանական» Գրիգոր Արծրունու- մահվան ասթիվ» (գաշնամուրի հա- մար)	1892
20	—	Նույնը ջութակի, թալջութակի և գաշնամուրի համար (արին)	1892
21	Մ. Պալլան	«Բարյակ որ զայ» (Խրիմյանի գալսոյան ասթիվ»)	1893
22	Ս. Շահաղիկ	«Ազնիվ ընկեր» («Բարյակ որ զայ»-ի շահաղիկ)	1894
23	—	«Դամբանական» Պետրոս Ագամյանի հիշատակին» (գաշնամուրի համար)	1891
		Բ. Մօակումներ	
1	Միսկին-Բուրջի	«Բոյըդ բարձր»	1891
2	Թարգմ. Քրանս.	«Անփույթ նավաստիք»	1891
3	Ժողովրդական	«Բերգիցը գուրս ելա»	1891
4	»	«Հուրիկ»	1892
5	Մ. Նալբանդյան	«Իտայացի աղջկա երգը»	1885
6	»	«Ցուրտը փէցը»	1886
7	Զիկանի	«Պաղ աղբյուրի մոտ»	1892
8	Ժողովրդական	«Կոռունկ»	1892
9	»	«Կոնա վոչի» (քրիկերին)	1892
10	»	«Մուկուշ աղբեր»	1892
11	»	«Զին վիճն»	1893
12	»	«Հինչ աղնչ»	1893
13	»	«Գացեք, տեսեք, ով է կերել զէծ» .	1893
14	»	«Աղջիկ գու սիրուն»	1893
15	»	«Սիրունիս, քեզ համար»	1893
16	»	«Համեսս աղջիկ»	1893
17	»	«Ալադյան, քեզի մեռնեմ»	1894
18	»	«Հարրրամն»	1894
19	»	«Զան գուլում»	1894
20	»	«Վարդ կոշիկ»	1895
21	»	«Եկող լի լի»	1899
22	»	«Հոյ, նազան իմ»	1899

Հ.	Թասքերի հեղինակը	Ստեղծագործության անունը	Տարբերակ	Ծանոթ թություն
		Գ. Մուսական, ուկրաինական, վրացական և այլն		
23	Ժողովրդական	«Օй, յ զոլի վիշնյա» (Կուբանի կազակների երգը)		
24		«Զասվիստալի կազաչենկի»		
25		«Գին-գալլա» (մոլդավական)		
26		«Կалина» (ռուսական)		
27		«Գողոնադա-գողոնա» (վրացական)		
28		«Օй, չումաչ» (ուկրաինական)		
29		«Կօսար» (ուկրաինական)		
30		«Վօզլե րեչկի, վօզլե մօստու» (ռուսական)	Մշտական անձնագիր	
31		«Ախ տի վոլյա, մօյ վոլյա» (ռուս.) . .	1885	
32		«Վնիզ յօ մատուշկէ, յօ Վոլգէ» . .	1892	
33	Տարբեր հեղինակների	Ազգային և հոգեվոր երգեր . . .		

Ա. Ե. Վ. Ա. Յ. Յ. Յ. Կ.

Ա.

Արեւադրան Հ. — 67-68

Ազամյան Պ. — 33, 107

Ալիշան Ղ. — 34, 91

Ազայան Ղ. — 56

Ամբրուժյան — 45, 85

Ամիրջանյան Բ. — 84

Այվազովսկի Հ. — 10

Ատրուես Ա. — 38, 39, 43, 45

Արծրունի Գ. Բ. — 25, 26, 27

Բ.

Բաշինջաղյան Գ. — 8, 31, 93

Բաղդասարյան Ե. — 92

Բեթհովեն Լ. — 90

Բելինի Վ. — 90

Բիանկինի — 34

Բոբինենկո — 108

Բորոդին Ա. Լ. — 103

Բողոքի — 108

Գ.

Գալֆայան Խ. — 26, 68, 69

Գևնջյան Ա. — 43

Գերցեն Ա. — 13

Գլինիկա Ա. — 90, 103, 104

Գունդ Շ. — 43, 90

Դ.

Դեմուրյան Ա. Մ. — 77, 92

Դոբրոլուսով Ն. — 13

Ե.

Եկմալյան Մ. — 8, 74, 90, 100

Երանյան Գ. — 90

Զ.

Քաշչյան Ն. — 90

Ի. իուլիուսի ամառ՝ իշխանություն՝ Մ.՝ 40

Լ. լողիք՝ 106

Խ.

Խանքեկյան Կ.՝ 10, 14, 16
Խրիմյան Մ.՝ 37, 55, 56, 56- 57, 64, 65

Ծ.

Ծովակ՝ 40, 41, 43, 84

Լ.

Կարապետյան Հ.՝ 5, 9, 29
Կարա-Մուրզա Մկրտչել- 10, 13, 39, 40, 50, 53
Կարա-Մուրզա Հովսեփ- 61
Կարա-Մուրզա Պողոս- 5, 51, 85, 92, 93, 121
Կարա-Մուրզա Գետրոս- 5, 58, 65, 92, 120, 121, 122
Կարա-Մուրզա Մակար- 10, 13, 14, 15, 16
Կնինս- 83
Կոմիտաս Մ.՝ 8, 58, 59, 89, 92, 94, 111, 124
Կուշնաբյան Ք. Մ.՝ 93, 120

Հ.

Հակոբյան Հ.՝ 85
Հենդել Գ.՝ 113

Ղ.

Ղորդանյան Գ.՝ 8

Մ.

Մանուկյան Ա.՝ 77, 92, 101
Մայիլյան Ա.՝ 93
Մահմայա Եվա- 38, 80
Մելիքյան Ռ.՝ 83, 92
Մելիքյան Սպ.- 92
Միթթարյաներ- 15, 34, 46
Մուրացան- 8
Մուրզայան Մտ.- 15
Մուսոբէսկի Մ.՝ 105

Նալբանդյան Հովհաննես- 10
Նալբանդյան Մ.՝ 7, 43, 99
Նոսկրավնիկ Լու.՝ 104

Շ.

Շահագիզ Ամբաթ- 65
Շալամյան Մ.՝ 27
Շահլամյան Ն.՝ 32, 48, 84
Շալյապին Ֆ.՝ 107
Շիրվանզադե Ալ.՝ 8
Շոսկեն Ֆրեդ.- 90
Շուբերտ Ֆրանց- 90

Զ.

Զայկովսկի Պ.՝ 90, 103, 104
Զերնիկովսկի Պ.՝ 10
Զուխանյան Տ.՝ 8, 34, 37, 48, 90

Գ.

Գալայան Ն.՝ 107, 108
Գատկանյան Ռ.
(Գաման Բաթիպա)՝ 7-8, 27, 29, 38, 43, 49, 99, 116
Գևիկիմաշլյան Մ.՝ 29, 99
Գերսիլյան Եղիսաբեթ- 13, 14
Գուշիքն Ա.՝ Մ.՝ 103, 104

Ջ.

Ջիվանի- 91

Ո.

Ումֆիկ (Մելիք Հակոբյան Հակոբ)՝ 8, 27, 29, 99
Ումբոկի-Կորսակով Ն.՝ 103

Ս.

Սեղբակյան Ա.՝ 50, 52, 60, 66-76
Սլավյանսկի Գմ.- 114-115
Սոլենդիանով Ա.՝ 8, 10
Ստալին Ի., Վ.- 28
Սուրենյան Վ.- 8

Վարդիկյան Մ. — 32, 4, 84
Վերդի Զ. — 73, 90, 112

8.

Տերյան-Կորդանյան — 108
Տիգրանյան Նիկ. — 8
Տնտեսյան Ե. — 90

9.

Քաղցմածյան Ա. — 90

ՑԱՆԿ ԼՈՒԾԱՆԿԱՐՆԵՐԻ

էջ

3

1. Քրիստովոր Կարա-Մուղու (1894 թ. Շուշի)
2. Կարա-Մուղու լուսանկարը (նկարված է Ղարաբաղ-Բաղաբում 1870 թ.)
3. Կարա-Մուղուն երիտասարդ Հասակում (նկ. 1880—81 թ. թ. Ղարաբաղ-Բաղաբուալ)
4. Կարա-Մուղուն Բաքվում (նկ. 1886 թ.)
5. Ք. Կարա-Մուղու 1890 թ. շարժական խումբը
6. Ք. Կարա-Մուղու հրդեցիկ խումբը 1901 թ. Կովկասյան ցուցահանդեսում
7. Կարա-Մուղուն իր կնոջ և երեխանեցի Հետ (նկ. 1895 թ. Բաքվում)
8. Կարա-Մուղու ձևագիրը «Արի, սիրահար» (Հատված «Շուշն» օպերայի առաջին գործողությունից)

11

21

35

41

75

81

97



ԲՈՎՈՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
<i>Երկու խոսք</i>	5
1. Ժամանակաշրջանը	7
2. Մանկությունը և պատանեկությունը	9
3. Կարա-Մուրզան Կոմիտասուն Խմբական մըդի առաջին համերգը	24
4. Կարա-Մուրզայի գործունեությունը Բարվում	31
5. Կարա-Մուրզայի Համերգային շրջադաշությունները	44
6. Կարա-Մուրզայի գործունեությունը էջմիածնում	52
7. Երաժշտական-հասարակական աշխատանքի վերջին շրջանը	66
8. Կարա-Մուրզայի երաժշտական-հասարակական գործունեության բովանդակությունն ու արժեքը	83
9. Կարա-Մուրզայի ստեղծագործական գեմքը	93
10. Կարա-Մուրզայի գեղագիտական և քաղաքական հայացքներն ըստ հեղինակի ասույթների	102
ՀԱՎԵԼՎԱԾ	127
Խոտային համբելված Կարա-Մուրզայի ստեղծագործություններից	129
Կարա-Մուրզայի կյանքի և երաժշտ.-հաս. գործունեության կարելվորագույն առարկերը	141
Տանկ այն քաղաքների, ուր Կարա-Մուրզան երգեցիկ խմբեր է կողմանքարգել 1885—1902 թ. թ. ընթացքում	143
Կարա-Մուրզայի ինքնուրույն ստեղծագործությունները և մշակումները	144
Անվանացանկ	147
Ցանկ՝ լուսանկարների	151

Պատ. խմբագիր՝ Մ. Ա. Գ. Ա. Յ. Ն.
Տեխն. խմբագիր՝ Հ. Կ. Բ. Ա. Պ. Ե. Տ. Ա. Յ. Ա. Յ.
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Բ. Բ. Ա. Յ. Ա. Յ.

Վ. 01884

Պատվեր № 850

Տիրագ 1000

Հանձնված է արտադրության 4/XI 1949 թ.,
Մասնագիտական և տպագրության 24/I 1950 թ.,
Տպագրական 9½, մամուլ:

Հայոց Առաջնորդության վարչության № 2 տպարան, Կոմիտանցի փող, № 8
Երևան, 1950

Հայաստանի Ազգային գրադարան



NL0444560

S P R E A D S 50

Tangos